

ԵՐԵՎԱՆ

ԳԵՂԵՍԻԱՆԻ

ԿԵՆՏՐԱԿ

Տ. ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶԱԿ

ՉԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Հ Ս Խ Հ

04 DEC 20

ՀԵՌԱԿԱ

**ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ
ՏԵԽՆԻԿՈՒՄ**

**ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ
ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ**

ԶԵՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԲՈՎ

Կազմեց՝ Տ. ՇԱՀԲԱԶՅԱՆ
Խմբագրեց՝ Ա. ՂԱՐԻԲՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ

1986

Ա Ռ Ա Չ Ա Բ Ա Ն

Յերբ ձեռնարկվեց այս աշխատանքը, հրապարակի վրա չըկար շարահյուսութեան մի ձեռնարկ, վոր մեթոդողութեան ու մեթոդական կողմերով բավարարեր ներկա պահանջները:

Այս խնդիրը վերին աստիճանի դժվարացրեց ու բարդացրեց մեր գործը և դրա հետևանքով ել համոզված ենք, վոր այս աշխատութեանը կունենա խոշոր բացեր, մանավանդ վոր կազմված ե հայոց լեզվի սոսկ մի դասատուի կողմից:

Աշխատութեանս տրված ե առաջադրութեանների բնույթ, վորովհետև կազմված ե հեռակալողների համար և ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ Ե ՁԵՌԱԳՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, հույս ունենալով, վոր կլսենք ընկերների քննադատական խոսքը, հարկ լեղած ուղղութիւններ ու լրացութիւններ կատարելու համար:

Առաջադրութեանը կազմելիս խուսափել ենք նոր տերմիններից, յեղնելով այն սկզբունքից, վոր նոր տերմինները, մասնավորապէս քերականութեան մեջ, դրական վոչինչ չեն տա, այլ ընդհակառակը, խարխլում են այդ գիտութեան կայունութեանը, վորովհետև ամեն մի նորաբանութեանը պետք ե քաղաքացիական իրավունք ստանա տերմին դառնալու համար:

Խնդիրը վոչ թե տերմիններին ե վերաբերում, այլ ուղղութեանը և այդ տերմիններին տրված բովանդակութեանը:

Յերբ ասում ենք՝ «արեւ ծագեց», այսոր վոչ վոք չի հասկանում, վոր յերկիրն անշարժ ե:

Յեա աշխատել եմ վերացնել նաեւ խոսքի մասերի նշանակութեան և նրանց կատարած ֆունկցիաների միջև յեղած անորոշութեանը:

Վորպէս հիմք վերցված ե խոսքի մասերի նշանակութեանը: Ֆունկցիան չի կարող կայուն լինել, վորովհետև միեւնույն բառը նախադասութեան մեջ կարող ե բազմաթիւ ֆունկցիաներ կատարել: Այդպէս վարվելով իմ կաբժիքով քերականութեանն ավելի ոչալ գիտութեան ե դառնում և ավելի մատչելի մեր ուսանողների համար:

Յեթե տարիներ շարունակ քերականութեան ես սովորում



11-613539/

և վերջն ել դուրս են գալիս առանց քերականութիւն գիտենալու. իմ կարծիքով մեղքը միայն սովորողինը չէ այլ այն սխառմիսնը, վորը մինչև հիմա հիմք է ծառայել մեր քերականութիւններին համար:

Ինչ վերաբերում է չենթակայի և ստորոգյալի փոխհարաբերութեանը պիտի ասել, վոր նախադասութեան այս գլխավոր անդամների կատարած ֆունկցիաների բացատրութեան խնդիրը՝ մեթոդոլոգիական ամենալուրջ խնդիրներէց մեկն է քերականութեան մեջ, վորովհետեւ սա այն հիմնական խնդիրն է, վորից մարդիկ կարող են հանգել՝ կամ մատերիալիստական—գիտելատիկական և կամ իդեալիստական—սխոլաստիկական դրուշթներին, ու լեզվաբանութեան:

Մեր մինչև այժմ չեղած քերականութիւններում «խոսք կամ նախադասութիւն կազմող բառերը» համարել են միմիայն բա՜յերը:

«Սոսքը—ասում են նրանք—կազմում են միմիայն բայերը»: «Ամեն բայ, մենակ մի խոսք է կազմում»:

«Սոսքի եյութիւնը ստորոգումն է»: Այսինքն՝ «վոչ ինքնուրույն հատկանշի վերագրումն մի առարկայի, մի բանի»: «Ստորոգումն արտահայտում է միայն առանձին տեսակի բառերով, վորոնք կոչվում են բայ»:

Ուրեմն ըստ ֆորմալիստների, բայ կոչվում են այն բառերը, վորոնք «վոչ ինքնուրույն» ատրիբուտներ են բաշխում առարկաներին կամ այդ առարկան ներկայացնող գաղափարներին և մենակ «խոսք են կազմում», վորովհետեւ՝ «բայն ինքը մենակ ունի խոսքի բոլոր հատկանիշները, այսինքն ունի՝ 1. առարկայի գաղափար, 2. հատկանիշի գաղափար և 3. ստորոգման գաղափար:

Ինչպես չեմքվում է՝ մի ուրույն տեսակի յերրորդութիւն է այդ, սկզբից տեղած, ինչ վոր սոսկ գործողութիւն:

Լեզվագիտութեան մեջ սա իսկական իդեալիստական, սխոլաստիկական ըմբռնողութիւն է:

Մարքսիզմը մեզ սովորեցնում է, վոր լեզուն մտածողութեան արտահայտութիւնն է, դասակարգային պայքարի զենք, իդեոլոգիական վերնաշէնը: Գիտենք նաև վոր մեր մտածողութիւնը մեզանից անկախ գոյութիւն ունեցող արտաքին աշխարհի արտացոլումն, արտապատկերումն, արտանկարումն է մեր իմացութեան որպէս՝ ուղեղում:

ԼԵՆԻՆԵՆ ասում է. «Զգայութիւնը, ընկալութիւնը, մըտապատկերը և առաստարակ մարդու գիտակցութիւնն ընդունվում է վորպէս պատկեր որչեկտիվ ռեալականութեան: Աշխարհը մեր գիտակցութեան կողմից արտացոլվող այդ որչեկտիվ ռեալականութեան շարժումն է: Մտապատկերների, ընկալութիւնների և այլնի շարժմանը համապատասխանում է մատերիալի շարժումն ինձանից դուրս»¹:

Ուրեմն պարզ է, վոր լեզուն, վորպէս մեր մտածողութեան արտահայտութիւն, ռեալ իրականութեան արտահայտութիւն է, և լեզվի գործունեութեան ու շարժման որենքները համընկնում են ինչպէս մեր մտածողութեան, նույնպէս և ռեալ իրականութեան շարժման ու զարգացման որենքներին: Հետեւաբար՝ բայերը վոչ թէ, ինչ վոր անկախ գոյութիւն ունեցող գործողութիւններ են, ատրիբուտներ բաշխող, այլ մեր ուղեղում պատճենավորված ռեալ նյութի գործունեութիւնը, նրա շարժումն ու վիճակի փոփոխութիւններն արտահայտող բառերն են:

Նախադասութեան մեջ նյութի գործողութիւնն ցույց տվող բառը կոչվում է ստորոգյալ, իսկ ինքը նյութը արտահայտող բառը կոչվում է չենթակա:

Լեզվի մեջ չենթական ու ստորոգյալն այն հարաբերութեան մեջ են, ինչպէս մեր իմացութիւնից դուրս անկախ գոյութիւն ունեցող նյութն ու շարժումը: Նրանք նույնը չեն, բայց միասնական են հակադրութեան մեջ: Առանց չենթակայի չի կարող լինել ստորոգյալ, վորովհետեւ ստորոգյալը չենթակայի գործողութիւնն է, իսկ առանց ստորոգյալի չի կարող լինել յենթակա, վորովհետեւ՝ չեթէ կա գործողութիւն, պետք է լինի և նրա կատարողը: Զի կարող լինել գործողութիւնն առանց կատարողի: Սրանց անջատումը քերականութեան մեջ կլինի այնպիսի սխալ, ինչպէս նյութի ու շարժման անջատումը փիլիսոփայութեան մեջ:

ԼԵՆԻՆԵՆ ասում է՝ «Մատերիան, վորպէս «յենթակա» «բնութիւնից» մտքով վտարելը նշանակում է ՄԻՏՔԸ, վորպէս չենթակա (այսինքն վորպէս պրիմատ, չեւեկետային, մատերիալից անկախ ինչ վոր բան) լուրջան ընդունել ֆԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ մեջ: Յենթական չէ, վոր վտարվում է, այլ զգայութեան որչեկտիվ աղբյուրը, և «չենթական» դառնում է ԶԳԱՅՈՒԹՅՈՒՆԸ, այսինքն փիլիսոփայութիւնը դառնում է՝ Բերկլիական, ինչպէս

¹ Հատ. XIII եջ 309 հայ. հրատ.

եւ հետո վերադիտարկելու լինեն զգալութիւն բառը: Տեսնում ենք յենթական նախադասութիւնից վտարելով, կամ «բային» լրացում դարձնելով, մեթոդողողական խոշոր սխալ են թուել տալիս ֆորմալիստները:

Եւ չենք խոսում հոլովների և դասավորման աստիճանականութեան մասին, վորովհետեւ գրքում արդեն պարզ կերպով գրված են:

Կ Ա Ջ Մ Ո Ղ

ՀԵՌԱԿԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆԻԿՈՒՄ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՇԱՐՍՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՏԱՆԴՐՈՒԹՅՈՒՆ № 1

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԸ

1. Քերականությունը և նրա ստորաբաժանումները.
2. Լեզու յեզվ մտածողություն.
3. Խոսք, նախադասություն, բառ.
4. Բառերի կլասիֆիկացիան ըստ նախադասության մեջ կատարած ժուկնկցիաների.
5. Նախադասություններն ու նրա հիմնական հատկանիշները.
6. Նախադասության տեսակներն ըստ կազմության.
7. Պարզ նախադասության կազմությունը.
8. Նախադասության գլխավոր տեղումները (յենթակա յեզվ ստորոգյալ, նրանց միասնությունը).
9. Յենթակայի ու ստորոգյալի համաձայնությունը.
10. Ընթերցանություն.
11. Հրահանգներ ու վարժություններ.
12. Կոնսոլ աշխատանք.

1. Քերականությունը և նրա ստորաբաժանումները

1. Քերականությունը լիզվի որինքների գիտությունն է և բաժանվում է յերեք մասի. 1-ին՝ հնչյունաբանություն, վորն ուսումնասիրում է բառեր կազմող հնչյունները, 2-րդ՝ ձևաբանություն, վորն ուսումնասիրում է բառակազմության, ուղղագրության և խոսքի մասերի կազմության ու փոփոխությունների կանոնները, իսկ 3-րդ՝ շարահյուսությունը, վորն ուսումնասիրում է նախադասություն կազմող բառերի ու նախադասությունների

կապակցութիւնը, նրանց կատարած ֆունկցիաները, այսինքն՝ ցույց ե տալիս, թե ինչ բաղադրիչ մասերից և ինչպէս ե կազմըված լեզվի ամենափոքր միավորը—նախադասութիւնը—և այդ մասերից յուրաքանչյուրը տվյալ նախադասութիւն մեջ ինչ պաշտոն ե կատարում մի լրիվ միտք արտահայտելու համար:

ՄԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ.—Նախքան շարահյուսութիւն անցնելը հեռակա ուսանողը լավ պիտի յուրացնի ձևաբանութիւնը, վորը թերի միջնակարգ դպրոցի ծրագրի մեջ ե մտնում:

2. Մարդիկ իրենց մտածողութիւնն արտահայտում են լեզվի միջոցով: Լեզուն ամենակարճ, ամենահեշտ և ամենակատարյալ միջոցն ե մարդկանց փոխարարներութիւն: Լեզուն վոչ միայն մտքեր հաղորդելու միջոց ե, այլև գործիք ե այդ մտքերի ձևակերպման: Մարքսն ասում է՝ «Լեզուն պրակտիկ, ունի իմացութիւն ե»—իդեոլոգիական յուրահատուկ վերնաշէնք, վոր փոփոխութիւններով կապված ե հասարակական ֆորմացիաների փոփոխութիւնների հետ:

Տարբեր դասակարգերի տիրապետութիւն զուգընթաց, մասնավորապես գրական լեզվի միջոցով, ընթացել ե այդ դասակարգերի լեզվի տիրապետութիւնը:

Բոլոր ժողովուրդներ լեզուները, վորակով ու քանակով տարբեր են յեղել ֆեոդալիզմի ու կապիտալիզմի ժամանակաշրջաններում և տարբեր են այսօր մեզ մոտ, սոցիալիզմի կառուցման շրջանում: «Յերբ սոցիալիզմը կենցաղ դառնա, ազգային լեզուներն անխուսափելիորեն պետք ե սիւսնալվեն, դառնան մի ընդհանուր լեզու, վոր իհարկե, վոչ վելիկոռուսական կլինի, վոչ ել գերմանական, այլ ինչ վոր նոր լեզու» ՄՏԱԼին:

Ուրեմն լեզուն ինչ վոր քարացած անփոփոխ կատեգորիա չե, այլ պատմական յերեվելթ՝ փոփոխվող ու զարգացող:

3. Մտածողութիւնը ուղեղի գիտակցական գործունեյութիւնն ե առաջադրված խնդիրը ծրագրված կերպով լուծելու համար:

Ինչպէս մտածողութիւնն ունի իր ստորաբաժանումները—մըտածութիւն, միտք ու իմաստ—հասկացողութիւններ, նույնպէս և լեզուն ունի—խոսք, նախադասութիւն ու բառ ստորաբաժանումներ, ուրեմն նաեւ նախադասութիւնների միջոցով արտահայտված մտածութիւնն ե մի խնդրի, մի հարցի մասին, լինի բանավոր կամ գրավոր: Մտածութիւնն արտահայտված լեզվով կոչվում ե խոսք:

Նախադասութիւնը խոսքի քերականորեն ձևակերպված այն միավորն ե, վորը մի լրիվ միտք ե հայտնում: Յեթե մտածութիւնը կազմված ե մի մտքից, արտահայտվում ե մի նախադասութեամբ, յերկու մտքից՝ յերկու նախադասութեամբ և այլն:

Բառն առանձին վերցրած մի վորոշակի իմաստ ունեցող հնչախումբ ե և ամենափոքր միավորն ե լեզվի մեջ, Նա կազմըված ե վանկերից ու հնչյուններից, բայց դրանք նշանակութիւն չունեն և կապ չունեն բառի իմաստի հետ—որինակ՝ հայերեն՝ քնկեր, ֆրանսերեն՝ կամառադ, ռուսերեն՝ տովարիշչ, չերեքն ել նույն իմաստն ունեն, բայց հնչյուններով տարբեր են:

Բառերը նախադասութիւն մեջ կատարած ըստ իրենց ֆունկցիաների բաժանվում են 4 խմբի.

1. Նախադասութիւն զլրացվոր անդամներ.

2. Լրացական բառեր.

3. Կապակցական բառեր.

4. Ձգացմունք, վերջա, ուրախութիւն, համոզմունք արտահայտող բառեր.

Նախադասութիւն մեջ բառերն որգանապես (հոլովման ու խոնարհման ձևերով, կապերով, շաղկապներով, նշաններով և այլն) իրար հետ կապվելով մի ամբողջութիւն են կազմում, արտահայտելով մի նոր միտք:

Նախադասութիւն արտահայտած միտքն այն չե յերբեք, ինչ այդ նախադասութիւն կազմող բառերն ունեն առանձին-առանձին. որինակ՝ իւրբ ասում ենք՝ վորսորդի գնդակով սպանվեց առյուծը, այստեղ հիմնականը առյուծի սպանվելն ե: Բոլորովին նույնը չե, յերբ մենք այս նախադասութիւն կազմող բառերն առանձին-առանձին վերցնենք. վորսորդ, գնդակ, սպանել, առյուծ և այլն: Այստեղ այլևս չունենք այն հիմնականը. ունենք չորս բառ և ամեն մի բառն անշատ-անշատ ունի իր հիմնական իմաստը: Ուրեմն նախադասութիւնը բառերի քանակական կուտակումը չե միայն, այլ նոր վորակ ե, թե ձեռք և թե բովանդակութեամբ: Բառերը պահպանելով հանդերձ իրենց նշանակութիւնը, նախադասութիւն մեջ, վորոշ սիւստեմով ու շարահյուսութեամբ մի միասնութիւն են կազմում, մի նոր լրիվ միտք, որ յեկտիվ ունակականութիւն մի մոմենտ արտահայտելու համար: Այստեղից ել բղխում ե այն, վոր բառերն առանձին ֆունկցիաներ են կատարում նախադասութիւն մեջ: Այս նույնը կարելի չե ասել նախադասութիւն մասին, խոսքի վերաբերմամբ, վորով-

հետև չեթե նախադասութեան միավորը բառն է, ապա խոսքի միավորն էլ նախադասութեանն է: Ուրեմն խոսքը նույնպես նախադասութեանների սոսկ քանակական կուտակում չէ, այլ տալիս է մտքի մի նոր վորակ, մի մտածութեան, վոր հիմնականում տարբեր է աչդ խոսքը կազմող նախադասութեանների արտահայտած մտքերից, առանձին-առանձին վերցրած: Այսպիսով լեզուն նույնպես դիալեկտիկական զարգացման լավագույն որին նախներից մեկն է:

Նախադասութեանը խոսքի միավորը լինելով, ըստ կազմութեան լինում է՝ ՊԱՐԶ ՅԵՎ ԲԱՐԴ:

Նախադասութեանը պարզ է, չերբ մի լրիվ միտք արտահայտված է մի նախադասութեամբ և աչդ նախադասութեան մեջ ամփոփված քերականական ֆունկցիաները կատարում են բառերը: Նախադասութեանը բարդ է՝ յերբ մի լրիվ միտք արտահայտելու համար որգանապես իրար կապված են մեկից ավելի նախադասութեաններ և կազմում են ընդհանուր նախադասութեան: Որինակ՝ Փայտահատը կտրեց ծառը: Սա պարզ նախադասութեան է, իսկ չերբ ասենք՝ Փայտահատը կտրեց ծառը, վորպեսզի ձմեռվա վառելիք պատրաստի և իրեն համար բնակարան շինի: Սա բարդ նախադասութեան է, կազմված չերբ նախադասութեաններից, վորոնցից առաջինը գլխավոր, իսկ վերջին չերկուսը՝ չերկրորդական, վորոնք լրացնում են առաջինի իմաստը:

Պարզ նախադասութեանն իր հերթին լինում է 1) պարզ համառոտ-որինակ՝ Դեղամը գնաց, 2) պարզ ընդարձակ—որինակ՝ Քանաքեռի կոլխոզի նախագահը գնաց հանգը աշխատանքները ստուգելու:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Նախադասութեան գլխավոր անդամներն են՝ յենթական գործողութեան կատարողը, վոր միշտ ուղղական հորվով է լինում և ստորոգյալը—վորը յենթական կատարած գործողութեան ցույց տվող բառն է:

Առանց այս չերկուսի միասնականութեան նախադասութեան չկա և չի կարող լինել:¹

Ուրեմն յենթակա կոչվում են այն բառերը, վորոնց նախադասությամբ մեջ ցույց են տալիս գործողություն կատարող, անող կամ լինող առարկան:

¹ Տես ծանոթություն գրքի վերջում:

Յենթական մարդկանց և յիրենց անասունների համար պատասխանում է՝ Ո՞վ, իսկ իրերի, առարկաների համար՝ Ի՞նչ հարցին: Որինակ՝ Ուսուցիչը խոսում է, թվ է խոսում՝ ուսուցիչը (յենթակա): Սոխակը չերգում է՝ թվ է չերգում՝ սոխակը (յենթակա): Թանաքը թափվեց, ի՞նչը թափվեց՝ թանաքը (յենթակա): Ծառը կտրվեց, ի՞նչը կտրվեց՝ ծառը (յենթակա) Կատուն սատկեց, ի՞նչը սատկեց՝ կատուն (յենթակա):

Յենթակա կարող են լինել միմիայն գոյականները և նրանց փոխարինող դերանունները, որ՝ Ուսուցիչը դաս տալիս, նա գրում և բացատրում է:

Պոսքի մնացած մասերը կարող են լինել յենթակա, չերբ նրանք գործածվեն գոյականաբար. որինակ՝

1. Գործարանն աշխատում է, յենթական է գործանը, վորը՝ գոյական է:

2. Դու կարգում ես, յենթական է դու, վորը՝ դերանուն է:

3. Սովորելն անհրաժեշտ է, յենթական է սովորելը, անորոշ դերբայ է (գոյականաբար գործածված):

4. Ծաղկածը չորացավ. յենթական է ծաղկածը, հարկատար դերբայ է (գոյականաբար գործածված):

5. Կա՞մ իրը հաղթանակեց. յենթական է կարծիքը, վորն ածական է (գոյականաբար գործածված):

Ստորոգյալ այն բառերն են, վոր ցույց են տալիս յենթակա ի՞նչ է լինում, ի՞նչպիսին է և ի՞նչ վիճակի մեջ է, որինակ՝

1. Ուսանողը սովորեց իր դասը. ստորոգյալն է սովորեց, ցույց է տալիս, վոր յենթական (ուսանողը) մի բան արեց, մի գործ կատարեց—այսինքն դասը սովորեց:

2. Ծառը ծաղկեց. ստորոգյալն է՝ ծաղկեց, ցույց է տալիս՝ վոր յենթական մի բան չեղավ, վորական վորփոխութեան կրեց:

3. Աշակերտը նստած է. ստորոգյալն է՝ նստած է, վոր ցույց է տալիս, թե յենթական (աշակերտը) ինչ վիճակի, ինչ դրության մեջ է:

4. Ջին սպիտակ է. ստորոգյալն է՝ սպիտակ է, վորը հաստատում է յենթական (ձին) սպիտակ գույն ունի:

Ստորոգյալները ձևով լինում են չերկուս տեսակ 1. պարզ

ստորոգյալ, չերբ մի բալ, խոնարհման իր բոլոր ձե-
վերով, ժամանակներով ու յեղանակներով, համաձայնեցված յեն-
թակալի թվին ու դեմքին. որինակ՝ Ուսանողները դպրոց
հաճախում են, հաճախեցին, կհաճախեն, պիտի հա-
ճախեն և այլն: 2. Բարդ ստորոգյալ—չերբ ստորոգյալը
բաղկացած է մի բալից ու մի գոյականից կամ ա-
ծականից. որինակ՝ Պետրոսն ուսուցիչ է. ստո-
րոգյալն է՝ ուսուցիչ է, վորը կազմվում է ուսուցիչ գոյա-
կանից և է ռոմանիակ բայից: Վարդը կարմիր է. կարմիր
ածական է:

1. Կան մի շարք բարդ ստորոգյալներ, վորոնք կարող են
պարզ ձևի վերածվել: Որինակ՝ դառնալ, կարել, վերածել, փոխել, յերե-
վալ, թվալ և նման տիպի բայերը, չերբ նախադասության մեջ վոր-
պես ստորոգյալ միանում են գոյականների կամ ածականների հետ,
կարող են մի բառով գրվել—այսինքն պարզ ստորոգյալի վերած-
վել. որինակ՝ Ջուրը գոլորշի դարձավ—ջուրը գոլոր-
շիացավ: Գետը կարմիր կտրեց—գետը կարմրեց:
Հուլիսը պղտոր դարձավ—լուծույթը պղտորվեց:

2. Պետք է, հարկավոր է, անհրաժեշտ է, անխուսափելի է,
անտանելի է և այլ նման բարդ ստորոգյալները ընդհանրապես
անորոշ դերբայով (գոյականաբար առնված) լենթականեր են ու-
նենում. որինակ՝ Պետք է գնալ. ստորոգյալն է՝ պետք է,
յենթական է՝ գնալ: Հարկավոր է գրել. ստորոգյալն է՝
հարկավոր է, լենթական է՝ գրել: Պատրաստ է զոհա-
բերել և այլն:

3. Նախադասության մեջ հաճախ պատահում է, վոր մի քա-
նի բառեր նման ֆունկցիա լեն կատարում, սրանք կոչվում են
բազմակի, իսկ լեթե մի բառ է, կոչվում է միակի:

Ինչպես լենթական, նույնպես և ստորոգյալը կարող են լինել
միակի և բազմակի. որինակ՝ Առյուծը կատաղի գազան է. լենթական
է՝ առյուծը, վորը միակի է: Առյուծը, վագրն ու արջը կատաղի
գազաններ են. լենթական լեն՝ առյուծը, վագրն ու արջը, վոր բազ-
մակի լեն—այսինքն մի քանի տեսակի—լենթականներ են:

Ինչպես լենթականները, նույնպես և ստորոգյալները լինում
են միակի և բազմակի. որինակ՝ չերբ ասում ենք՝ Պետրոսը
խփեց. ստորոգյալն է՝ խփեց, միակի է, իսկ չերբ ասում
ենք Պետրոսը խփեց, ջարդեց, փշրեց, թափեց,
ստորոգյալներն են՝ խփեց, ջարդեց, փշրեց, թափեց, վո-

րոնք բազմակի լեն և ցույց են տալիս, վոր յենթական միևնույն
գործողության արտացիլ մի քանի աստիճաններով զարգացել է
մինչև վերջը:

Յենթակալի ու ստորոգյալի համաձայնությունը

Յենթական ու ստորոգյալը վորպես նախադասության գլը-
խավոր անդամներ թվով ու դեմքով համաձայնում են իրար, այ-
սինքն՝ յենթական լենթակի լեն ստորոգյալն էլ կլինի լենթա-
կի և ընդհանրապես, որինակ՝ Յեսս գնացի, մենք գնա-
ցինք, դու գնացիր, դուք գնացիք, նա գնաց,
նրանք գնացին և այլն:

Յերբ լենթականները դերանուններ են, հաճախ չեն գրվում:
Որինակ՝ լեսս գնացի, կամ գնացի—նույն հասկացողու-
թյուններն են:

Կան մի շարք ստորոգյալներ, վորոնց յենթականներն առհա-
սարակ չեն գրվում և կոչվում են միադեմ նախադասություն-
ներ. որինակ՝ լուսացավ, մթնեց և այլն:

Սրանց լենթակալով ձևերն են՝ լուցար բացվեց, մութն ըն-
կավ և այլն:

Վհատելու է գծվարության առաջ: Ջղա-
յին մարդ է, հետը չի խոսվում: Սրանց լենթակա-
լով ձևերն են՝ չպետք է վհատել (լենթակա) գծվարություն-
ների առաջ: Ջղային մարդ է, հետը չի կարելի խոսել (լեն-
թակա):

Յերբեմն էլ պատահում է, վոր ստորոգյալը չի գրվում, բայց
հասկացվում է: Որինակ՝ Ճիշտ խոսք է լե լե խայից:
Արամը հարվածալին է, իսկ Պետրոսը՝ վոչ (այ-
սինքն՝ հարվածալին չէ):

Ասացինք, վոր յենթական ու ստորոգյալը թվով ու դեմքով
համաձայնում են իրար, բայց կան հետևյալ մի քանի բացառու-
թյուններ՝

1. Յերբ լենթական ունի թվական անուն, յերբեմն լենթակի
լենթական կարող է հոգնակի ստորոգյալ ունենալ. որ. Յերկու
հոգի ուղու էն դաս լսել: Բառասուն հոգի գնա-
ցին հունձ անելու:

2. Մեկից ավելի լենթակի լենթականները կունենան հոգնակի
ստորոգյալ. որինակ՝ Սուրբիք, Վարդանը, Մեսրոբը և Գրիշան
սովորում են իրենց դասը:

Յեթե բազմակի լինթակաները տարբեր դեմք ունեն, ստորագրալն առաջին դեմքով ե գրվում՝ յերբ լինթականերից մեկը լինի առաջին դեմքի. լերկրորդ դեմքով ե գրվում՝ լինթ առաջին դեմք չկա. լերկրորդ դեմքով ե գրվում, լերբ առաջին ե լերկրորդ դեմք չկան. որինակ, յ ե ս, դ ու ե ն ա գ ն ա ց ի ն ք. դ ու ե ն ա գ ն ա ց ի ք. ն ա գ ն ա ց :

Սակայն յեթե բազմակի լինթակաները համանիշ են, ստորագրալը լինում ե լեզակի ե մեկ դեմքով. որինակ՝ Կարգ ու կանոն հաստատվեց: Վիշտ ու ցալը վերացավ ե ալն:

Յեթե բազմակի լինթականերն առանձին—առանձին են մտածվում ե անշատվում են իրարից նշաններով, ստորագրալը գրվում ե առաջ ե լեզակի յե գործածվում. որինակ՝ Մ ե ղ մ ո տ կ ա՝ շ ի ն ա ր ա ր ու թ յ ու ն, հ ա ր վ ա ծ ա յ ն ու թ յ ու ն, ե ն տ ու ղ ի ա զ մ, ա ր դ լ ու ն ա բ ե ր ու թ յ ա ն վ ե ր ե լ ք, ի ս կ կ ա պ ի տ ա լ ի ս տ ա կ ա ն յ ե ր կ բ ն ե ր ու մ՝ ճ դ ն ա ժ ա մ, գ ո ր ծ ա ղ ը ր կ ու թ յ ու ն, ս ո վ, կ յ ա ն ք ի ա ն ա պ ա հ ո վ ու թ յ ու ն: Մ ի տեղ տիբում ե՝ պայծառ արե ու կապույտ յերկինք, իսկ մյուս տեղը՝ վորոտ, փոթորիկ ու անձրև:

Ս. ե Դ. դիմորոշ հող ունեցող լինթակաների ստորագրալները համաձայնում են այդ հողերի ցույց տված դեմքերին. որինակ՝ Ա մ ե ն մ ե կ ս մ ի գ ի ր ք վ ե ր ց ր ի ն ք. ա մ ե ն մ ե կ գ մ ի գ ի ր ք վ ե ր ց ր ի ք:

ԸՆԹԵՐԿԱՆՈՒՅՈՒՆ

Դասագիրք՝ «Հայոց գրականության քրեստոմատիա» ինկորորդ դասարան, Մ. Մկրյան ե Խ. Սարգսյան:

Կարգալ Շիրվանզադեյից՝ 1. Նորերից մեկը ե 2. «Քոս» (հատվածներ) եջ՝ 3—90: 2. Թումանյանի՝ «Թմակաբերդի առումը» եջ՝ 158-167: Նարդոսից՝ 1. «Աննա Սարոյան», 2. «Մահը» եջ՝ 214-256:

Հրահանգներ ու վարժություններ

1. «Թմակաբերդի առումի» առաջին մասից ջոկել 10 պարզ նախադասություն ե վորոշել նրանց լինթական ու ստորագրալը:

2. Ինքնուրույն կերպով կազմել 5 նախադասություն, վորոնց լինթակաները լինեն գոյական անուն, 5 նախադասություն՝

վորոնց լինթակաները լինեն դերանուններ ե 3-ական նախադասություն՝ ածական ե դերբայ լինթականերով:

3. «Քոսից» ջոկել 3 բարդ նախադասություն ե վորոշել զլխավոր ու լերկրորդական նախադասությունները:

4. «Քոս»-ից ջոկել 5 պարզ նախադասություն, վորոնք ունեն բարդ ստորագրալներ:

5. Ինքնուրույն կերպով կազմել յերկու նախադասություն, վորոնց լինթակաները լինեն բազմակի ե յերկու նախադասություն, վորոնց ստորագրալները լինեն բազմակի:

6. Վերլուծել այս նախադասությունը—Պ ե տ ք ե խ ր ա խ ու ս ի լ լ ա վ ս ո վ ո ր ո ղ ա շ ա կ ե ր տ ն ե ի ն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ընթերցանության համար տրված նյութերը պետք ե սահուն ե վարժ կարգալ, պատմել, անձանթ բառերը սովորել, կոնսպեկտի վերածել, լեզվական ե գեղարվեստական վերլուծութիւն կատարել, վորոշ վոտանավորներ անգիր անել: Կատարել նաեւ արտագրություններ ե գրել շարադրություններ: Կատարած աշխատանքները գրել տնային տետրակում, մաքուր պահել ե սեխաներին գալու ժամանակ ներկայացնել ունեցնգենտ դասատույին գնահատականներ նշանակելու համար: Աշխատանքները կատարել թանաքով ե պահել խիստ մաքուր:

ԿՈՆՏՐՈԼ ԱՇԽԱՏԱՆԳ

Գրավոր պատասխանեցեք հետևյալ հարցերին ե շտապ ուղարկեցեք մեզ:

(Զեր գրավորի ծավալը չպետք ե անցնի վեց թերթից):

1. Ի՞նչ ե քերականությունը ե ի՞նչ ստորաբաժանումներ ունի.
2. Ի՞նչ ե մտածողությունը.
3. Ի՞նչ ե խոսքը.
4. Ի՞նչ ե նախադասությունը.
5. Քանի տեսակ նախադասություն կա ե ինչ՞ով են տարբերվում իրարից.
6. Ի՞նչ ե բառը.
7. Վորոնք են նախադասության հիմնական անդամները ե ինչպիսի կապակցության ու համաձայնության մեջ են իրար հետ.

8. Ի՞նչն է սխալը, յերբ ասենք՝ ամեն բայը մենակ մի խոսք
և կազմում:

9. Ի՞նչ հարցին և պատասխանում յենթական.

10. Ի՞նչ բառեր կարող են լինել չենթակա.

11. Ի՞նչ է ստորոգյալը.

12. Վորո՞նք են պարզ և բարդ ստորոգյալները և կո՞ն աշն-
պիսի պարզ ստորոգյալներ, վորոնց կարելի չէ բարդի վերածել
և բարդը՝ պարզի:

13. Ի՞նչպիսի բայեր են, վոր անորոշ գերբայով չենթակա-
ներ են ունենում.

14. Կարող են բազմակի յենթականներ ու բազմակի ստո-
րոգյալներ լինել և չէ՞րբ:

15. Կո՞ն աշնպիսի նախադասութիւններ, վորտեղ յենթա-
կան կամ ստորոգյալը չեն գրված.

16. Յեթե նախադասութեան յենթական բազմակի չի և ու-
նի առաջին, յերկրորդ և յերրորդ գեմքեր, ստորոգյալը վոր գեմ-
քով և գրվում:

Փամկետ 15 որ.

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 2

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ի Պ Լ Ա Ն Ը

1. Լրացական բառեր.

ա. Յե՞նթակայի լրացումները, նրանց սեռականները
նամանայնությունն ու կապակցությունը:

բ. Ստորոգյալի լրացումները, նրանց սեռականները,
նամանայնությունն ու կապակցությունը.

գ. Լրացման լրացումներ, նրանց սեռականները, հա-
մանայնությունն ու կապակցությունը.

2. Ստորոգյալի սեռականներ.

3. Ընթերցանություն.

4. Հրանանգներ ու վաճառքներ.

5. Կոմսուլ աշխատանք.

Ի. Լրացական բառեր

Նախադասութիւնը, բացի չենթակայից ու ստորոգյալից
կարող է ունենալ և յերկրորդական անդամներ, վորոնք ո՞ժան-
դակում են մտքի լրացմանն ու կոնկրետացմանը: Այսպիսի բա-
ռերը կոչվում են լրացական բառեր:

Լրացական կոչվում են այն բառերը, վորոնք վորեն ձևով
լրացնում, պարզաբանում ու ամբողջացնում են նախադասու-
թեան միտքը և լինում են՝ 1. յենթակայի լրացումներ,
2. ստորոգյալի լրացումներ և 3. լրացման լրացում-
ներ¹: Յերբ ասում ենք—կոլիսողը վերջացրեց—սա շատ
անորոշ, չլրացված նախադասութիւն է, վորովհետեւ չգիտենք, վոր-
կոլիսողը և ի՞նչ վերջացրեց: Բայց յերբ ասում ենք՝ Կիրովա-
կանի կոլիսողն ամօրիս 25-ին վերջացրեց իր դարնա-

¹ Տես սխեման 4-րդ առաջադրութեան վերջում:

նացանի պլանը, սա պարզ ու լրիվ է, վորովհետև կիր-
վականի, ամսին 25-ին և դարնանացանի պլանը, ա-
վելանալով նախադասութան գլխավոր անդամների վրա, լրացը-
րին ու ամբողջացրին նրա արտահայտած միտքը: Այստեղ կիր-
վականի բառը յենթակայի լրացումն է, իսկ մնացած բառերը
ստորոգյալի լրացումներն են:

ա. Յենթակայի լրացումները.

Այն բառերը, վորոնք ցույց են տալիս յենթակայի քանակը,
վորակը, հատկութունը, բացահայտումն ու պատկանելիութու-
նը, դրանք յենթակայի լրացումներն են:

Յենթակայի լրացումներն են՝ 1. բացահայտիչ, 2. հատ-
կացուցիչ, 3. վորոշիչ:

1. Բացահայտիչ — կոչվում են այն լրացումները, վորոնք
պարզաբանում են յենթակայի ով կամ ինչ լինելը, պարզաբան-
վողը, այսինքն յենթակայան, դառնում է բացահայտյալ: Ընդհան-
րապես բացահայտիչը բացահայտյալից վերջն է դրվում. որի-
նակ՝ Մեր դպրոցի դիրեկտոր՝ ընկ. Սարգսյանը գի-
տական գործուղման մեջ է: Գործուղման մեջ յեղողը
դիրեկտոր է, բայց մեզ դեռ հայտնի չէ, վորպես անձնավորու-
թյուն նրա ով լինելը, մինչև վոր չասենք՝ ընկ. Սարգսյանը:

Ուրեմն ընկ. Սարգսյանը բացատրում, լրացնում է դիրեկ-
տորի իմաստը, ցույց է տալիս թե անձնապես ով է յեղել այդ
գնացողը: Կամ յերբ ասում ենք՝ Մենք, հարված աշխուհի
միշտ կատարում ենք մեր պլանը. այստեղ յենթակայն
է՝ մենք, հարված աշխուհիներս՝ բացահայտիչ, վոր ցույց է
տալիս մեր ով կամ ինչ լինելը:

Բացահայտիչը և բացահայտյալը իրարից բաժանվում են
բութով կամ ստորակետով, իսկ յեթե յերկար են, շփոթութան
տեղիք չտալու համար բաժանվում են գծով (տիրե) որինակ՝
Շեքսպիրը — անգլիական թատերգու է, «Համլետ»-ի ու
«Ոթելլո»-յի հեղինակը — յերկար տարիներ տիրապետել եր
ամբողջ աշխարհի թատրոնական բեմերին:

Ընդգծված բոլոր բառերը բացահայտիչ են Շեքսպիրին, վո-
րովհետև բացատրում են նրա ով լինելու հանգամանքը:

Բացահայտիչ կարող են լինել միայն գոյականները և գո-
յականաբար գործածվող բառերը: Որինակ՝ Փախում է ապուծը,
վորսորդների գնդակներով վիրավորվածը: Պարզվաթուրվեց

մեր դպրոցի վաստակավոր ուսուցիչը՝ կադրերի լավագույն պատ-
րաստողը, վոգեշնչողը և խրախուսողը:

Այս նախադասությունների մեջ ընդգծված բառերը գոյա-
կանաբար անված բացահայտիչներ են:

Բացահայտիչը թվով, դեմքով և հոլովով համաձայնում է
բացահայտյալի հետ: Որինակ՝ Գայլերը, վոչախարների այդ թըշ-
նամինները, ամպ որերին են ման դալիս: Սոխակը՝ թռչուն-
ների այդ չերգիչը, յերգում եր այս առավոտը:

Ընդգծվածները բացահայտիչներ են և թվով, դեմքով ու հո-
լովով համաձայնում են իրենց բացահայտյալների հետ: Դեմքով
համաձայնելն արտահայտվում է Ս, Դ, Ն, կամ Ը դիմորոշ-
հոգեբով, վորոնք հաճախ դուրս են գցում դերանուն բացահայ-
տյալները, արտահայտելով նրանց նշանակութունը: Որինակ՝
Աշակերտներս դպրոց գնացինք դեռ ուսուցիչները չեկած. վոխա-
նակ ասելու՝ մենք՝ աշակերտներս դպրոց գնացինք դեռ ուսու-
ցիչները չեկած:

Ցուցական դերանունները նույնպես յերբեմն գործածվում
են վորպես բացահայտիչ, մասնավորապես, յերբ բացահայտյալները
գոյականաբար գործածվող անորոշ դերբայներ լինեն. որինակ՝
Լավ սովորելը՝ ՍԱ անհրաժեշտ է ամեն մի քաղաքացու համար:
Անիմաստ խոսելը՝ ԴԱ չարիք է ուղղակի: Սակայն կարելի չէ
այս բացահայտիչները դուրս գցել, առանց նախադասութան
միտքն ազավաղելու. որինակ՝ Լավ սովորելն՝ անհրաժեշտ է ա-
մեն մի քաղաքացու համար: Անիմաստ խոսելը՝ չարիք է և ալլն.

2. Հատկացուցիչ կոչվում են յենթակայի այն լրացում-
ները, վորոնք ցույց են տալիս, թե ումն է պատկանում, վերա-
բերում այդ առարկան:

Հատկացուցիչն վերաբերող կամ պատկանող բառերը կոչ-
վում են հատկացյալ:

Հատկացուցիչը լինում է գոյական անուն. որինակ՝ Ծառի
ճյուղ, դպրոցի դուռ:

Մյուս խոսքի մասերը կարող են լինել հատկացուցիչ, յերբ
վորպես գոյական անուն են գործածվում:

Հատկացուցիչը պատասխանում է ում և ինչի հարցերին:
Որինակ՝ Դպրոցի (հատկացուցիչ) պատահանները (հատկաց-
յալ) բաց են: Տանիքի թիթեղը դեղին է: Ծառի ճյու-
ղը կոտրվեց: Բանակի հրամանատարը կարգադրեց: Ճիշտ խո-
սողի արժանիքը միշտ բարձր է: Կարգացածի թերթիկները

պատուեցին: Պետրոսի ասածը իրականացաւ: Եգիպտոսի աշտորվա-
յե լուսի թի վորակը բարձր եր: Արշակի լերգելը գեղեցիկ եր:

Հատկացուցիչը միշտ լինում ե սեռական հոլովով ե գրվում ե հատկացյալից առաջ: Հատկացյալից հետո գրվելը գրաբարից անացած ձև ե ե մասամբ գործածվում ե գեղարվեստական գրա-
կանության մեջ. որինակ՝ Փոխանակ գրելու՝ Սոխակի լերգը,
վարդի թուփը, արևի շողքը, մուրճի հարվածը, — ասում են՝ յեր-
գը սոխակի, թուփը վարդի, շողքն արևի, հարվածը մուրճի ե
այլն:

Մեր ներկա գրական լեզվի արձակ գրվածքներից, մասնա-
վորապես, գործածության այս ձևը համարյա ամբողջովին վերաց-
ված ե:

3. Վորոշիչ կոչվում են այն լրացական բառերը, վորոնք
վորոշյալի մի հանգամանք՝ նրա քանակը, վորակը ու հատկու-
թյունն են ցույց տալիս, պարզում ու լրացնում են նրա նշանա-
կությունը, միտքը: Որինակ՝ Իմ շնչասպառ ՆժմիցՊէ սու-
րում ե դաշտ, հովիտ ու սար: Դիլիշանի գեղեցիկ ԱՆՏԱՌԸ
հիացնում ե դիտողին: Բարձր ու կանաչավուն ՍԱՐԵՐԸ
դաշտավայրի ամենագեղեցիկ ՏԵՍԱՐԱՆԻ կոթողներն են:
Պիոնեբական ՏՈՒՆԸ կահավորված ե: Յեբկաթյա ՄԱՀՃԱ-
ԿԱՆՆԵՐԸ ուղարկվեցին սանատորիայի համար:

Ընդգծված բոլոր բառերը վորոշիչներ են, վորոնք պարզում,
լրացնում են մեծատառով ընդգծված վորոշյալների իմաստը:

Վորոշիչները կարող են լինել՝

1. Ածականները — որինակ՝ Սե գրատախտակ: Յերկաթյա
մահճակալ ե այլն:

2. Ածականաբար գործածվող դերբայները. որինակ՝
Կարգացած գիրքը: Յերգող թռչունը:

3. Ածականաբար գործածվող մակբայները. ո-
րինակ՝ Քաջաբար կովողը հաղթեց: Քիչքիչ հոտող ջուրը
կտրվեց: Արագաբար գնացողը հասավ ընկերին: Դեմահան-
գիման լեկողը մեր բարեկամն ե:

4. Վորեն հոլովով ածականաբար գործածվող
գոյականները.

ա. Ուղղական հոլովով՝ որինակ՝ Վոսկի ժամացույց: Քա-
սիրտ: Սուս խոսք: Մի բաժակ գինի: Քառասուն մետր կը-
տոր:

բ. Սեռական հոլովով. որինակ՝ Առաջին կարգի պո-
նիր: Հարյուր մանեթի արժողութուն: Դրսի պատը: Ներսի
պահարան: Հաշիվների ստուգողը: Տուրքերի չափը: Ծա-
ղիկներն փունջը: Ջրոսանքի տեղը: Հնձի ժամանակ: Փո-
ղոցի բազմութուն: Այստեղ գործը: Խոսելու տրամադ-
րութուն: Ուտելու հաց:

գ. Բացական հոլովով — որինակ՝ Բրգից վերա-
կու: Վոսկուց բաժակ, ե այլն:

դ. Գործիական հոլովով — որինակ՝ Յերկու փեղկով
պատահան: Կարճ հասակով աղջիկ: Ուժով մարդ: Նավա-
կով զբոսանք ե այլն:

Վորոշիչները սովորաբար իրենց վորոշյալից առաջ են գըր-
վում ե թվով ու հոլովով չեն համաձայնում. որինակ՝ Քաջ գին-
վոր, քաջ գինվորներ, քաջ գինվորներից, քաջ գինվորներով ե
այլն: Ինչպես տեսնում ենք վորոշյալը զանազան փոփոխություն-
ներ կրեց, բայց այդ փոփոխությունները չանդարդաբան վորո-
շիչի (քաջ) վրա:

Վորպես բացառություն հատուկ անունի վորոշիչները չե-
բեն վորոշյալից հետո չեն գրվում, հող են անունում, հոլովվում են,
խակ հատուկ անունները մնում են անփոփոխ, այսպես ասած վո-
րոշիչի ե վորոշյալի միջով դերերը փոխվում են. որինակ՝ Պե-
րոս առաջին, Պետրոս առաջինի, Պետրոս առաջինից ե այլն:
Սա նույնպես գրաբարից անացած ձև ե:

Թեև վորոշիչները թվով, դեմքով ե հոլովով չեն համաձայ-
նում վորոշյալների հետ, բայց չեբենն պատահում ե, վոր վորոշ-
յալը չենթարկվում ե վորոշիչի նշանակությանը ե համաձայն-
վում ե նրա հետ:

Վորոշյալը հոգնակի չե գրվում, չեբը՝

1. Վորոշիչն ունի բազմապատկական նշանակութուն. որի-
նակ՝ Լավ-լավ ջրեր: Մեծ-մեծ գործեր: Սուր-սուր փշեր: Տեսակ-
տեսակ գույներ ե այլն:

2. Յերբ վորոշիչը բազմակի չե. որինակ՝ Կարմիր, կանաչ,
դեղին, կապույտ ծաղիկները:

3. Մեկից ավելի թվական վորոշիչների վորոշյալներն ընդ-
հանրապես չեղակի չեն գրվում. որինակ՝ Հինգ ռուբլի: Տասնյե-
կու մետր: Քսանչորս տակառ: Հարյուր կիլոմետր ե այլն:

Բայց չեբը վորոշյալն ավելի կոնկրետ ե վերցված, խոսքի
իմաստին նաչելով կարող ե հոգնակի գրվել. որինակ՝ Քսան

յերկար տարիներ, Կոտայքի շրջանի տասնհինգ գյուղերը և այլն:

Բ. ՅՏՈՐՈԳՅԱԼԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Այն բառերը, վորոնք ցույց են տալիս գործողութեան տեղը, ժամանակը, չեղանակը, չափն ու քանակը և այն առարկաները, վորոնց վրա, կամ վորոնց միջոցով կատարվում և գործողութեանը, կոչվում են ստորոգյալի լրացումներ:

Ստորոգյալի լրացումները պարզաբանվում, ամբողջացնում ու լրացնում են յենթակալի կատարած գործողութեանը:

Ստորոգյալի լրացումներն ըստ իրենց կատարած ֆունկցիաների լինում են՝

1. ԽՆԴԻՐ և 2. ՊԱՐԱԳԱ

1. ԽՆԴԻՐ կոչվում են այն բառերը, վորոնց միջոցով, կապակցութեամբ և կամ վերաբերմամբ յենթական կատարում և իր գործողութեանը: Խնդիր կարող են լինել բոլոր խոսքի մասերը, յեթե նրանք վորպես որդեկաւ և միջոց լրացնում են յենթակալի գործողութեանը: Որինակ՝ Հյուսիսը գործիքներով պատրաստում և կան կարասիք. այս նախադասութեան գլխավոր անդամներն են՝ հյուսիսը (յենթակա) և պատրաստում և (ստորոգյալ), գործիքներով և կան—կարասիները՝ խնդիր են, վորովհետև ցույց են տալիս այն առարկաները, վորոնց միջոցով (գործիքներով) և վորոնք վերաբերմամբ (կան—կարասիները) կատարված և գործողութեանը: Այստեղ գործիքներով և կան—կարասիներ բառերը խնդիրներ են, արտահայտված գոյական անուններով:

2. Յես տեսա նրան. յես (յենթակա), տեսա (ստորոգյալ), նրան (խնդիր) դերանուն:

Յես ցանկանում եմ յերգել. յես (յենթակա), ցանկանում եմ (ստորոգյալ), յերգել (խնդիր)—անորոշ դերբայ՝ գոյականաբար գործածված:

4. Դու շատ սիրում ես կարմիրը. դու (յենթակա), սիրում ես (ստորոգյալ), կարմիրը (խնդիր)—ածական և՛ գոյականաբար գործածված:

5. Ուսուցիչը հարցրեց ուսանողներից չորսին. ուսուցիչը (յենթակա), հարցրեց (ստորոգյալ), ուսանողներից չորսին (խնդիր):

6. Նախադասութեանից ջնջեցի բայցը և ամեն ինչ կատարյալ դարձավ. բայցը (խնդիր) — շաղկապ՝ գոյականաբար գործածված:

7. Չեմ կարող տանել քո ոֆը. ոֆը (խնդիր), ձայնարկութեան՝ գոյականաբար գործածված:

Ինչպես տեսանք խնդիր կարող են լինել խոսքի բոլոր մասերը, յեթե նրանք գործածվում են գոյականաբար:

Խնդիրները, նախելով ստորոգյալի հետ ունեցած իրենց հարաբերութեան լինում են յերկու տեսակ՝ ա. ուղղակի (կրող խնդիր) և բ. անուղղակի:

ա. Ուղղակի խնդիր լինում են այն բառերը, վորոնց վրա յենթական կատարում և իր գործողութեանը դարձնելով նրան իր գործողութեան որդեկաւ: Ուղղակի խնդիրը լինում և միշտ հայցական հոլովով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Հայցական հոլովը չէր անձ և ցույց տալիս, վերջավորութեամբ նման և տրականի, իսկ չէր առարկա յե ցույց տալիս, նմանվում և ուղղականի:

Հայցական հոլովը պատասխանում և ո՞ւմ, ի՞նչ հարցերին. որինակ՝ Դրիշան ծեծեց Միշալին (ո՞ւմ): Վորսորդը խփեց թռչուններ (ի՞նչ): Բամին ջարդեց ծառերը (ի՞նչ): Պիոները բարձրացրեց դրոշակը (ի՞նչ): Կոխողները կատարեց պլանը (ի՞նչ): Կառուցողները շինում են շենքեր (ի՞նչ) և այլն:

Ընդգծված բառերն ուղղակի խնդիրներ են, վորովհետև ցույց են տալիս, վոր յենթական գործողութեանը կատարում և նրանց վրա, կամ նրանք իրենց վրա կրում են յենթակալի գործողութեանը:

բ. Անուղղակի խնդիր այն բառերն են, վորոնք վոչ թե իրենց վրա ուղղակիորեն կրում են յենթակալի գործողութեանը, վորպես որդեկաւ, այլ մի քիչ ավելի կողմնակի կերպով, զանազան ձևերով լրացնում են ստորոգյալի արտահայտած միտքը:

Բոլոր հոլովները կարող են լինել անուղղակի խնդիր, բայց ուղղական և սեռական հոլովներից: Այսպես՝

1. Տրական հոլովը — (պատասխանում և ո՞ւմ, ի՞նչ բանին հարցերին) որինակ՝ Դու քաջալերեցիք աշակերտներին. դուք (յենթակա), քաջալերեցիք (ստորոգյալ), աշակերտներին՝ տրական հոլովով անուղղակի խնդիր, վորովհետև լրացնում և ստո-

քողարկի իմաստը անուղղակի կերպով: Մոտեցեք պատուհաններին: Դրեցեք թերթերին: Լսեցեք խոսողին և այլն:

2. Բացառական հոլովը— (պատասխանում ե ումից, վո՞րից, ի՞նչից, ի՞նչ բանից հարցերին): որինակ՝ Գրիշա՛յից լսեցի. այս նախադասության մեջ՝ յես (յենթակա), լսեցի՝ (ստորոգյալ), Գրիշա՛յից՝ բացառական հոլով, անուղղակի խնդիր (վորից): Սաքոն ծեծվեց Միշա՛յից (ու՞մից): Թշնամու գնդա՛կից չեմ վախենա (ի՞նչից): Հոգնե՛լ եմ խաղալուց (ի՞նչից): Բարեկությունից կարմրե՛լ ես (ի՞նչից) և այլն:

3. Գործիական հոլովը— (պատասխանում ե վորի միջոցով, ում միջոցով, ի՞նչով, ի՞նչ բանով հարցերին): որինակ՝ Բանակով հաղթեցին (ում միջոցով): Թնդանոթով ուժեղացրինք (ի՞նչով): Դանակով կտրեցի (ի՞նչով): Տրակտորով հերկեցի (ի՞նչով): Ձեր ոգնությամբ քաղաք հասա (ում ոգնությամբ):

2. Պ Ա Ր Ա Գ Ա

Պարագա կոչվում են այն բառերը, վորոնք պարզապես ում, լրացնում են յենթակայի կատարած գործողության ձևը, յեղանակը և այլն:

Յեթե խնդիր կոչվում են նրանք, վորոնք միջոցով, կապակցությամբ կամ վերաբերմամբ յենթական կատարում ե իր գործողությունը, ապա պարագան ցույց ե տալիս գործողության կատարման ձևը, ժամանակը, տեղը, յեղանակը, չափն ու քանակը և այլն:

Պարագաներ, վորպես գործողության ձև, հիմնականում լիւնում են՝

ա. տեղի պարագա, բ. ժամանակի պարագա, գ. յեղանակի պարագա, գ. չափ ու քանակի պարագա, յե. պատճառի պարագա, գ. նպատակի պարագա:

1. Տեղի պարագա— Բոլոր տարածություն կամ տեղի անունները ստորոգյալի մոտ գրվելով պարագա չեն դառնում: Տեղի պարագա դառնում են այն ժամանակ, յերբ նրանք արտահայտում են գործողության կատարման տեղը, այսինքն ցույց են տալիս այն տարածությունը, վորի մեջ, կամ վորի վրա կատարվում ե գործողության պրոցեսը, ուրիշ խոսքով, յերբ այդ տարածությունը միասնական ե կատարված գործողության պրոցեսի հետ, որինակ՝ Հանդում աշխատում են կոլեկտիվները: Նա հեռացավ մեզանից հինգ վերստ: Գնում

են գետի յլրեարությամբ: Ճանապարհն անդնում ես անտառով: Այս նախադասությունների մեջ՝ հանդում, 5 վերստ, գետի յերկարությամբ և անտառով բառերը պարագաներ են, վորովհետեւ գործողության կատարման տարածական արտահայտություն են ցույց տալիս և ամբողջ ծավալով կապված են գործողության ընթացքի հետ:

Տեղի պարագան պատասխանում ե ուր, վորտեղ, վորտեղից, մինչև ուր, վորտեղով և վորքան տեղ հարցերին. որինակ՝ Ապրում եմ Յերեվանում (ուր կամ վորտեղ): Յերեվանից մինչև Բաղու ճանապարհորդեցի (վորտեղից մինչև ուր կամ վորտեղ): Գնում ելինք գետի յերկարությամբ (վորտեղով): Անցնում ելինք սարի լանջով (վորտեղով): 40 կիլոմետր գնացինք (վորքան տեղ) և այլն:

2. Ժամանակի պարագա.— Կոչվում են այն բառերը, վորոնք գործողության ընթացքի ժամանակ, տեղողություն են ցույց տալիս. որինակ՝ Այսօր մնալու յնմ Յերեվանում. յես (յենթակա), մնալու յնմ (ստորոգյալ), Յերեվանում (տեղի պարագա), այսօր (ժամանակի պարագա), վորովհետեւ ցույց ե տալիս իմ մնալու ժամանակը, կապված մնալու գործողության պրոցեսի հետ:

Ժամանակի պարագան պատասխանում ե յերբ, վորքան, ի՞նչքան ժամանակ և վոր ժամանակից մինչև յերբ հարցերին. որինակ՝ Ամառը սառնատորիալումն ելի (յերբ): Յերեվա ուր ե՝ անձրեւ ե գալիս (վորքան ժամանակ): Աշնանից մինչև գարուն սովորում եմ (վոր ժամանակից մինչև յերբ):

3. Յեղանակի կամ ձևովի պարագա— Կոչվում են այն բառերը, վորոնք ցույց են տալիս թե յենթական իր կատարած գործողությունն ի՞նչ յեղանակով, ի՞նչ ձևով ե կատարում. որինակ՝ Ձին հանդարտ գնում եր: Ձիավորը բարձր յերգում եր: Դուք վճռականորեն տվեք ձեր վորոշումը և նա սիրով կկատարե այն: Կարմիր բանակը հերոսաբար կալաշոպանե Խորհրդային Միության սահմանները: Պլանն երբ գերակատարելով հարվածային դարձա: Այս նախադասությունների մեջ բնագծված բառերը յեղանակի պարագաներ են, վորովհետեւ ցույց են տալիս, թե ինչ յեղանակով, ինչ ձևով են կատարվում այդ գործողությունները: Յեղանակի պարագան պատասխանում ե ի՞նչպես, ի՞նչ ձևով հարցերին. որինակ՝ Արագ ե խոսում (ի՞նչպես): Ուրախությամբ կկատարեմ ձեր պատվերը

(խնչ ձևով): Ուղիղ ճանապարհով եմ գնալու (խնչպես): Խաղ ու պարով կկատարեմ կոչվողի աշխատանքները (խնչ ձևով) և այլն:

4. Չափ ու քանակի պարագա—կոչվում են այն բաները, վորոնք ցույց են տալիս յենթակայի կատարած գործողության չափն ու քանակը. որինակ՝ 10 կիլոմետր գնացի: Պատերն 5 մետր բարձրացրին: Շատ գիշերներ չքնեցիր և այլն: Այս նախադասությունների մեջ 10 կիլոմետր, 5 մետր, շատ գիշերներ—չափ ու քանակի պարագաներ են:

Չափ ու քանակի պարագան պատասխանում են՝ վերջապետ, վերջապետ, խնչ չափ, քանի և քանի անգամ հարցերին. որինակ՝ Շատ բարձրացավ (վերջապետ): Դիչ գնաց (վերջապետ): Յերկու մետր շարեցին (վերջապետ կամ խնչ չափ): 10 կիլոմետր (քանի): Տաս չափի, մին կտրի (քանի): Հինգ անգամ գնաց յեկավ (քանի անգամ) և այլն:

5. Պատճառի պարագա—լինում են այն բաները, վորոնք ցույց են տալիս գործողության պատճառը, պատասխանում են՝ խնչ պատճառով, խնչի համար, ինչո՞ւ, ինչից հարցերին: Որինակ՝ Հիվանդության պատճառով դպրոց չի յեկել (խնչ պատճառով): Իր ապիկարության պատճառով գործից ազատվեց (խնչ պատճառով): Հանցանքի համար դատապարտվեց (խնչի համար): Խոսելուց ձանձրացավ (խնչից) և այլն:

6. Նպատակի պարագա—լինում են այն բաները, վորոնք ցույց են տալիս գործողության նպատակը. պատասխանում են՝ խնչ նպատակով, խնչու համար, խնչի, խնչու հարցերին. որինակ՝ Տեխնիկումը ուսուցնասիրելու գնացի (խնչ նպատակով): Ժողովին մասնակցելու համար բազու մեկնեցի (խնչու համար): Աշխատանքի գնացի (խնչի): Բանկուպի վարչության գրմեցի (խնչու և այլն):

Բոլոր խոսքի մասերը կարող են լինել պարագա, յեթե նրանք արտահայտում են գործողության ձևը նախադասության մեջ:

Այսպես՝

1. Գոյականները պարագա լինում են հետևյալ հոլովներով՝ ա. Բացառական և հայցական հոլովներ—Որինակ՝ Յերեվանից մինչև Թիֆլիս գնացի: Կասպից ծովից մինչև Սեփ ծովը կովկասյան լեռնաշղթան ե ձգված: Ֆրանսիայից մինչև Չինաստան յերկաթուղով գնացի: Բազու հասա ամսիս հինգին: Այս նախադասությունների մեջ Յերեվանից մինչև Թիֆլիս,

Կասպից ծովից մինչև Սեփ ծովը, Ֆրանսիայից մինչև Չինաստան և Բազու բացառական և հայցական հոլովներով պարագաներ են:

Հայցական հոլովը պատասխանում է նաև հարցերին:

Որինակ՝ Գրիշան մեկնեց Բագու: Գրիշան (յենթակա), մեկնեց (ստորոգյալ), Բագու՝ հայցական հոլով, տեղի պարագա, վորովհետև ցույց է տալիս այնտեղ, այն վայրն, ուր վերջանում է մեկնելու գործողությունը: Գիշերը գնացի (յերբ): Առավոտը յեկավ (յերբ): Գիշերը և առավոտը բառերը հայցական հոլովով ժամանակի պարագաներ են, վորովհետև ցույց են տալիս այն ժամանակը, յերբ սկսում է գնալու և դալու գործողությունը:

բ. Տրական հոլով—որինակ՝ Դեկտեմբերին Յերեվանում ասպրեցի: Յերեվանում դուրս յեկավ փողոց: Նա դորքը չորս մասի բաժանեց: Գլխին ուներ գլխարկ: Կողքին կապած էր սուր: Գնացքը մեկնեց կես գիշերին: Ժամը յերկուսին քնեցի: Ամառանոց պետք է գնալ ամառվա շոգերին: Այս գիրքը գնեցի 5 ոսկով: Տեսնելուս պես կրակեց: Վերադառնալու ծախեցի 30 մանեթի: Այս զազանը նման է վագրի: Դաշտը կանաչին է տալիս: Բոլոր ընդգծվածները տրական հոլովով պարագաներ են:

գ. Բացառական հոլովով—որինակ՝ Վոտքից խփվեց: Ցավից մեռավ: Ականջից քաշիր: Մագերից բռնիր: Թուզի կողմից հարձակվիր: Կոլխոզնիկներն աշխատում են գլուզից դուրս: Մեր տունը գտնվում է համալսարանից ներքե: մեր ամբողջ ճանապարհն անտառից անցավ: Այս նախադասությունների մեջ վոտքից, ականջից, մագերից, կողմից, գլուզից, անտառից, համալսարանից և այլն բառերը բացառական հոլովով պարագաներ են հետադարձությունների հետ միասին:

դ. Գործիական հոլովով—որինակ՝ Սիրով կկատարեմ այդ աշխատանքը: Տնով տեղով գնացինք: Ժամերով լեռներում մնացինք: Ջրային ճանապարհներով մեկնեցինք: Կամուրջի վրայով անցանք: Գիշերով դուրս յեկանք Թիֆլիսից: Դալը չորս վոտքով ընկավ թակարդ և այլն: Այս նախադասությունների մեջ՝ սիրով, տնով-տեղով, ժամերով, ճանապարհներով, կամուրջի վրայով, գիշերով, չորս վոտքով բառերը գործիական հոլովով պարագաներ են:

յ. Ներգոյական հոլովով—որինակ՝ Յերեվանում

եմ աշխատում, Այս ամսում հանգստանում եմ: Յերկու որում պլանը կատարեցի և այլն: Այս նախագասությունների մեջ Յերեմիան, ամսում և յերկու որում ներգոյական հոլովով պարզանք են:

Ներգոյական հոլովը պատասխանում է ուր, վերտեղ, չէր, թնշում, թնշ բանի մեջ հարցերին. որինակ՝ Բաղում աշխատեցի (ձեր): Յերեմիանում դպրոցներ կառուցեցի (վերտեղ): Յեմլու պայում կլիման մեղմ է (վերտեղ):

2. Ածական պարագաները—Տրամվայը լավ է աշխատում: Ներկարարը պատը կաբմիր ներկեց: Կարճ կապի և այլն: Այս նախագասությունների մեջ լավ, կարմիր և կարճ բառերը ածականներ են և գործածված են վորպես պարագա:

3. Դերանուն պարագաներ— որինակ՝ Նրանում նկատվում է շնորհ: Բեզանով հաղթեցին և այլն: Այս նախագասությունների մեջ նրանով և քեզանով դերանունները գործածված են վորպես պարագա:

4. Դերբայ պարագաները—որինակ՝ Վոգեվորված եր կարգում: Խոսելիս հոգնում ե: Աշխատելիս քրտնում ե: Հեզելով եր ընթերցում և այլն: Այս նախագասությունների մեջ վոգեվորված, խոսելիս և հեզելով բառերը դերբայներ են և գործածված են վորպես պարագաներ:

5. Մակբայ պարագաները—որինակ՝ Յերբեք չեմ մոռանա պաշարի աջն որերը: Այսուհետև կլինեմ առաջինը: Ամենուրեք լուսնուն և տիրում և այլն: Այս նախագասությունների մեջ՝ յերբեք, այսուհետև և ամենուրեք բառերը մակբայներ են, գործածված վորպես պարագա:

Գ. ԼՐԱՑՄԱՆ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Նախագասության գլխավոր անդամների (յենթակալի և ստորոգյալի) լրացումներն իրենք իրենց հերթին կարող են ունենալ իրենց լրացական բառերը, վորոնք կոչվում են լրացման լրացումներ:

IV	III	II	I
նեք. որինակ՝ Անթր քշեմու վրա Կարճակվող Կարմիր			
3	2	1	

ԲԱՆԱԿԸ ԳՐԱՎԵՑ ևրանց կարեվորագույն ամբսցներն ու

2 1
անալի բերքերը:

Այստեղ նախագասություն կազմող գլխավոր անդամներն են բանակ (յենթակա) և գրավեց (ստորոգյալ): Մյուս հոռեական թվանշաններով նշանակված բառերը բոլորը միասին լինում են յենթակալի լրացումներ, իսկ արաբական թվանշաններով նշանակված բառերը լինում են ստորոգյալի լրացումները:

Յենթակալի և ստորոգյալի այս լրացումները, ինչպես ցույց է տրված թե հոռեական և թե արաբական թվանշաններով, ունեն իրենց յերկրորդական, յերրորդական, չորրորդական և այլ լրացումները:

Այն լրացումները, վորոնք մեկից ավելի չեն և միևնույն համադր պաշտոն, միևնույն ֆունկցիան են կատարում լրացչալի հանդեպ, կոչվում են համագաս լրացումներ:

Լրացման լրացումներն իրենք ևս կարող են ունենալ իրենց լրացումները: Յեթե նախագասության գլխավոր անդամների անմիջական լրացումները համարենք առաջին լրացումներ, սրանց լրացումները կլինեն յերկրորդական լրացումներ, այս յերկրորդականի լրացումները կլինեն յերրորդական և այլն: Լրացման լրացումները իրար հանդեպ նույնպես կարող են կատարել այն ֆունկցիաները, ինչ ֆունկցիաներ կատարում են նախագասության գլխավոր անդամների անմիջական լրացումները, այսինքն կարող են լինել՝ բացահայտիչ, հատկացուցիչ, վորոշիչ և խնդիր ու պարագա, ինչպես՝

1. Բացահայտիչ—որինակ՝ Այժմ միայն գնահատում ենք Պուշկինին՝ Ռուսաստանի մեծագույն բանաստեղծին:

Ընդգծված բառերը Պուշկինին բացահայտիչ են, իսկ Պուշկինը գլխավոր նախագասության խնդիրն է:

2. Վորոշիչ—Կատողի գաղանը կերավ անմեղ լույսարներին՝ կանաչ մարդադեմոններում արածելիս: Այս նախագասության մեջ անմեղ՝ վորոշիչ և վոչխարների (խնդիր), կանաչ՝ վորոշիչ և մարդադեմոնների (պարագա):

3. Հատկացուցիչ—Ներկարարը ներկեց պատուհանի փեղկերը (խնդիր):

4. Խնդիր և պարագա—Ուսանողը սիրում էր իր դասերը սովորել ամեն օր: Այս նախագասության մեջ գլխավոր անգամներն են՝ ուսանողը (յենթակա) և սիրում էր (ստորոգյալ), իր դասերը սովորել ամեն օր՝ գառնում է խնդիր: Այդ խնդիր դարձած կապակցության դասեր բառը՝ խնդիր է գառնում:

սովորել զերբային, իր՝ հատկացուցիչ և դառնում դասեր բառին, իսկ ամեն ուր՝ ժամանակի պարագայն սովորել զերբայի:

2. ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Յենթակայի ու խնդիրների հետ ունեցած հարաբերությունը ստորոգյալները լինում են հետևյալ տեսակների՝

1. Ներգործական, չբեր յենթական գործողությունը կատարում է մի ուրիշ առարկայի վրա, այսինքն այդ առարկան յենթակայի գործողությունն ուղղակի կրում է իր վրա և դառնում է նրա որոշակի տեղը — կրողը: Ուրեմն ներգործական ստորոգյալները միշտ ունենում են ուղղակի խնդիր: Որինակ՝ Գալլը կերավ վոչխարը. գալլը (յենթակա), կերավ (ներգործական ստորոգյալ), վորովհետև գործողությունը կատարված է վոչխարի վրա, այսինքն վոչխարը դարձած է ուտելու որոշակի տեղ, ուստի վոչխարը դառնում է ուղղակի խնդիր: Ուսանողը գրեց նամակը: Տրակտորը հերկեց արտը: Ընդգծված բառերն ուղղակի խնդիրներ են:

Ներգործական կարող են լինել՝ ա. բաղմամբ պատկան կերպի բայեր. որինակ՝ Մազործը կտրատում է միսը. մազործ (յենթակա), կտրատում է (ստորոգյալ բաղմամբ պատկան), միս (ուղղակի խնդիր) և այլն: բ. Պատճառական կերպի բայեր. որինակ՝ Յես աշակերտին նստեցրի տեղը. յես (յենթակա), նստեցրի (ստորոգյալ պատճառաբանական), աշակերտին (ուղղակի խնդիր):

2. Չեղոք — Յերբ յենթական իր գործողությունը կատարում է առանց անմիջական առարկայի, որչեկտի, որինակ՝ Ձին վազում է: Սոխակը յերգում է: Կռքը գնում է և այլն:

Չեղոք կարող են լինել նաև բաղմամբ պատկան կերպի բայեր — որինակ՝ Թռչունը թռչկոտում է, կաշաղակը վոստովոտում է և այլն:

3. Կրավորական — յերբ յենթական ուրիշից իր վրա չեկրում գործողությունը. որինակ՝ Արամը ծեծվեց Գաբեգինից: Արամը (յենթակա), ծեծվեց (ստորոգյալ — կրավորական), Գաբեգինից (բացառական հղով անուղղակի խնդիր): Կրավորական կարող են լինել նաև պատճառական կերպի բայեր, որինակ՝ Գիրքը կարդացվեց աշակերտի կողմից և այլն:

Կրավորական կարող են լինել նաև բաղմամբ պատկան կերպի բայեր. որինակ՝ Միսը կտրատվեց մազործից:

Պատճառական կոչվում են այն ստորոգյալները, վորոնք ցույց են տալիս, թե յենթական ինքը չի կատարում գործողությունը, այլ միայն պատճառ է լինում, վոր մի ուրիշը կատարի: Պատճառական կերպի բայերն ունեն իրենց կազմության հատուկ ածանցներ — եցն, ցն, վորոնք մատնում են բաղմամբ և ել ու ալ լծորդության միջև: Այս ածանցները չեղոք բայերը ներգործական են դարձնում, իսկ ներգործական բայերը պատճառական են դարձնում:

Բաղմամբ պատկան կոչվում են այն ստորոգյալները, վորոնք իրենց մեջ պարունակում են գործողություն բաղմամբ պատկան կրկնության իմաստ: Բաղմամբ պատկանները նույնպես ունեն իրենց կազմության հատուկ ձև — ա. բաղմամբ պատկան կրկնություն, ինչպես՝ վոստովոտալ, վազվել, և այլն: բ. Ածանցումներ (ատ, ոտ, կոտ), վորոնք նորից մտնում են ել, ալ լծորդություններից առաջ և բայերը դարձնում են բաղմամբ պատկան: Որինակ՝ կտրատել, ցատկոտել և այլն:

Կրավորական ստորոգյալները նույնպես ունեն իրենց կազմության հատուկ ձև: Վ ածանցը, վորը նույնպես մտնում է ել, Ալ լծորդություններից առաջ և բալը դարձնում է կրավորական:

Բայերը նախադասության մեջ գործ են ածվում ա. դերբայական և բ. յեղանակային ձևով:

ա. Դ երբ ա յ ա կ ա ն բ ա յ եր — խոնարհման ժամանակ փոփոխություն չին կրում և կատարում են զանազան ֆունկցիաներ:

Ներկայիս մեր գրական լեզվի մեջ 7 տեսակ դերբայներ են գործածվում:

1. Անորոշ դերբայ — վերջանում է ել, Ալ վերջավորություններով և արտահայտում է գործողություն անորոշ, ընդհանուր գաղափար. որինակ՝ գրել, խոսել, կարգալ, ուրախանալ և այլն:

Նախադասության մեջ անորոշ դերբայը կարող է լինել յենթական, ստորոգյալ և լրացում. որինակ՝ Պետք է կարգալ (յենթակա): Այդ կարգալ չե (ստորոգյալ): Յես ուզում եմ կարգալ (խնդիր):

Անորոշ դերբայը գոյականաբար գործածվելիս առնում է վորոշիչ հոգե հոլովվում է, կատարում է զանազան ֆունկցիաներ. որինակ՝ Կարգալը զարգացնում է միտքը (կարգալը՝ յենթա-

վա): Կարգալու համար յեկա (կարգալու համար՝ նպատակի պարզա): Կարգալուց հոգեցի (կարգալուց՝ անուղղակի խնդիր): Կարգալով եմ անցկացնում որերս (կարգալով՝ չեղանակի պարագայ):

2. Անկատար դերբայ վերջանում է ու մ և ի ս վերջավորութուններով և ցույց է տալիս կատարման ընթացքի մեջ չեղող գործողութուն:

Ու մ վերջավորության դերբայները ոժանդակ բայերի հետ միանալով կազմում են բայերի չեղանակային ձև, վորոնք կատարում են ստորոգյալի ֆունկցիա. որինակ՝ գ ն ու մ ե մ, կ ա ռ դ ու մ ե մ, գ ն ու մ ե չ ի, կ ա ռ դ ու մ ե չ ի և այլն: Ի ս վերջավորությամբ դերբայները բացի՝ լ ա լ ի ս, գ ա լ ի ս, տ ա լ ի ս բառերից, կատարում են ընդհանրապես պարզային ֆունկցիա. որինակ՝ Կ ա ռ դ ա լ ի ս հիշեցի նրան, այսինքն՝ կարգալու ժամանակ հիշեցի նրան (կարգալիս՝ ժամանակի պարզա չե):

3. Ապառնի դերբայն ունի Ու, Ի ք (լու, լիք) վերջավորություն և ցույց է տալիս կատարվելիք գործողություն:

Ու (լու) վերջավորությամբ ապառնի դերբայները ոժանդակ բայերի հետ միանալով կազմում են բայերի չեղանակային ձևի ապառնի ժամանակները. որինակ՝ խ ո ս ե լ ու չ ե մ, կ ա ռ դ ա լ ու չ ե մ, կ ա ռ դ ա լ ու ե յ ի և այլն: Իսկ Ի ք (լիք) վերջավորության դերբայները արտահայտում են գոյականի իմաստը և կատարում են լրացումների ֆունկցիաները. որինակ՝ Յես ասելիք չունեմ (ասելիք՝ խնդիր): Նա անելիք շատ ունի (անելիք՝ նույնպես խնդիր): Ասելիք և անելիք շատ կան (ասելիք և անելիք չենթակա) և այլն:

4. Վաղակատար դերբայը վերջանում է ե լ վերջավորությամբ և ոժանդակ բայերի հետ միանալով կազմում է բայերի չեղանակային ձևը և ցույց է տալիս մի գործողություն, վոր ներկայի և մոտիկ անցյալի համեմատությամբ արդեն կատարվել վերջացել է. որինակ՝ Գ Ր ե լ ե մ, խ ո ս ե լ ե մ, կ ա ռ դ ա ջ ե լ ե մ և այլն: Վաղակատար դերբայը կազմում է վաղակատար ժամանակ:

5. Հարակատար դերբայը վերջանում է Ած վերջավորությամբ, ոժանդակ բայերի հետ միանալով կազմում է չեղանակային ձև և ցույց է տալիս մի գործողություն, վոր կատարվել վերջացել է ներկայի համեմատությամբ: Հարակատար դերբայը ոժանդակ բայի հետ կազմում է հարակատար ժամանակ. որինակ՝ գ Ր ա ծ ե մ, կ ա ռ դ ա ջ ա ծ ե մ և այլն:

Հարակատար դերբայը հաճախ կարող է գործածվել և վարպետ վորոշիչ. որինակ՝ Կարգացած գիրք: Չորացած ծառ: Քանդված տուն: Ծաղկած ծառ և այլն:

Հարակատար դերբայը յերբմն վ. և Բ ածանցներով և Ս, Դ ղիմորոշ հոգերով կազմում է գոյականներ. որինակ՝ գ Ր վ ա ծ ք, գ Ո Ր ծ վ ա ծ ք, թ խ վ ա ծ ք, գ Ր ա ծ ս, կ ա ռ դ ա ջ ա ծ ս, կ ե Ր ա ծ ս, գ Ո Ր ծ ա ծ ա ծ դ, կ ա ռ դ ա ջ ա ծ դ և այլն:

6. Յենթակայական դերբայը վերջանում է Ող վերջավորությամբ և ցույց է տալիս գործողություն կատարողը: Գործածվում է գոյականաբար և ածականաբար: Նախադասության մեջ կատարում է յենթակայի, ստորոգյալի և լրացման ֆունկցիաներ որինակ՝ Աշխատողը կապրի (յենթակա): Աշխատող մարդը կհաղթանակի դժվարությունները (աշխատողը՝ վորոշիչ): Նա լավ աշխատող է (աշխատող ե՝ ստորոգյալ) և այլն:

7. Ըղծական դերբայը ոժանդակ բայի ժխտական ձևի հետ միանալով կազմում է պայմանական չեղանակի ժխտական բնութթի խոնարհում. որինակ՝ չեմ գրի, չես գրի, չի գրի... չեմ կարգա, չես կարգա, չի կարգա...

Բ. Յեղանակային—Բ ա յ ե Ր ը չեղանակային ձևով գործածվելիս կրում են. 1. դեմքի, 2. թվի, 3. ժամանակի և 4. չեղանակի փոփոխություններ միասնության մեջ, վոր կոչվում է բայերի խոնարհում: Յեղանակային ձևով բայերը նախադասության մեջ միշտ կատարում են ստորոգյալի ֆունկցիա:

1. Դեմք—դեմքը չերեք ե՝ առաջին, չերկրորդ, չերրորդ: Բայը առաջին դեմքի յե, չերք խոսող անձն ինքն և գործողության յենթական. որինակ՝ գրեցի. գրեմ. կարդամ. գրելու յեմ. կարգալու յեմ. գրում եմ. կարդում եմ. պիտի գրեմ. կգրեմ և այլն: Այս նախադասությունների մեջ թե խոսողը և թե գործողություն կատարողը յես եմ. ուրեմն բայը առաջին դեմքի յե:

Բայը չերկրորդ դեմքի յի, չերք խոսակիցն ինքն և գործողության յենթական. որինակ՝ գրում ես, կարդում ես, գրեցիր, կարդացիր, գրելու յես, կարգալու յես, կարդացել ես, գրել ես և այլն: Այս նախադասությունների մեջ խոսակիցն ինքն և գործողություն կատարողը, բայց ինքը լսող է և վոչ թե խոսող, հետևաբար բայը լինում է չերկրորդ դեմքի:

Բայը չերրորդ դեմքի յի, չերք գործողության կատարողը այն անձնավորությունն է, վորի մասին խոսվում է. որինակ՝ գրեց, կարդաց, գրում է, կարդում է, գրել է, կարդացել է, գրե-

լու չե, կարգալու չե և ալլն: Այս նախադասութիւններն մեջ յենթական վոչ խոսողն ե և վոչ ել խոսակիցը, ալլ ալն անձնա-
վորութիւնն ե, վորի մասին խոսվում ե:

Դիմքերը հեշտութեամբ վորոշվում են անձնական դերա-
նուններով: Յեզակի՝ յես, ցուլց ե տալիս առաջին դեմք, դու՝
յերկրորդ դեմք, նա՝ յերրորդ դեմք: Հոգնակի - մենք՝ առաջին
դեմք, դուք՝ յերկրորդ դեմք, նրանք՝ յերրորդ դեմք:

2. Թիվ—Թիվը յերկու չե, յեղակի և հոգնակի: Բայը
յեզակի՝ յե, յերբ ստորոգյալի յենթական մեկ ե, հոգնակի յե՝
յերբ ստորոգյալի յենթական մեկից ավելի յե. որինակ՝ Յես
գրեցի. գրեցի՝ յեզակի չե, վորովհետեւ գրողը մենակ չես եմ:
Մենք գրեցինք. գրեցինք՝ հոգնակի չե, վորովհետեւ գրողը վոչ
թե մենակ չես եմ, ալլ մենք մի քանի ընկերներով:

3. Ժամանակ—Բայի արտահայտած ժամանակի գաղափարը
յերեք տեսակ ե լինում. ա. ներկա, վոր ցուլց ե տալիս խոսե-
լու վարկյանին կատարվող և դեռ չվերջացող գործողութիւնը
—որինակ՝ գրում եմ, կարդում եմ, գրում ես, կարդում ես, գը-
րում ե, կարդում ե և ալլն:

բ. Անցյալ, յերբ ցուլց ե տալիս խոսելու վարկյանից ա-
ռաջ արդեն տեղի ունեցած գործողութիւնը. որինակ՝ գրեցի,
կարդացի, գրեցիք, կարդաց և ալլն:

4. Ապառնի, յերբ ցուլց ե տալիս խոսելու վարկյանից հե-
տո կատարվելիք գործողութիւն. որինակ, կարդալու չեմ, կար-
դալու չես, կարդալու ելին, գրում ելիր, պիտի կարդամ, կկար-
դամ և ալլն: Ներկա ժամանակը, վորպես խոսելու վարկյան, ան-
բաժան ե, հետեաբար մի տեսակ ե միայն, մի հատ կարող ե ներ-
կա լինել: Անցյալն ու ապառնին կարող են մի քանի տարբեր
շրջանների բաժանվել, հետեաբար մի քանի տեսակ առցյալ և
մի քանի տեսակ ապառնի կարող են լինել, նախած գործողու-
թյան ավելի ուշ կամ ավելի վաղ կատարվելուն, որինակ՝ անց-
յալ—կարդացի, կարդացած եմ, կարդացել եմ, կարդացել եյի
և ալլն: Ապառնի կարդալու յեմ, պիտի կարդամ, կկարդամ,
կարդալու ելի և ալլն:

5. Յեղանակ—յեղանակը գործողութիւն կատարման կերպն
ե, ինչ ձևով, ինչ յեղանակով կատարվելը. որինակ՝ Յերբ ասում
ենք կարդում եմ, ցուլց ե տալիս, վոր չես իրոք կարդում եմ,
ինձ համար կամ ուրիշի համար, բայց յերբ ասեմ կկարդան,
նշանակում ե նույն կարգալու գործողութիւն կատարման կերպը,

ձեը փոխվեց: Հիմի արդեն վոչ թե իրոք կարդում եմ, ալլ յեն-
թադրում եմ, վոր հետո ամենայն հավանականութեամբ կկար-
դամ, իսկ յերբ ասեմ՝ կարդա, նշանակում ե կարգալու գործո-
ղութիւն կատարման կերպը նորից փոխվեց, հիմի արդեն չես
հրամայում եմ և կարգալու գործողութիւնը կատարում ե մի
ուրիշը:

Յեղանակները հինգ են. ա. սահմանական յեղանակ,
բ. հրամայական յեղանակ, գ. ըզձական յեղանակ, դ. պայմանական
յեղանակ և չե. հարկադրական յեղանակ:

ա. Սահմանական յեղանակը գործողութիւն կատարման
այն ձեւն ե, վոր խոսողը վճռականորեն հաստատում ե ստույգ,
իրական մի յեղելութիւն, ալսինքն ցուլց ե տալիս, վոր տվալ
գործողութիւնն այնպես, ինչպես նա կա, հաստատապես յեղել ե,
լինում ե, կամ լինելու յե: Որինակ՝ կարդում եմ, կարդացի, կար-
դացել եմ, կարդացել ելի, կարդալու յեմ, չեմ կարդում, չկար-
դացի, չեմ կարդացել, կարդալու չեմ և ալլն: Գործողութիւն կա-
տարման այս ձեւերը ցուլց են տալիս, վոր իրոք յուրաքանչյուր
տվալ գործողութիւնը կատարվել ե, կամ կատարվելու յե այն-
պես, ինչպես նա տրված, ասված կամ գրված ե: Այստեղ տա-
րակուսանքի, յենթադրութիւն վորեւե բան չկա ու չի կարող
լինել:

բ. Հրամայական յեղանակ—Հրամայական յեղանակը ցուլց
ե տալիս գործողութիւն կատարման այն կերպը, այն ձեւը, վոր
խոսողը հրամայում ե իր խոսակցին մի բան անել, կամ մի բան
լինել. որինակ՝ կարդա, գնա, ասա, կարդացեք, գնացեք, ասա-
ցեք և ալլն:

գ. Ըզձական յեղանակը գործողութիւն այն ձեւն ե, վորով
խոսողն արտահայտում ե իր ցանկութիւնը, փափագը, իղձը,
որինակ՝ Դրեա ընկերովդ վոր գա: Դայիւր այս գիրքը կարդա-
յինք և ալլն:

դ. Պայմանական յեղանակը գործողութիւն կատարման այն
ձեւն ե, վոր խոսողը պայմանական ե դարձնում իր ասածների
իսկութիւնը: Նա հաստատապես չի իմանում, ալլ յենթադրում
ե, վոր գործողութիւնը յեղել ե, լինում ե, կամ կլինի այնպես
ինչպես ինքն ե ասում. որինակ՝ յերբ ասենք նա կարդում ե,
իմանում ենք, վոր նա հաստատապես կարդում ե, բայց յերբ
ասենք նա կկարդա, մենք թեյական ենք դարձնում նրա կար-
դալը: Կարող ե պատահի, վոր իրոք նա կկատարի այդ գործո-

դուժյուհներ, այսինքն կարգա, բայց կարող ե պատահի վոր չկարգա:

յե. Հարկադրական չեղանակը գործողության կատարման ալն ձեւն ե, վորով խոսողը անհրաժեշտությունն ե համարում իր ասածների ճիշտ լինելը: Պայմաններից չեղնելով նա գտնում ե, վոր անհրաժեշտորեն պիտի լինի աշնպես, ինչպես ինքն ե չեղն-թաղում. որինակ՝ յերբ ասենք, նա կարգում ե, հաստատում ենք, վոր չեղնական իրոք կատարում ե ալն, ինչ ասում ենք, այսինքն՝ ճիշտ վոր կարգում ե, իսկ յերբ ասենք նա կկարգա, ենթադրում ենք, վոր չեղնական կարող ե կատարել ալն, ինչ ասում ենք. սակայն յերբ ասենք նա պիտի կարգա, մենք վորոշ հանգամանքներից չեղնելով չեղրակացում ենք, վոր չեղ-նական պարտավորված, ստիպված ե մեր ասած գործողություն-նը կատարելու, այսինքն նա հարկադրված ե կարգալու:

Հարկադրական չեղանակը գործողության կատարման ա-վելի մեծ հավանականություն ունի, քան պայմանական չեղանակը:

Բայերի այս հինգ չեղանակներից ամեն մեկը կարող ե ու-նենալ՝ ներկա, անցյալ ե ապառնի ժամանակները իրենց բոլոր ստորաբաժանումներով. որինակ՝ Սահմանական չեղանակը ունի՝ ներկա (կարգում ե), անցյալ (կարգացի), անցյալ վաղակատար (կարգացել եմ), հարակատար (կարգացած եմ), ապառնի (կարգա-լու յեմ) ե ալլն:

Հրամայական չեղանակն ունի միայն ներկա՝ կարգա, կար-գացեք ե ալլն:

Ըղձական չեղանակը՝ ապառնի (կարգամ), անցյալ (կկարգացի):

Պայմանական չեղանակը՝ ապառնի (կկարգամ), անցյալ կկար-գայի ե ալլն:

Հարկադրական չեղանակը՝ ապառնի (պիտի կարգամ), անց-յալ (պիտի կարգայի) ե ալլն:

Բայերի դեմքի, թվի, ժամանակի ե չեղանակի մասին ման-րամասնությունները տես—Ա. Ղարիբջան՝ Գերականություն:

ԸՆԹԵՐԿԱ ՆՈՒՅՈՒՆ

Կարգալ՝ Ա. Իսահակյանի «Հավերժական սերը», «Ապաետի սերը», «Աբու-Ալա-Մահարի» եջ՝ 281—306:

2. Տերյանի վոտանավորները եջ՝ 229—348:

Դասագիրքը՝ «Հայոց գրականության քրեստոմատիա» իննե-րորդ դասարան (Մկրյան, Սարգսյան):

Հրահանգներ ե վարժարկունքներ

Ինչպե՞ս ասում ե՝ հրահանգներն ու վարժարկունքները կա-տարվում են առաջն տետրակներում ե տարեվերջին ներկա-ցացվելու յեն ուղեկցեմա գաստուլյին ստուգելու ե գնահատա-կաններ նշանակելու համար:

1. «Ապաետի սերը» վոտանավորից ջոկել յերեք աշնպիսի նախադասություններ, վորոնց չեղնականները ունենան լրացում-ներ:

2. Կազմել ինքնուրույն վեց նախադասություն, վորոնցից յերկուսի չեղնականներն ունենան բացահայտիչ լրացումներ, յեր-կուսի չեղնականները՝ հատկացուցիչ լրացում ե յերկուսի չեղնա-կանները՝ վորոշիչ լրացում:

3. «Հավերժական սեր» վոտանավորի առաջին մասից ջոկել յերկու նախադասություն, վորոնց մեջ վորոշիչը վորոշյալից հե-տո դրված լինի:

4. Կազմել հինգ նախադասություն, վորոնց մեջ վորոշիչնե-րը լինեն ուղղական հոլովով, չորս նախադասություն, վորոնց վորոշիչները լինեն բացառական հոլովով ե հինգ նախադասություն, վորոնց վորոշիչները լինեն գործիական հոլովով գոյական տնուն-ներ ածականաբար գործածված:

5. «Աբու-Ալա-Մահարի»-ից ջոկել հինգ նախադասություն, վորի մեջ վորոշիչները լինեն ածականաբար գործածված դեր-բայներ:

6. Կազմել հինգ նախադասություն, վոր ունենան ուղղակի խնդիրներ ե հինգ նախադասություն՝ անուղղակի խնդիրներ:

7. Կազմել 8 նախադասություն՝ աեղի, ժամանակի, չեղա-նակի ե չափ ու քանակի պարագաներով, յուրաքանչյուրից յեր-կուական վերցնելով:

8. Հայցական, տրական, բացառական, գործիական ե ներ-գոյական հոլովներով պարագա ունեցող 10 նախադասություն կազմել-յուրաքանչյուրից վերցնելով յերկու նախադասություն:

9. Կազմել ութ նախադասություն՝ գոյական, ածական, դեր-բայ ե մակբայ խոսքի մասերից կազմված պարագաներով-վերցը-նելով յուրաքանչյուրից յերկու նախադասություն:

10. Կազմել հինգ աշնպիսի նախադասություններ, վորոնք ունենան լրացման լրացումներ:

11. Ներդրածական, չեղոք, կրավորական, բազմապատկական

և պատճառական բայերով կազմել յերկուական նախադասութիւնս:

12. Վերլուծել «Ասպետի սերը» վոտանավորի առաջին և յերկրորդ տները:

ԿՈՆՏՐՈԼ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Լրացական բառեր ասելով ի՞նչ եք հասկանում:

2. Վորո՞նք են յենթակայի լրացումները և ի՞նչպէս են նշանք համաձայնվում ու կապակցվում յենթակայի հետ:

3. Վորո՞նք են ստորոգյալի լրացումները և ի՞նչպէս են համաձայնվում ու կապակցվում ստորոգյալի հետ:

4. Լրացման լրացում ասելով ի՞նչ եք հասկանում:

5. Վորո՞նք են ստորոգյալի տեսակները և բացատրել լրիվ որի՞նչակներով:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 3

ՄՇԱԿՄԱՆ ՊԼԱՆԸ

1. Բառերի կապակցությանն ձեռքեր.
2. Հոլովները, նրանց գործածությունը յեվ կատարած Ֆունկցիաները նախադասության մեջ.
3. Կապերը յեվ նրանց նշանակությունը.
4. Մի բառի կապերի գործածությանն ձեռքեր.
5. Հոդեր յեվ նրանց գործածությունը.
6. Շաղկապները, նրանց տեսակները յեվ գործածությանն ձեռքեր.
7. Համաձայնություն.
8. Շարադասություն.
9. Ընթերցանություն.
10. Հրահանգներ ու վարժություններ.
11. Կոնտրոլ աշխատանք.

1. Բառերի կապակցությանն ձեռքեր

Նախադասութիւնը կազմված է բառերից: Բառերը իմաստունացող ամենափոքր միավորներն են լեզվի մեջ, նրա որդանիզմի բջիջներն են, վորոնք զանազան ձեռքերով իրար հետ կապակցվելով ու շարահյուսվելով կազմում են նախադասութիւններ:

Բառերն իրար հետ կապակցվում են՝ 1. հոլովներով, 2. կապերով, 3. համադասական շաղկապներով, 4. համաձայնությամբ և 5. շարադասությամբ:

Կապակցության այս ձեռքերը վրջ միայն բառեր միացնելու

շաղախի դեր են կատարում, այլ յուրաքանչյուր փոփոխությունով մի նոր կոմբինացիա յեն կատարում և նոր ֆունկցիա յեն տալիս բառերին:

Կապակցության այս ձևերը չափազանց բարդ ու նուրբ են, այդ պատճառով ել լեզվագիտության մեջ խորանալով միայն հընարավոր կլինի թափանցել նրանց նրբությունների մեջ:

Մեզ մնում է միայն հիմնական գծերով կանգ առնել կապակցության այս ձևերի վրա առանձին-առանձին:

2. Հոլովներ, նրանց գործածությունը յեվ կատարած ճանկցիաները նախադասության մեջ

Գոյականների կամ գոյականաբար գործածվող բառերի վերջավորությունների փոփոխությունները, վորոնցով արտահայտվում են բառերի կապակցությունն ու ֆունկցիաները նախադասության մեջ՝ կոչվում են հոլովում:

Այդ ձևերի փոփոխությունները հիմնականում կատարվում են մի քանի ընդհանուր և յուրահատուկ ձևերով, վորոնցից յուրաքանչյուրն առանձին կոչվում է հոլով:

Գրաբարում հաշվել են 10 հոլով՝

1. Ուղղական (անվանական).
2. Սեռական (ստացական).
3. Տրական (տվողական).
4. Հայցական.
5. Բացառական (սռաքական).
6. Պայմանական (ճառողական).
7. Գործիական.
8. Պարառական.
9. Ներդրական.
10. Կոչական (հոլովական).

Սակայն, ինչպես բոլոր գիտությունները, նույնպես և քերականությունը, պարզացման ընդհանուր որենքով, աստիճանաբար կատարելագործվում ու բլուրեղանում է: Ներկայիս մեր գրական լեզուն ունի 7 հոլով՝ 1. ուղղական, 2. սեռական, 3. տրական, 4. հայցական, 5. բացառական, 6. գործիական և 7. ներգոյական:

1. ՌԻՂՂԱԿԱՆ ՀՈՂՈՎՆ առարկաների ու գաղափարների անունները վերցնում է առանց նրանց վերջավորությունների փո-

փոխության, ուղղակի այնպես, ինչպես նրանք կան. որինակ՝ մարդ, անասուն, բույս, քաջություն, յիս, դու, նա և այլն:

Նախադասության մեջ ուղղական հոլովով վերցրած բառերը կարող են կատարել՝

1. Յեն թակայի ֆունկցիա, որինակ՝ Սուրբիկը կարդում է: Աշակերտը սովորում է: Սոխակը յերգում է: Ծաղիկը բույս է: Տրակտորը վարում է: Արամն ոգնեց ինձ: Գրիշան գնաց թիֆլիս: Քամին փչում է: Ծովն ալեկոծված է և այլն:

2. Կողմնակի յեն թակայի ֆունկցիա, վոր դերբայների հետ գործածվելով նրանց յենթակալի իմաստ է տալիս, որինակ՝ Քաբերը պայթեցնելիս ձայներ եմ լսում: Բանակը շարժվելուց առաջ՝ լավ նախապատրաստիր նրան: Նա դեռ չեկած՝ մենք հասանք: Մինչև լուսը բացվելը՝ պահակ կանգնեցինք, իսկ լուսը բացվելիս՝ նոր քնեցինք և այլն:

Այս նախադասությունների մեջ դերբայներն իրենց լրացումների հետ միասին կարող են պարագա կամ անուղղակի խընդիր լինել, բայց յերբ դերբայի և իր լրացումի փոխարարբություն վերլուծման անցնենք կտեսնենք, վոր այդ դերբայների լրացումներին յենթակաների իմաստ է տրվում. որինակ՝ Քարերը պայթեցնելիս. ինչքը պայթեցնելիս. քարերը և այլն:

Հաճախ այս կողմնակի յենթակաները սեռական հոլովով են գործածվում. որինակ՝ Բանակի շարժվելուց առաջ լավ նախապատրաստիր նրան: Մինչև լուսի բացվելը պահակ կանգնեցինք և այլն:

3. Ստորոգյալի ֆունկցիա—Ոժանդակ բայերի հետ, որինակ՝ Սուրբիկը աշակերտ է: Սոխակը թռչուն է: Տրակտորը մեքենա յէ: Ծաղիկը բույս է և այլն:

4. Բացահայտիչի ֆունկցիա—Որինակ՝ Տեխնիկումի դիրեկտոր՝ ընկ. Սարգսյանը՝ լավ է աշխատում:

5. Կոչականի ֆունկցիա—Որինակ՝ Սուրբիկ, արի գնանք: Ընկերներ, այսոր մենք տոնում ենք մալիսի 1-ը: Կեցցե, մեր հաղթանակը և այլն:

6. Վորոշիչի ֆունկցիա—Որինակ՝ Քար սիրտ: Վոսկի մատանի: 50 մետր կտոր: 6 կիլոմետր ճամբա: 40 գուլլ գինի և այլն:

7. Վորոշիչի լրացման ֆունկցիա որինակ՝

Քիթը ծուռ մարդ: Վոտքը կաղ վռնաբար: Ծաւատը պինդ մարդ: Մաղերը խառնված աղջիկ և ալլն:

2. ՍԵՌԱԿԱՆ ՀՈՒՆՎԸ ցույց է տալիս մի առարկա, վորին վերաբերում, պատկանում և մի ուրիշ առարկա. որինակ՝ Դպրոցի դուռը բացվեց: Ծառի ճյուղը կոտրվեց: Արամի գիրքը կորավ և ալլն: Այս յերեք նախադասությունների մեջ դպրոցի, ծառի, և Արամի բառերը սեռական հոլով են և ցույց են տալիս վոր դուռը, ճյուղը, գիրքը պատկանում և նրանց:

Նախադասության մեջ սեռական հոլովը կարող է կատարել հետևյալ ֆունկցիաները:

1-ին. Հատկացուցչի ֆունկցիա.

ա. Յերբ պատկանելիութուն և ցույց տալիս, որինակ՝ Սենյակի պատուհան: Վարդի տերև: Թռչունի թիվեր: Արեւի շողեր: Սեղանի վոտքեր և ալլն:

բ. Յերբ ամբողջի մասնիկն և ցույց տալիս—որինակ՝ Զրի կաթիլ: Հացի կտոր: Հրդեհի կայծ: Ժայռի փշրանք: Քարի մասնիկ և ալլն:

գ. Յերբ տվյալ առարկայի ինչ նշութից կազմված լինելն և ցույց տալիս, որինակ՝ Ծաղիկն երի փունջ: Ծառերի անտառ: Քարերի կույտ: Փայտերի դեզ և ալլն:

դ. Յերբ առարկայի տեղի հանգամանքն և ցույց տալիս, որինակ՝ Գետի ջուր: Դաշտի խոտ: Սեղանի գիրք: Փողոցի բազմութուն: Պատի նկար: Անկյունի արձան: Նավահանգստի նավ: Ներսի հայելի: Վերի հարկ: Կողքի մարդ և ալլն:

յ. Յերբ առարկայի առաջացման ժամանակն և ցույց տալիս, որինակ՝ Աշնան վար: Դարնան ցել: Ամառվա շոգ: Զամեռվա ցուրտ: Այս ուրվա գործ: Աշնան արեւ: Դարնան ձիծեռնակ: 14 թվի պատերազմ: Մեկ ամսվա աշխատանք: Դիշերվա հանգիստ: Ծաղվա քուն և ալլն:

զ. Յերբ առարկային վորակի ու հատկության իմաստ և տալիս—որինակ՝ Դործի մարդ: Զեռքի աշխատանք: Վոտքի հարված: Քամու ջրաղաց: Զիռ ճանապարհ: Ուտելու հաց: Խմելու ջուր: Դինու բաժակ և ալլն:

է. Յերբ չափի, քանակի, տարիքի, աստիճանի ու արժեքի իմաստ և տալիս—որինակ՝ 5-րդ դասարանի աշակերտ: Քսան տարվա պատմութուն: Հարյուր ութուկ վերարկու: Բարձր աստիճանի տաքու-

թյուն: Մի հասակի ընկերներ: Լավ բնավորության մարդ և ալլն:

3. ՏՐԱԿԱՆ ՀՈՒՆՎԸ ցույց է տալիս մեկին մի բան տալ, դիմել, հանգել, որինակ՝ Աշակերտներին գիրք տվի: Թըռչուններին կերակրեցի: Սեղանին մոտեցա: Դիրեկտորին դիմեցի: Յեզրակացության հանգով: Նպատակին հասավ և ալլն:

Նախադասության մեջ տրական հոլովը կատարում է հետևյալ ֆունկցիաները.

1-ին. Անողղակի խնդրի ֆունկցիա.

ա. Յերբ շարժում, հանգում և ցույց տալիս. որինակ՝ Դպրոցին մոտեցա: Միլիցիային դիմեցի: Ողաչուններն աշխատանքի անցան: Պատերազմի զնացին: Բանակցելու լուսեկավ: Խորհրդակցութան հավաքվեցին և ալլն:

բ. Յերբ պատկանելիութուն և ցույց տալիս. որինակ՝ Հաբեվանին մի յերեխա չեղավ: Մեր տանը նոր դուռ բացինք:

գ. Յերբ ժամանակ և ցույց տալիս. որինակ՝ Նոյեմբերին աշնանացանը պիտի վերջացնենք: Մարտին զարնանացանը պիտի սկսենք: Փետրվարին գործիքների նորոգումն ենք կատարում: Կեսուրին վերադարձա և ալլն:

դ. Յերբ արժեքն և ցույց տալիս. որինակ՝ 50 ուրբուլ գնեցի: Վեց մահեթի ծախեցի և ալլն:

2-րդ. Պարագայի ֆունկցիա.

ա. Յերբ տեղն և ցույց տալիս—որինակ՝ Դիլիսին խփեց: Դետնին քնած եր: Մեջքին կապած եր: Աչքերին դրեց հեռադիտակը: Կողքին կապեց ատրճանակը: Դռանը նստեց: Յերեսին քսեց և ալլն:

բ. Յերբ ժամանակն և ցույց տալիս—որինակ՝ Այս շոգին ման գալ չի լինի: Դասամիջոցին հավաքվեցինք: Դարնան ցանեցինք: Ամռանը հնձեցինք: Հոկտեմբերյան տոնի շքերթին մասնակցեցինք: Մալիսի մեկին հանդիսավոր նիստ գումարեցինք: 3-րդ դասին պրակտիկայի դրնացինք և ալլն:

4-րդ. Վորոշիչի լրացման ֆունկցիա—որինակ՝ Յերաժշտության համար գործիք չունենք: Հերկելու պատրաստ արակտորներ կան: Դովասանքի արժանի մարդ ես: Յերաժշտության սիրահար մարդ ես:

4-րդ. ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈՂՈՎԸ ցույց է տալիս այն առարկան, վորի վրա կատարվում է գործողութունը. որինակ՝ Բանվորները շինեցին հիդրոշենը: Պարտիզպանը ջրում է ծաղիկները: Փայտահատը կտրեց ծառը: Սեղրակը ծեծեց Յերվանդին: Դերեկտորը հրավիրեց ուսուցիչն և խնայ:

Նախադասության մեջ հայացական հոլովը կարող է կատարել հետևյալ ֆունկցիաները.

1-ին. Ուղղակի խնդրի ֆունկցիա—որինակ՝ Այգեպանը խնամում է այգին: Մարդը հերոսութուն է անում: Հյուսնը մի նոր սեղան շինեց: Թռչունը ցորեն է ուտում: Վոչխարը խոտ է ուտում: Շունը կրծում է վոսկոբը և այլն:

2-րդ. Պարագայական լրացման ֆունկցիա. Յերբ տեղի է ցույց տալիս—որինակ՝ Յես գնացի Բագու: Աշակերտը գնաց դպրոց: Հասա Յերեվան: Բարձրացավ կտուրը: Նստավ պատի տակ:

Բ. Յերբ ժամանակ է ցույց տալիս. որինակ՝ Վաղը գնալու լիմ: Մինչև հունվար Յերեվանում կապրեմ: Մինչև մարտ գործիքները կպատրաստենք:

գ. Յերբ գործողության չափը կամ քանակն է ցույց տալիս—որինակ՝ Պատերը հինգ մետր շարեցին: Տասը լիտր կշռեցին: Հինգ կիլոմետր վազեցին: Յոթ չափեր, մեկ կտրիր: Յերեք անգամ գնաց յեկավ և այլն:

5. ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈՂՈՎ—ցույց է տալիս գործողության սկզբնական, յեկման կետ, այսինքն այն վայրը, տեղը, այն կետը, վորից սկսում, ծագում, առաջ է գալիս գործողութունը—որինակ՝ Սարից ջուր է գալիս: Գործարանից մեքենաներ բերինք: Պահեստից ալյուր տարանք: Գետից ջուր վերցրինք: Յերեվանից մեկնեց գնացքը: Ծաղիկներից փնջեր կապեցինք: Յորենից ալյուր ստացանք և այլն:

Նախադասության մեջ բացառական հոլովը կարող է կատարել հետևյալ ֆունկցիաները՝

1-ին. Անուղղակի խնդրի ֆունկցիա.

ա. Յերբ ցույց է տալիս այն առարկան կամ տեղը, վորից հեռանում է մի բան—որինակ՝ Տնից հեռացա 24-ին: Ձեզանից բաժանվեցի լեռնի ժամը 5-ին: Նա պաշտոնից հրաժարվեց: Յես ազատվեցի այն խոնավ տնից: Դպրոցից յեկավ տուն և այլն:

բ. Այն առարկան, վորից առաջանում, գոյանում է մի բան. որինակ՝ Վատակներից կազմվում են գետեր: Վարդենուց սացվում է վարդ: Շաքարից գոյանում է սպիրտ և այլն:

գ. Այն ամբողջութունը, վորից վերցվում է մի կտորը, մասը, չափը կամ քանակը, վորոշիչով կամ առանց վորոշիչի—որինակ՝ Հացից մի կտոր վերցրի: Այս խաղողից մի վողկույզ ինձ տուր: Պարտեզի ծառերից լեռնու փոքրիկը կտրեցի: Մեզանից հինգ հոգի գնացին և այլն:

դ. Գործողության պատճառը, շարժառիթը—որինակ՝ Քամուց տերևները խշշում են: Անձրևից թրջվեցին: Ցրտից սառեցին: Լավ ընկերոջ քերեսից վնաս չեն կրում: Լավ վարպետի ձեռքից ամեն ինչ գալիս է: Ուրախութունից չգիտեր ինչ անել: Վշտից կռացավ, դարձից չորացավ և այլն:

լե. Յերբ արտաքինի մի հատկանիշ է ցույց տալիս—որինակ՝ Ձայնից ճանաչեցի: Գույնից, հոտից ու համից կարելի է ջոկել զանազան դեղորայք: Աչքերից կիմանա նրա ու լինելը և այլն:

զ. Յերբ ցույց է տալիս այն առարկան, վորի համար, մասին, վրա մի բան պատմվում է—որինակ՝ Մայիսյան ապըստամբութունից պատմիր: Քո աշխատանքից խոսիր: Հինգ թվի դեպքերից պատմիր և այլն:

2-րդ. Վորոշիչի ֆունկցիա—յերբ նյութ կամ տեսակ ցույց կտա—որինակ՝ Մորթուց զլխարկ: Բրդից վերմակ: Բամբակից թի: Պլատինից գրիչ: Պողպատից գործիք և այլն:

3-րդ. Պարագայի ֆունկցիա—որինակ՝ Անտառից անցավ: Ներքեվից յեկավ: Ականջից քաշիր: Վերևից անցավ: Առջևից բարձրացավ և այլն:

6-րդ. ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈՂՈՎԸ ցույց է տալիս այն առարկան, վորի միջոցով, ոժանդակութամբ կամ վրայով կատարվում է գործողութունը—որինակ՝ Սղոցով կտրում է: Ուրագով տաշում է: Կոլխոզնիկներով կատարեցի: Գետով անցա: Ընկերոջս ոժանդակութամբ կատարեցի պլանը և այլն:

Նախադասության մեջ գործիական հոլովը կարող է կատարել հետևյալ ֆունկցիաները՝

1-ին. Անուղղակի խնդրի ֆունկցիա.

Յերբ ցույց է տալիս գործիք, միջոց, մատերիալ—որինակ՝ Ուրագով տաշում է: Մեքենայով կտրում է: Այն բո-

պլանով թուշում են: Յեղիաթուղով գնում են: Մեխերով և տախտակներով շինեցին: Գաջով ձեփեցին: Զանազան գույններով ներկեցին: Նրա ձեռքով գրված ե այս գրութունը: Քոմիջոցով կատարեցի: Յերեխաները խոսում են մեծի բերանով և այլն:

2-րդ Պարագագի Փուլնկցիա—

ա. Յերբ գործողության ընթացքի հետ կապված տեղն է ցույց տալիս—որինակ՝ Ամբողջ ժամանակ անտառով ելինք անցնում: Կամ ուրջով անցանք: Գետի չերկարությամբ ենք գնում: Ծովով ճանապարհորդեցինք: Պատով բարձրացա: Յամաքով վերադարձա և այլն:

բ. Յերբ գործողության ժամանակն է ցույց տալիս—որինակ՝ Տարիներով սպասեցի: Որերով քաղցած մնացի: Ժամերով կարդում ե: Բուպեներով հաշվում եմ զարկերակը: Սեզոնով սենյակ եմ վարձել և այլն:

գ. Յերբ հիմունք և պատճառ է ցույց տալիս—որինակ՝ Դերեկտորի կարգադրությամբ ընդունեցին գործի: Մեղադրական տվյալներով դատապարտվեց չարագործը: Վառողի պաթյունով քանդվեց շենքը: Ձեր թույլտրվությամբ գնացի: Քոխոսքով արի և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այսպիսի նախադասություններում հաճախ ուղղակի գրում են հետևյալ բառերը՝ հիմունքով, պատճառով, շնորհիվ, պատրվակով, առիթով, նպատակով, նկատմամբ, վերաբերմամբ և այլն: Սրանցից առաջ գրված բառերը սեռական հոլովով են գործածվում, որ՝ Դերեկտորի կարգադրության շնորհիվ ընդունեցին: Մեղադրական տվյալների հիմունքով դատապարտվեց չարագործը և այլն:

դ. Յերբ գործողության չեղանակն է ցույց տալիս—որինակ՝ Խզով խոսի: Յեռանդով աշխատիր: Ազնվությամբ մոտեցիր: Հոգատարությամբ կատարիր: Բարձր ձայնով սկսիր: Արագ կերպով վերջացրու: Հրաշալի տոնով չերգեց: Միգլխով բարձրացավ: Յես իմ կամքովն եմ գալիս: Ամթիվ մնացինք: Մեղուն տղալով մոտենում ե ծաղիկներին և այլն:

յե. Յերբ գործողության չափը, քանակն է ցույց տալիս—որինակ՝ Բանակն իր ամբողջ կազմով մեկնեց ճակատ: Գործարանն իր ամբողջ սարքով պատրաստ ե: Կոլխոզնիկներն

իրենց մեծ ու փոքրով հունձի դուրս յեկան: Թուշունները յերամներով չվեցին: Հազարներով հաշվել: Տասնյակներով բաժանել: Լիդերերով տալ: Կիլոններով բաշխել: Կիլոմետրերով վաղել և այլն:

3-րդ. Վորոշիչի Փուլնկցիա—Յերբ առարկայի վորակն ու հատկությունն է ցույց տալիս—որինակ՝ Համով կերակուր: Կաթնով կով: Թանով սպաս: Ծնորքով աշակերտ: Տարիքով ծերունի: Վորակով ապրանք: Ծաղիկներով փունջ: Քացախով կերակուր և այլն:

4-րդ. Վորոշիչի լրացման Փուլնկցիա—որինակ՝ Ներկերով քսված կին: Յորենով լեցուն պահեստ: Գուշներով խայտադետ վարագույր: Քաջագործություններով նշանավոր ուղմիկը: Կենցաղով չարքաշմարդը: Վարքով որինակելի աշակերտը և այլն:

5-րդ. Կապի լրացման Փուլնկցիա—որինակ՝ Տարածությամբ հեռու: Սրտով մոտ: Ընտանիքով հանդերձ: Անունով բարձր և այլն:

7-րդ. Ներժողութունի ՀՈՒՄՈՒՐ ցույց է տալիս այն տեղը կամ առարկան, վորոնց մեջ կատարվում է գործողությունը—որինակ՝ Թատրոնում ներկայացում տվին: Քաղաքում շինվում են գործարաններ: Դպրոցում սովորում են աշակերտներ: Հանդում աշխատում են կոլխոզնիկները և այլն:

Ներգույական հոլովը նախադասության մեջ կատարում է հետևյալ ֆունկցիաները.

1-ին. Պարագագի Փուլնկցիա.

ա. Յերբ տեղ է ցույց տալիս—որինակ՝ Յերեվանում գիշերեցի: Բագովում աշխատում ե: Թիֆլիսում ծառայում եմ: Ալերոդում թռիչքներ են կատարում: Յերկընքում աստղեր են փայլում: Պարտիզում ծաղիկներ են բուսնում: Ֆրանսերենում անկանոն բայեր շատ կան: Ռուսերենում հոլմսներն են դժվար և այլն:

բ. Յերբ ժամանակն է ցույց տալիս—որինակ՝ 1-ին հընգամյակում մեր չերկիրը դարձրինք ինդուստրիալ չերկիր: 2-րդ հնգամյակում վերացնում ենք դասակարգերը: Ի՞նչ կյանքում հիվանդութուն չեմ տեսել: Քսան որում կըվերջացնեմ գործս և այլն:

3. Կապերը և նրանց նշանակությունը

Կապեր կոչվում են այն բաները, վորոնք կապում են նախադասութեան լրացնող անդամը լրացյալի հետ: Այն բաները, վորոնք կապերի միջոցով կապվում են ուրիշ բաների հետ, կոչվում են կապի լրացում—որինակ՝ Ուսանողների համար հանրակացարաններ շինեցինք: Ընկերոջս հետ քաղաք գնացի: Այս յերկու նախադասութիւնների մեջ համար և հետ բաները կապեր են, իսկ ուսանողների և ընկերոջս բաները նրանց լրացումներն են:

Նախադասութեան մեջ կապն ու լրացումը միասին են վերցվում, վորպէս նախադասութեան անդամ—որինակ՝ Ուսանողները դասախոսի հանդեպ մեծ համակրանք ունեն: Դասախոսի հանդեպ միասին դառնում են ստորոգյալի անուղղակի խնդիր:

Կապերը լրացնում են հոլովների պակասը և կարող են փոխարինել հոլովներով կամ յերբեմն ել ուղղակի կարող են դուրս գցվել նախադասութիւնից առանց նրանց միտքը ազաւաղելու—որինակ՝ Աշակերտների հետ գնացինք եքսկուրսիայի: Կարելի չէ ասել՝ Աշակերտներով գնացինք եքսկուրսիայի, կամ Յերեւանից մինչև Թիֆլիս յերկաթուղով գնացինք, կարելի չէ ասել՝ Յերեւանից Թիֆլիս յերկաթուղով գնացինք:

Կապերը լինում են յերկու տեսակ՝

ա. Նախադրութիւններ և հետադրութիւններ:

Նախադրութիւններ կոչվում են այն կապերը, վորոնք դրւովում են իրենց լրացումներից առաջ: Յեթե այդ լրացումները ունենան իրենց լրացումները, նախադրութիւնները դրւում են այդ լրացումներից առաջ—որինակ՝ Առանց բանվորի այս շենքը չի կառուցվի, նախադրութիւնը (առանց) դրւած է իր լրացումից (բանվորից) առաջ, իսկ յերբ ասենք՝ Առանց հարվածային բանվորների այս շենքը չի կառուցվի, այստեղ նախադրութիւնը (առանց) դրւած է բանվորի լրացումից (հարվածային) առաջ:

Մեր ներկայիս գրական լեզվի մեջ գործածվում են հետեւյալ նախադրութիւններ—առանց, բացի, դեպի, մինչև, իբրեւ և այլն:

Բացի այս նախադրութիւններից յերբեմն գործածվում են և գրաբարից մնացած հետեւյալ նախդիրները՝ Ի, Ա, Ռ, Յ, Ը Ս Տ, Ը Ն Դ. Որինակ՝ Առանց ուսուցչի չեմ կարող պարապել: Բացի քեզանից մյուսներն ել թող գան: Նամն ուղղեցինք դեպի Ուղեսաւ: Մինչև թիֆլիս կառքով գնացինք: Իբրեւ որինակ

ենք գործածում ձեր աշխատանքը: Վորպէս մարդ պետք է ապրել: Ի կարգադրութիւն (ավելորդ է Ի տառից հետո մակալետ գործածել ()): Առ 1-ն հունվարի: Յետադրութիւն: Յկարգադրութիւն: Ըստ տվյալների Ըստ փաստերի: Ընդ սմին և այլն:

Հետադրութիւն կոչվում են այն կապերը, վորոնք գրվում են իրենց լրացումներից հետո:

Ներկայումս գործածվող գլխավոր հետադրութիւններն են՝ մասին, նկատմամբ, առթիվ, հանդեպ, համար, համաձայն, համեմատ, հանդերձ, շնորհիվ, դատ, ի վեր և այլն, որինակ՝ Գործարանի մասին պիտի խոսեմ: Ձեր դիրեկտորին կատմամբ ասելիք ունիմ: Այդ խնդրի առթիվ շատ բան չունիմ ասելու: Աշակերտների հանդեպ մանկավարժական վերաբերմունք պետք է ցուցց տալ: Դերեկտորի կարգադրութեան համաձայն դու Թիֆլիս պիտի գնաս և այլն:

Բացի այս հետադրութիւններից կան նաեւ մի շարք բաներ, վորոնք հաճախ կապի դեր են կատարում և գործածվում են վորպէս հետադրութիւններ: Այսպիսի կապերը կոչվում են՝ աւակաւան կապեր:

Անիսկական կապեր են՝

ա. Բոլոր տեղի անունները, ինչպէս՝ տեղ, մեջտեղ, կողմ, շուրջ, դես, դեն, առաջ, հետեւ, դիմաց, դեմ, վրա, վար, տակ, վերեւ, ներքեւ, դուրս, ներս և այլն:

բ. Ժամանակի անուններից—առաջ, հետո, ժամանակ, ատեն և այլն:

գ. Մի շարք ածականներ՝ նման, պէս, համեմատ, տարբեր, զատ, ջուկ, մոտ, հեռու, հակառակ և այլն:

դ. Մի շարք գոյականներ՝ հետ, չափ, պատճառով, փոխանակ, փոխարեն, ձեռքով և այլն:

4. Մի Եւրոպական գործածութեան ձեւերը

1. ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ՆԱԽԴԻՐՆԵՐ

ա. Առանց—Ստանում է տրական, յերբեմն ել հաջորդական հոլովով լրացումներ—որինակ՝ Առանց բնակարանի դժվար է ապրել: Առանց արդյունաբերութեան գյուղատնտեսութիւնը զարգանալ չի կարող: Առանց բանակի

յերկրի սահմանները պաշտպանել հնարավոր չէ: Առանց քեզ գնալ չեմ կարող: Առանց ծառ պարտեզ չի լինի: Առանց ջուր գետ չի լինի և այլն:

բ. Բացի — ստանում ե բացառական, յերբեմն ել հայացական հոլովով լրացումներ—որինակ՝ Բացի դասատուները իր ցմուսները կարող են գնալ: Բացի թթենի ծառերից մյուս բոլոր ծառերը սրսկված են մեր պարտեզում: Բացի այս դեռ շատ բաներ ունիմ ասելու: Բացի այդ դեռ ստանալիք ունիս: Բացի պարգեվատրվելը եքսկուրսիա ել գնացել և այլն:

գ. Դեպի—ստանում ե հայացական հոլովով լրացումներ—որինակ՝ Դրիշան գնում ե դեպի քաղաքը: Նավը մեկնեց դեպի Ամերիկա: Նավավարը նայեց դեպի հյուսիս: Նա գալիս ե դեպի մեզ: Դու յեկար դեպի ինձ: Նա ձեռք մեկնեց դեպի քեզ և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Դեպի նախադրությունը յերբ իր լրացումից հետո ունենա կողմ բառը, հաճախ լրացումը լինում ե սեռական հոլովով: Որինակ նայեցի դեպի ծովի կողմը: Յերեսս դարձրի դեպի արեւելքի կողմը: Նավը գնում ե դեպի արեւմտքի կողմը և այլն:

դ. Մինչև ստանում ե հայացական, յերբեմն ել տրական հոլովով լրացումներ—որինակ՝ Յերեվանից մինչև Բաղու գնացքով գնացի: Այնտեղանով գնացի մինչև Թիֆլիս: Ռուսաստանում մինչև Հոկտեմբեր ցան հեղափոխությունը տիրում եյին Ֆեոդալական կարգերի մնացորդները: Մինչև 20-րդ դարը մի շարք գյուղացիական ապստամբություններ են լեղել: Հիվանդը մինչև 40 աստիճանի տաքություն ունի: Մինչև 100 մարդու բանկետ կազմակերպեցին և այլն:

յե. Իբրեւ ստանում ե հայացական, յերբեմն ել տրական հոլովով լրացումներ—որինակ՝ Իբրեւ արծիվ սլանում ե: Իբրեւ հերոս կռվում ե: Իբրեւ մարտիկ նահատակվեց: Իբրեւ քարտուղար անգնահատելի աշխատող ե: Իբրեւ հաշվապահ կոպեկ չարժե: Իբրեւ հարվածային պարգևատրվեց: Իբրեւ լավ աշխատողի սիրում են նրան և այլն:

Նախդիրներից—ա) Ի, Ա, Ռ, Յ շատ քիչ են գործածվում և դրվում հայացական հոլովի հետ—որինակ՝ Ի պատասխան ձեր գրության: Ի գործադրություն: Ի կարգադրու-

թյուն: Ի ցույց դնել և այլն: (Զայնավորներից առաջ Ի նախդիրի փոխարեն գործածվում ե Հ, որինակ—Հանուն հեղափոխության: Հանուն մեր հաղթանակի: Հանուն մեր հաջողության և այլն): Առ 15-ն մայիսի: Առ 1-ն հունվարի: Քայլ առ քայլ: Կաթիլ առ կաթիլ: Յերես առ յերես: Բառ առ բառ: Կես առ կես և այլն: Յաեսություն: Յկարգադրություն: Յանորինություն և այլն: Նախդիրների այս գործածությունը կամաց կամաց վերանում են ներկայիս գրական լեզվից: Բ. Ըստ գործածվում ե տրական հոլովի հետ—որինակ՝ Ըստ որենքի: Ըստ սովորության: Ըստ խղճի: Ըստ յերեւելութի: Ըստ կարգի: Ըստ պատճառի և այլն:

2. ՀԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա. Հանդեպ—Ստանում ե սեռական հոլովով խնդիր—որինակ՝ Աշակերտն երի հանդեպ: Իմ հանդեպ: Ուսուցչի հանդեպ: Դպրոցի հանդեպ և այլն: Իսկ յերբ գործածվի վորպես նախադրություն, ստանում ե հայացական հոլովով խնդիր—որինակ՝ Հանդեպ գործը: Հանդեպ աշակերտները: Հանդեպ ինձ: Հանդեպ քեզ և այլն:

բ. Համար—Ստանում ե սեռական հոլովով, իսկ անձնական դերանունների 1-ին և 2-րդ դեմքի հետ տրական հոլովով լրացում—որինակ՝ Գործի համար: Աշխատանքի համար: Դպրոցի համար: Քաղաքի համար: Գյուղի համար: Ուսումի համար: Քաջության համար: Սրահամար: Նրահամար: Դրահամար: Ինձ համար: Ձեզ համար: Նրանց համար: Իրենց համար և այլն:

գ. Համաձայն—Ստանում ե սեռական հոլովով լրացում թե իբրեւ նախադրություն և թե իբրեւ հետադրություն—որինակ՝ Ուսուցչի պատվերն երի համաձայն պետք ե աշխատել, կամ համաձայն ուսուցչի պատվերն երի պետք ե աշխատել: Համաձայն որենքի, կամ որենքի համաձայն և այլն:

դ. Համեմատ—Ստանում ե սեռական հոլովով լրացում—որինակ՝ Նրա կատարած գործի համեմատ պիտի տրվի վարձատրություն: Աշխուրբի համեմատ պիտի կատարվի բերքի բաշխում: Թվանշանների համեմատ պետք ե վճռվի նրա փոխադրության հարցը: Նրա աշխատանքի համեմատ պիտի վորոշել նրա առաջըաշման խնդիրը և այլն:

յե. Հանդերձ—Ստանում ե գործիական հոլովով լրացում—որինակ՝ Ընտանիքով հանդերձ մեզ հյուր յեկան: Աշխա-

տելով հանդերձ չկարողացավ հասնել ընկերոջը: Իր փորձառութիւնով հանդերձ յաջողեց և այլն:

զ. Շնորհիվ—Ստանում ե սեռական հոլովով լրացում—որինակ՝ Լավ ուսուցչի շնորհիվ աշակերտները թույլ չստացան: Այս աստանքի շնորհիվ նա առաջ գնաց: Գիտության շնորհիվ մարդիկ տիրապետում են բնությանը:

ե. Չատ—Ստանում ե բացառական հոլովով լրացում—որինակ՝ Քեզանից դատ վոչ վոք չի կատարել այդ գործը: Սըրանից դատ բոլորն ել տեսել են «ՊԵՊՈՆ»: Նրանցից դատ բոլորն ել յեկան և գնացին և այլն:

ը. Ի վեր—Ստանում ե բացառական հոլովով լրացում—որինակ՝ 40 օրից ի վեր անընդհատ աշխատում են: Դպրոց դասուցողից ի վեր չի բացակայել յերբեք: Հին դարերից ի վեր մարդիկ ունեն գիր ու գրականութուն:

Յ. Անիսկական կապեր—ա. Տեղի անունների մեծ մասը, վորպես հետադրութիւն գործածելիս գոյական անունների, ցուցական, փոխադարձ և անձնական դերանունների 3-րդ դեմքի հետ ստանում են սեռական հոլովով լրացում, իսկ անձնական դերանունների առաջին ու 2-րդ դեմքերի հետ առնում են տրական հոլովով լրացում—որինակ՝ Սեղանի վրա: Քարի առաջ: Գյուղի կողքին: Ծառի տակ: Գյուղի տեղ: Սարի հետեւ: Լեռան կողմ: Համալսարանի ներքեւ: Նրա առաջ: Սրա մոտ: Նրանց վրա: Իրար վրա: Ինձ հետ: Քեզ մոտ և այլն:

բ. Ժամանակի անունների մեծ մասը, յերբ վորպես հետադրութիւն գործածվեն, ստանում են բացառական հոլովով լրացում—որինակ՝ Միջին դարերից առաջ: Հոկտեմբերից հետո: 5 թվի հեղափոխութիւնից հետո: Ինձանից հետո և այլն:

դ. Ածական հետադրութիւնների մեծ մասը առնում են սեռական հոլովով լրացում—որինակ՝ Պետրոսի նման: Այս աստանքի համեմատ: Իր պարզամտության հակառակ: Նրա կարգադրության համաձայն: Լուստի պես: Մարդու պես և այլն:

զ. Գոյական հետադրութիւններն առնում են սեռական հոլովով լրացում—որինակ՝ Ուսուցչի հետ: Խոսելու պես: Բանվորի չափ: Գործի նկատմամբ: Խնդրի վերաբերմամբ: Անձրեւի պատճառով: Այս աստանքի շնորհիվ: Քաջու-

թյան համաձայն: Պարզեւատրելու փոխարեն: Մարդասպանի ձեռքով: Չարագործի յերեսից և այլն:

Մի ԲԱՆԻ ԱՆԻՍԿԱԿԱՆ ԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒՅԱՆ ԱՆՎԵՐԸ

1. Պես—ա. Յերբ գոյականի իմաստով ե առնվում, ստանում ե անորոշ դերբայի տրական հոլովով լրացում—որինակ՝ Արեւը մտնելուն պես: Լուսը ստացվելուն պես: Քաղաք հասնելուն պես: Գլուղը մտնելուն պես և այլն:

բ. Յերբ ածականի իմաստով ե առնվում, ստանում ե սեռական հոլովով լրացում, իսկ անձնական դերանունների 1-ին և 2-րդ դեմքի հետ նաև տրականով լրացում և այդպիսի դեպքերում պես ածականը կարող ե փոխարինվել նման բառով, որինակ՝ Հերոսի պես, կամ հերոսի նման: Չի վորի պես, կամ զինվորի նման: Մարդու պես, մարդու նման: Քեզ պես, քեզ նման: Նրա պես: Նրա նման: Մեր դիրեկտորի պես և այլն:

գ. Յեթե մակբայի իմաստով ե առնվում, ստանում ե սեռական հոլովի լրացում. այդպիսի դեպքերում նրան կարելի չե փոխարինել ինչպես, վորպես և նման բառերով—որինակ՝ Հերոսի պես կովեց: Կամ վորպես հերոս կովեց: Կայծակի պես անցավ, կամ ինչպես կայծակ անցավ: Հռետորի պես խոսեց, կամ վորպես հռետոր խոսեց: Քեզ պես աշխատեց, կամ քեզ նման աշխատեց: Հոգու պես սիրում եր, կամ իր հոգու նման սիրում եր և այլն:

2. Չափ—ա. Բաղդատական ածականի իմաստով առնում ե սեռական հոլովով լրացում, իսկ անձնական դերանունների 1-ին և 2-րդ դեմքի հետ, տրական հոլովով լրացում, այսպիսի դեպքերում վերջվում ե հավասար, համաչափ հասկացողութեամբ—որինակ՝ Վարդի չափ կարմիր: Ծովի չափ խոր: Սարերի չափ բարձր: Քեզ չափ նվիրված: Ինձ չափ աշխատող: Նրա չափ ուժեղ և այլն:

բ. Մակբայի իմաստով—առնում ե սեռական հոլովով լրացում, որինակ՝ Հոգնելու չափ վաղեց: Յեռացնելու չափ տաքացրեց: Կես բառ յերբեմն գործիական հոլովով կապվում ե չափի հետ և նշանակում ե մինչև կես—որինակ՝ Լուսինը կեսով չափ խավարեց: Պատը կիսով չափ շարվել եր և այլն:

3. Տ ե դ—ա. Մակըրալի իմաստով, փոխարեն, փոխա-
նակ բառերի հասկացողութեամբ, առնուած ե սեռական հոլովով
լրացում ե ըստ ելութեան մի կրճատված ստորոգյալի տեղ ե
բռնում հաճախ—որինակ՝ Հոնքը շինեւ լու տեղ աչքն ել հա-
նեց (հոնքը չշինեց, աչքն ել հանեց): Ի մ տեղ դու գնա աշխա-
տանքի (յես չեմ գնում, դու գնա աշխատանքի): Ք ո տեղ Պետ-
րոսին կուղարկենք գործի: Մ ա ր դ ու տեղ դրի: Հալած յ ու-
ղ ի տեղ կընդունես նրա ասածները ե այլն:

4. Հ ե տ—ա. վորպես դոչական առնում ե սեռական հոլո-
վով՝ լրացում, անձնական դերանունների 1-ին ե 2-րդ դեմքի
հետ տրական հոլովով լրացում, յերբեմն գործածվում ե միասին
բառի ոժանդակութեամբ ե տալիս ե ուղեկցութեան, գործակցու-
թեան իմաստ—որինակ՝ Ք ե դ հետ ամեն տեղ կգնամ: (Քեզ հետ
միասին ամեն տեղ կգնամ): Այսինքն ք ո ուղեկցութեամբ կամ
գործակցութեամբ, մասնակցութեամբ ամեն տեղ կգնամ: Յ ե դ ք ո-
ր ք ա հետ քաղաք իջանք, կամ յեղբորս հետ միասին քաղաք
իջանք: Ը ն կ ե ր ն ե ր ի ս հետ Թիֆլիս ղնացինք: Ձ ե դ հետ
խաղալն ավելորդ ե, ի ն ձ հետ աշխատելը բախտավորութուն
ե: Ի բ ա ր հետ ընկերացան: Դ ր ու թ չ ա ն հետ հաշովեցին ե
այլն:

5. Դ ե մ—ա. Ը ն դ դ ե մ, հակառակ բառերը իմաստով
ստանում են սեռական հոլովով լրացում որինակ՝ Նավարկել հո-
ս ա ն ք ի դեմ: Գնանք փ ո թ ո ր կ ի դեմ: Ճ շ մ ա ր տ ու թ չ ա ն
դեմ չի կարելի խոսել: Ա ր դ ա ր ու թ չ ա ն դեմ խոսելը բամբա-
սանք ե ե այլն:

բ. Ժամանակի անունների հետ յերբեմն գործածվում ե
ե Ժամանակն ե ցույց տալիս վորոշակիորեն—որինակ՝ Լ ու ա-
բ ա ց ի դեմ տանից դուրս յեկավ: Յ ե ր ե կ ո չ ա ն դեմ տուն
վերադարձաւ: Ա ո ա վ ո տ չ ա ն դեմ սկսեց աշխատել: Կ ե ս ո ր-
վ ա դեմ աշխատանքը դադարեցրեց:

6. Մ ո տ—ա. Տեղի իմաստով, գոչականների հետ առնում
ե սեռական հոլովով լրացում, իսկ անձնական դերանունների
1-ին ե 2-րդ դեմքի հետ տրական հոլովով լրացում—որինակ՝
Հ ա մ ա լ ս ա ր ա ն ի մոտ կանգնած ե Ղուկաս Ղուկասյանի ար-
ձանը: Կ ի ն ո յ ի մոտ գտնվում ե մեր դպրոցի շէնքը: Ի ն ձ մոտ
նստած ե ընկերս: Ժ ա յ ու ե ր ի մոտ բացված են վարդեր:
Դ ո ր ծ ա ր ա ն ի մոտ նոր աչքի ե տնկված: Յեկ ի ն ձ մոտ:
Գնա ը ն կ ե ր ո ջ մոտ ե այլն:

բ. Համեմատութեան իմաստով առնում ե սեռական հոլովով
լրացում. որինակ՝ Տ ր ա կ տ ո ր ի մոտ դուժանն անպետք ե:
Մ կ ն ե ր ի մոտ կատունները դադան են: Տ գ ե դ ն ե ր ի մոտ
տգեղներն ել գեղեցիկ են:

գ. Ժամանակի անունների հետ, մոտիկութեան իմաստով,
առնում ե տրական հոլովով լրացում—որինակ՝ Կ ե ս գ ի շ ե ր ի ն
մոտ հասանք Թիֆլիս: Յ ե ր ե կ ո չ ա ն մոտ դուրս յեկանք Թիֆ-
լիսից: Ա ո ա վ ո տ չ ա ն մոտ հասանք Բագու: Տարին վ ե ր ջ ա-
նալուն մոտ հաշիվները պիտի փակվի: Գ ա ր ն ա ն մոտ գետերն
սկսում են հորդել: Ձ մ ա ն մոտ գետակները սառչում են ե այ-
լն:

դ. Թվականների հետ, անորոշութեան իմաստով, առնում ե
ուղղական կամ հայցական հոլովով լրացուցիչ—որինակ՝ Մոտ 40
հ ո գ ի մասնակցեցին այս աշխատանքին: Մոտ 50 բ ա ն վ ո ր
հազիվ այս գործը կատարեցին: Այսոր մոտ 60 ա վ ո տ մեկնեց
Յելենովկա: Մոտ 50 տ ր ա կ տ ո ր ե 1000 աշխատավոր կոլխոզնիկ-
ներ դուրս յեկան դաշտ: Տրակտորը հերկեց մոտ 5 հեկտար ե այլն:
7. Վ ր ա—Սեռական հոլովով լրացում ե առնում:

ա. Մակերեսի իմաստով—որինակ՝ Ս ե դ ա ն ի վրա գիրք ե
դրված: Ծ ո վ ի վրա նավարկում են: Մ ա ր ի վրա վոչխարի հոտ
ե արածում: Ք ա ր ի վրա թռչուն ե թռուկ: Ծ ա ո ի վրա թռ-
չունը իր բունն ե շինել: Կ տ ու ր ի վրա չիր ե փռած ե այլն:

բ. Ափի կամ յեղրի իմաստով—Արգնի կուրորտը Չանգու
դ ե ա ի վրա չե: Ինտուրիստ հյուրանոցը Աբովյան փ ո գ ո ց ի
վրա չե: Բաթումը Մեզ ծովի վրա չե: Քանաքեռգետը Չանգվի
վրա չե ե այլն:

գ. Մակերեսի վրայ վորոշ բարձրութեան վրայի իմաստով—
որինակ՝ Արագինները ճախրում են ճ ա հ ճ ի վրա: Մետրոյով
անցնելիս Մոսկվան մեր գ լ ի ի վրա չե ե այլն:

դ. Ժամանակի մոմենտի իմաստով—որինակ՝ Ստուգելիս
նրան ա շ խ ա տ ա ն ք ի վրա տեսա: Ճ ա շ ի վրա ալդ մասին ե-
լինք խոսում: Այդ խ ո ս ք ի վրա նա ներս մտավ ե այլն:

յե. Գործողութեան հաջորդականութեան իմաստով, յերբե-
մն լրացումի կրկնակի գործածութեամբ—որինակ՝ Հաջողութու-
նը հ ա ջ ո դ ու թ չ ա ն վրա չե գալիս: Դեպքը դ ե պ ժ ի վրա չե
գալիս: Գործը գ ո թ ի վրա դիզված ե: Հեռագիր հ ե ա ա գ ր ի
վրա ստանում ենք: Որ ո ր ի վրա լավանում ե հիմանդը: Յեր-
բեմն այս իմաստով առնված վրայի փոխարեն կարելի չե ԱՌ

գործածել, հայացական հոլովով լրացնումով, որինակ՝ Բուպե քո-
պի և յի վրա դրությունը լավանում է, կամ բուպե առ քոպե դը-
րությունը լավանում է և այլն:

զ. Գործողության հիմունքի, պատճառի, նպատակի, կամ
հանգման իմաստով—որինակ՝ Յես Թիֆլիս գնացի քո կա քա-
դրության հիման վրա: Մեր պալման ա գրի հիման վրա
դու պարտավոր ես 40 բանվոր տրամադրել Բանաքեռգեսին: Գոր-
ծերս չհաջողվեցին և չես իմ բարկությունը թափեցի նրա վրա:
Բանվորներ չտրամադրեց, դրա համար չես բողոքեցի նրա վրա:
Դու մեծ իրավունքներ ես բանեցնում չեղ բողոք վրա: Անձնա-
կան դերանունների 1-ին և 2-րդ դեմքի հետ ստանում է տրա-
կան հոլովով լրացում. որինակ՝ ինձ վրա, քեզ վրա, մեզ վրա և
այլն:

5. Հոդեր յեվ նրանց գործածությունը

Հոդ կոչվում են այն մասնիկները, վորոնք գոյականների,
դերանունների և գոյականաբար գործածվող բառերի վերջը
դրվելով, նրանց ընդհանուրից մասնավորի յեն վերածում և ի-
մասան ալելի վորոշակի, կոնկրետ են դարձնում—որինակ՝
Գիրք բեր, ասելով հասկանում ենք մի վորեւ գիրք, բայց
յերբ ասենք՝ գիրքը բեր, հասկանում ենք այն մասնավոր,
վորոշակի գիրքը, վոր մեզ հախնի, ծանոթ է առաջուց:

Վորպես հոդ գործածվում են Ը. Ն. Դ. Ս. տառերը: Նայե-
լով այդ տառերի գործածության ու կատարած ֆունկցիաներին,
հոգեբը լինում են՝ 1. վորոշիչ, 2. դիմորոշ, 3. ցուցական,
4. ստացական:

1. ՎՈՐՈՇԻՉ ՀՈԴԵՐ ԵՆ՝ Ը և Ն տառերը: Ը-ն գրվում է
բաղաձայնով վերջացող բառերի վերջը, յերբ հաջորդ բառը
նույնպես սկսում է բաղաձայնով, որինակ՝ Ծաղիկը տվի ընկե-
րոջս: Իսկ յերբ բառը վերջանում է ձայնավորով կամ յեթե նույ-
նիսկ վերջանում է բաղաձայնով, բայց հաջորդ բառն սկսվում
է ձայնավորով ընդհանրապես գործածվում է Ն տառը—որինակ՝
Ծաղիկն առա ընկերոջիցս: Կատուն մկավում է: Մեղուն մեղր և
չինում և այլն:

ՎՈՐՈՇԻՉ ՀՈԴ ԱՌՆՈՒՄ ԵՆ.—

ա. Բոլոր թե հասարակ և թե հատուկ անունները, յերբ
մասնավոր, վորոշակի իմաստով են գործածվում, որինակ՝ Կովը

ստակեց: Մեր շունը յեկավ: Մեր հավը դողացան: Գրիչան յի-
կավ: Սեղրակը գնաց և այլն:

բ. Յերբ անունները ունեն մի լրացում—որինակ՝ Այս գիր-
քը տար: Կանչիր այդ աշակերտին: Իմ տունը շինվեց: Բո գրա-
դարանը լավ սարքված է: Բոլոր գպրոցները նորոգված են: Ամ-
բողջ հասարակութունը հիացմունքով է խոսում նրա մասին:
Վեր գիրքը կուգես: Ո՞ւմ տունն ես հարցնում և այլն:

գ. Յերբ լրացում ունեցող գոյականները (կրկնություններ
չանելու կամ նախադասությունն ալելի հաջող ձևակերպելու հա-
մար) դուրս են գցվում, հոգեբը դրվում են այդ դուրս գցված գո-
յականների լրացումների վրա—որինակ՝ Այս գիրքը դու կարդա,
իսկ մյուսը՝ (սխալմանակ ասելու մյուս գիրքը) նա: Նրա տունը
կառուցվեց, իսկ մեր՝ (մեր տունը) մնաց: Այս նախադասությու-
նը կարելի է արտահայտել նույնիսկ այսպիսի՝ Նրանը կառուց-
վեց, իսկ մերը մնաց:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Յերբ գեղջվող գոյականներն անորոշ ա-
նուններ լինեն (այսինքն վոր ցույց չեն տալիս, ինչ
մարդ կամ ինչ բան լինելը) վորոշիչ հոդը գրվում է
նրանց լրացումներին, բայց այստեղ արգեն հոդը իր
վորոշելու, կոնկրետացնելու իմաստը կորցնում է և
արտահայտում է միմիայն ջնջված անորոշ անունների
իմաստը: Որինակ՝ Հարվածային, անձնուրաց ու ազ-
նիվ մարդուն շատ եմ սիրում, ասելու փոխարեն, յերբ
նախադասությունից դուրս գցենք մարդ բառը և ա-
սենք՝ շատ ենք սիրում հարվածայինը, անձնուրացը
ու ազնիվը, այստեղ նորից պահպանվում է նույն ա-
նորոշությունը:

դ. Գոյականաբար գործածվող բոլոր բառերը կարող
են վորոշիչ հոդ առնել—որինակ՝

Ածական—համեստը, սիրունը, դեղինը և այլն:

Դերբայ—տեսնելը, տեսածը, տեսնողը և այլն:

Մակերայ—ներքեվը, աշտը, վերջը և այլն:

յե. Առարկայի վորոշված լինելու դեպքում վորոշիչ հոդ առ-
նում են ուղղական, արական և հայցական հոլովները—որինակ՝
Մեր պարտեզը գեղեցիկ է: Ձեր պարտեզը ջրել է: Ձեր պար-
տեզի ծառը ծաղկել է: Ձեր պարտեզին մոտեցան և այլն:

Բառերը վարոցյալ լինելու դեպքում ել հաճախ վո-
րոշիչ հոդ չեն առնի ճեճկյալ պարագայներում—

ա. Ժամանակ ցույց տվող բառերը ուղղական կամ հայ-

ցական հոլովներով—որինակ՝ Այս ամառ չորային եր: Այս ձմեռ տաք ե: Այս առավոտ տոթ ե: Յերեք ամիս սահնաւորիայում ապրեցի եւ այլն:

բ. Գրքերի անունները եւ վերնագրերը—որինակ՝ Հայոց լեզվի քերականութիւն: Ռուսաստանի պատմութիւն: Պուգաչովի ապստամբութիւնը եւ այլն:

դ. Աշխարհաբարում գործածվող մի շարք գրաշարով հոգնակինոր—որինակ՝ Այս քաղաքացիք արհեստով են զբաղվում: Այս սոր կանանց տոնն ե:

դ. Կոչական անունները որինակ՝ Վահան, արի գնանք: Գրիշն, չէս գալիս եւ այլն:

յե. Անորոշ լրացումներ ունեցող բառեր—որինակ՝ Յուրաքանչյուր ծառայող մի հասարակական աշխատանք պիտի կատարի: Ձան ապտն պատճառներ ստիպեցին ինձ մերժել ձեր առաջարկը: Սակայն յերբ այս անորոշ լրացումներից առաջ լինին վորոշող լրացումներ, այն ժամանակ հոգ կառնեն—որինակ՝ Պարգեւատրվելու արժանի յեւ այդպիսի ամեն կախողնիկը: Նման յուրաքանչյուր ծառայողը մեկից ավելի հասարակական աշխատանք կարող եւ կատարել: Այս պիսի զանազան պատճառները ստիպեցին ինձ մերժել ձեր առաջարկը եւ այլն:

զ. Յերբ անորոշ դերբայը գոյականաբար եւ գործածվում վորոշալ հոգ եւ առնում—որինակ՝ Նոր ուղղագրութեամբ հեշտացավ կարգալն ու գրելը: Գարնանը, յերբ հնարավոր չեղավ վարելն ու ցանելը, մենք անմիջապէս գործի անցանք:

Չ-րդ. Դիմորոշ հոգեր են՝ Ս. Դ. տառերը, վորոնք բառերի վերջը գրվելով վորոշում են՝ Ս-ն առաջին դեմք, Դ-ն Չ-րդ դեմք: Այս հոգերը հաճախ դուրս են գցում նախադասութիւններից անձնական գերանունները եւ փոխարինում են նրանց—որինակ՝ Յես, գործակատարս, իմ ջանքերը չեմ խնայել այս գործի հաջողութեան համար, կամ ուղղակի՝ Գործակատարս իմ ջանքերը չեմ խնայել այս գործի հաջողութեան համար: Դուք՝ հաշվապահներդ շատ բան ունեք կատարելու: Հաշվապահներդ շատ բան ունեք կատարելու:

Յ-րդ. Յուրաքանչյուր հոգ եւ ր.—Մեր ներկա գրական լեզվի մեջ, վորպէս ցուցական հոգ վորոշ չափով պահպանվել եւ միայն Ս տառը, վորը յերբեմն փոխարինվում եւ այս լրացումին: Յերբեմն ել նրա հետ միասին եւ գործածվում—որինակ՝ Այս քաղա-

քի ամենամեծ շենքը, կամ քաղաքիս ամենամեծ շենքը: Այս շաքութեա պիտի գնամ աշխատանքի, կամ շաքութեա պիտի գնամ աշխատանքի եւ այլն:

4-րդ. Ստացական հոգեր—Ստացական հոգերն են Ս. Դ. եւ Ը. Ն. տառերը, վորոնք փոխարինում են իմ, քո, նրա գերանուններին—որինակ՝ Իմ գիրքը կորավ, կամ գիրքս կորավ: Քո գլխարկը նոր եւ, կամ գլխարկդ նոր եւ: Նրա կոշիկները լավ են, կամ կոշիկները լավ են: Այստեղ չպետք ե շփոթել ստացական Ը. Ն. հոգը վորոշիչ Ը եւ Ն հոգերի հետ, ստացական Ը եւ Ն հոգերը բռնում են նրա եւ նրանց գերանունների տեղը—որինակ՝ Սաղան հիվանդ եր, բժիշկները ոպերացիա արին նրա վրա, կամ Սաղան հիվանդ եր, բժիշկները ոպերացիա արին վրա: Այստեղ Ը ստացական հոգը ցուցց ե տալիս, թե ում վրա ոպերացիա յին արել: Յերբ ստացական հոգ առնող բառերը ունեն լրացում, յերբեմն ստացական հոգերը տրվում են այդ լրացումներին՝ որինակ՝ Իմ ասած խոսքս, ասելու փոխարեն, կարող ենք ասել՝ Ասածս խոսքը, Իմ ձեռքի փայտս, կամ Ձեռքիս փայտը եւ այլն:

Այս հոգերի հոգնակներն են՝ միավանկ բառերի համար երս, երդ, երն եւ բազմավանկ բառերի համար ներս, ներդ եւ ները, վորոնք բռնում են մեր, ձեր, իրենց գերանունների տեղ—որինակ՝ գլխարկներս, գլխարկներդ, գլխարկները եւ այլն: Վարդերս, վարդերդ, վարդերն եւ այլն:

6. Շաղկապներ, նրանց սեպակներ յեվ գործածութեան ձեւերը

Շաղկապները կապում են իրար հետ մի նախադասութեան մեջ յեղած բառերը կամ այդ նախադասութիւնը կազմող նախադասութեանները—որինակ՝ Արամն եւ Դեղամը իրար հետ կապեցին սոցմըցման պայմանագիր: Գեղամն իր պլանը կատարեց, բայց Արամը չկարողացավ կատարել: Շաղկապները լինում են 2 տեսակ. համադասական եւ ստորադասական:

1. Համադասականները կապում են համագոր բառեր ու նախադասութիւններ—որինակ՝ Ուսուցիչները եւ ուսանողներն այս տարի վորոշել են լավագույն ցուցանիշներ տալ եւ հարվածալին դառնալ եւ այլն:

Համադասական շաղկապներ են եւ, ու, ալ, բայց, սակայն, իսկ, կամ, ապա, անգամ, թե, գոնե, գեթ, մանաւանդ, այսինքն, ուրեմն, ել, եւ այլն:

Այս շաղկապները չերբեմն միանում են կամ իրար հետ և կամ ուրիշ բառերի հետ և կազմում են բարդ համադասական շաղկապներ, ինչպես—նաև, ալիք, նուշնպես և, ուստի և, այն էլ, մինչև իսկ, նուշն իսկ, մինչև վաճառ, նամանավանդ, և կամ, կամ թե և ալլն:

Որինակ՝ Գրիշան և Սաշան մեր լավ աշակերտներն են: Գրիշան մատեմատիկական առարկաներից ե ուժեղ, իսկ Սաշան լեզուների մեջ, սրանք թե ուժեղ են և թե դիսցիպլինար: Դուք հարվածային եք, այն ել առաջնակարգ և ալլն:

2. Ստորագրասական շաղկապները կազմում են նախադասությունների մեջ յերկրորդական նախադասությունները գլխավորների հետ. որինակ՝ Համալված պետք ե լինել, վոր մեր գործը հաջողվելու չե: Պետք ե կովել փաստարարների դեմ, վորովհետև նրանք հարվածում են բերքատուլթյանը:

Ստորագրասական շաղկապներ են՝ վոր, թե, թե ե վ, վոր պես գի, վոր քի հետև, քան, մինչև և ալլն:

Ստորագրասական շաղկապները նուշնպես միանում են կամ իրար հետ կամ ալլ բառերի հետ ու կազմում են բարդ ստորագրասական շաղկապներ՝ ինչպես՝ հենց վոր, ալն պես վոր, մանավանդ վոր, թե վոր, չե թե վոր, թե պետև, թե ե, թե կուղ, մինչդեռ, մինչև վ վոր, քան թե, նախ քան թե, վոր պես դի, մինչդեռ և ալլն:

Վորպես ստորագրասական շաղկապ դործածվում են հաճախ բոլոր հարաբերական և հարցական դերանունները (ով, ինչ, ուր, չերբ) վոր թարմատար ե շաղկապով կամ առանց նրան, որինակ՝ Նա չե լավ սովորում, ով (վոր) աշխատում ե: Աշակերտը պիտի սովորի այն ամենը ինչ (վոր) ուսուցիչն ե ավանդում: Գնա, ուր վոր ուզում ես (գնա, ուր ուզում ես): Արի, չե բբ վոր ցանկանում ես (արի, չե բբ ցանկանում ես) և ալլն:

Ստորագրասական շաղկապների մանրամասնության մասին տես բարդ նախադասություններ (4-րդ առաջադրություն):

7. Համաձայնություն

Յերբ բառերի կապակցությունը արտահայտվում ե թվի, դեմքի և հոլովի միակերպությամբ, կոչվում ե համաձայնություն: Համաձայնությամբ կապակցված բառերի մեկի փոփոխությունը պայմանավորվում ե մյուսի համանման փոփոխությունը:

Գլխավորապես համաձայնական կապակցության մեջ են

1. Յեն թական ու ստորոգյալը, 2. Բացահայտիչն ու բացահայտյալը:

1. ՅենթԱԿԱՅԻ ՈՒ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ.

Յերբ յենթական յեղակի չե, ստորոգյալն ել պիտի լինի յեղակի, յերբ հոգնակի չե, ստորոգյալն ել պիտի լինի հոգնակի: Յերբ յենթական առաջին դեմքով ե, ստորոգյալն ել պիտի լինի առաջին դեմքով, յերբ 2-րդ դեմքով ե, ստորոգյալն ել պիտի լինի 2-րդ դեմքով և ալլն: Որինակ՝ Ուսուցիչը չեկավ: Ուսուցիչները չեկան: Յես գնացի: Մենք գնացինք: Դուք գնացիք: Նա գնաց (տես 2-րդ առաջադրություն) և ալլն:

2. ԲԱՑԱՀԱՅՏԻ ՈՒ ԲԱՑԱՀԱՅՏԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ.

Բացահայտիչն ու բացահայտյալը նուշնպես համաձայնում են հոլովով, թվով ու դեմքով. այսինքն յեթե բացահայտիչը ուղղական յեղակի ե, առաջի դեմք՝ բացահայտյալն ել պիտի լինի ուղղական, յեղակի, առաջին դեմք: Որինակ՝ Գյուղխորհրդի նախագահը, ընկ. Սարգիսը, լավ ե աշխատում: Այստեղ թե նախագահը բացահայտյալը և թե Սարգիսը բացահայտիչը յեղակի ուղղական հոլով են: Յես հարվածայինս կատարեցի իմ պլանը: Մենք հարվածայիններս կատարեցինք մեր պլանը: Այստեղ չես բացահայտյալը ուղղական հոլովով յեղակի առաջին դեմքով ե: Հարվածայինս բացահայտիչը նուշնպես ուղղական հոլովով յեղակի առաջին դեմքով ե: Մենք ուղղական հոլովը հոգնակի առաջին դեմքով ե, հարվածայինս նուշնպես ուղղական հոլովով հոգնակի առաջին դեմքով ե (տես 2-րդ առաջադրություն):

8. Շաղկապություն

Նախադասությունը կազմելու համար բառերը վոչ միայն կապակցվում են՝ ալլով դասավորվում են վորոշ շարքով: Որինակ՝ չերբ ասում ենք՝ Բանաքեռի կոլխոզն իր գարնանացանի պլանը կատարեց, սա մի լրիվ միտք հայտնող կանոնավոր նախադասություն ե, վորովհետև նախադասության մեջ մտած բառերը դասավորված են այնպես, ինչպես մեր ներկա գրական լեզվի կանոններն են պահանջում: Իսկ յեթե մենք վերցնենք նուշն նախադասությունը, կապակցական ձեզերը թողնենք նուշն և փոխենք միմիայն այդ բառերի դասավորումը, շաբբը, նախադասությունը կորցնում ե իր միտքը—որինակ՝ ասենք ալլպես—

պլան կոլխող գարնանացանի կատարեց իր Քանաքեռի: Տեսնում ենք, վոր վոչ մի միտք չարտահայտող բառերի շեղակույտ ե դուրս գալիս: Ուրեմն դասավորումը, սխառնվել կարելիորագույն խնդիրներեց մեկն ե նախադասութեան համար:

Բառերի լավ դասավորումը, լավ խոսելու ե գրելու հիմնական պայմաններից մեկն ե: Ընդհանուր առումով նախադասութեան կազմող բառերի շարադասութեանը բղխում ե նրանց կատարած ֆունկցիաների կարելիորութեանից: Առաջնակարգ տեղը բռնում ե այն բառը, վոր տվյալ դեպքում ավելի շեղումն է, ավելի կարեւոր տեղ ե բռնում: Այս իմաստով բովանդակութեան ամենափոքր չերանգավորումն անգամ անպայման իր արտահայտութեանն ե ունենում բառերի շարադասութեան վրա—որինակ՝ յերբ ասեն—Գործարանն ես գնում, ուղում ենք իմանալ, թե գործարանն ես գնում, թե ուրիշ տեղ: Իսկ յերբ ասենք՝ Գնում ես գործարան, շեղումն ե գնալը ե ուղում ենք իմանալ գնում ես, թե չես գնում:

Ինչպես տեսնում ենք՝ շարադասութեանը վորքան կարեւոր նույնքան ե նուրբ խնդիր ե, կարելի չե ասել, վոր սա ուղղակի արվեստ ե ե դժվար ե այսպիսի նրբութեանները վորոշ մարմնացած որենքների տակ դնել:

Այստեղ մեզ մնում ե միայն մի քանի հիմնական խնդիրների վրա կանգ առնել, իսկ մնացածը կարելի չե ձեռք բերել լեզուն սովորելով ե լեզվին տիրապետելով: Շարադասութեանը տիրապետել՝ սա վոճին տիրապետել ե նշանակում:

1. Յենթակաչի ու ստորոգյալի շարադասումը—Յենթակաչի վորպես գործողութեան կատարողը, նախադասութեան ամենաբերական վոր անգամը ընդհանրապես առաջ ե դրվում. որինակ՝ Կոլխողը կատարեց իր պլանները: Ուսուցիչները դասի գնացին: Ուսանողները պրակտիկաչե մեկնեցին: Սոխակը յերգում ե: Բուլսերը շնչում են: Քամին սուլում ե ե այլն: Այս շարադասութեանը փոխվում ե այն դեպքում, յերբ հանգամանքների բերումով բովանդակութեան տեսակետից շեղվում ե, ասենք՝ ստորոգյալը. այն ժամանակ նույն նախադասութեանները դասավորվում են այսպիսի—Կատարեց իր պլանները կոլխողը: Գնացին դասի ուսուցիչները: Յիրգում ե սոխակը: Շնչում ե բուլսը ե այլն:

2. Լրացումների շարադասումը—Լրացումները իրենց լրացյալներից յերբեմն թե առաջ ե թե հետո կարող են դրվել—որինակ՝ ա. վորոշիչ—Գեղեցիկ վարդ: Սիրուն ծաղիկ: Յերկաթյա

մահճակալ: 40 բաժակ: 50 մարդ ե այլն: Յերբեմն նալած իմաստի շեղումնութեան այս վորոշիչները կարող են յեվ չետ դրվել—որինակ՝ Վարդ գեղեցիկ: Ծաղիկ սիրուն ե այլն:

բ. Հատկացուցիչ—որինակ՝ Դպրոցի դուռը: Տանիքի թիթեղը: Վարդի թերթերը: Ծաղկի գույնը: Աշակերտի գիրքը ե այլն: Այստեղ նույնպես յերբեմն կարող են հետ դրվել. ինչպես՝ Թիւրթեր վարդի, Դուռը դպրոցի ե այլն:

գ. Բացահայտիչն ընդհանրապես բացահայտյալից հետո չե դրվում. որինակ՝ Դիրեկտոր Խաչիկը: Գործակատար Սարգիսը ե այլն:

դ. Ստորոգյալի լրացումներից թե խնդիրը ե թե պարագաները ընդհանրապես ստորոգյալից հետո չեն դրվում, բայց կարող են առաջ դրվել—որինակ՝ Կոլխողը կատարեց իր պլանը, կամ կոլխողն իր պլանը կատարեց: Ապրում եմ Յերեւանում, կամ Յերեւանում եմ ապրում ե այլն:

9. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ.—Կարդալ Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ Մուրացկանները» ե «Աղգային ջոջերը» եջ՝ 352—402 ե Պ. Դուրյանի «Բանաստեղծութեանները եջ՝ 408—418: Միսաք Մեծարենցի բանաստեղծութեանները եջ՝ 420—434: Դանիել Վարուժանի բանաստեղծութեանները եջ՝ 431—454:

Դասադիրը—«Հայոց գրականութեան քրիստոմատիա» իննբորդ դասարան (Մկրչյան, Սարգսյան):

10. Հրահանգներ ու վարժութիւններ

1. Կազմել յերեք նախադասութեան գոյական ստորոգյալներով:

2. Կազմել կոչական ունեցող յերկու նախադասութեան:

3. Կազմել տրական հոլովով անուղղակի խնդիր ունեցող 4 նախադասութեան:

4. Կազմել յերեք նախադասութեան, վորոնք ունենան հայցական հոլովով պարագաներ ե յերկու նախադասութեան՝ բացառական հոլովով պարագաներ:

5. «Մեծապատիվ մուրացկաններ» հատվածից ջոկել հինգ պարզ նախադասութեան ուղղակի խնդիրներով ե վերլուծել այդ նախադասութեանները գրավոր կերպով, տնային տետրակում:

6. Վերլուծել Դուրյանի «Լճակ» վոտանավորի առաջին յերկու տան պարզ նախադասութեանները:

II. ԿՈՆՏՐՈԼ ԱՇԽԱՏԱՆԷ

1. Նախադասութեան բառերը կապակցութեան ի՞նչ ձևեր ունեն:

1. Ի՞նչպէս ենք բացատրում գրաբարի համեմատութեամբ հոլովների թվի քչանակը:

3. Ի՞նչ է հոլովում և ի՞նչ է հոլովը:

4. Նախադասութեան մեջ հոլովներն առանձին-առանձին վերցրած ի՞նչ ֆունկցիաներ են կատարում:

5. Վճրն և կապերի դերը նախադասութեան մեջ և քանի՞ տեսակ կապեր կան:

6. Վորժնք են անխակական կապեր:

8. Գրաբարից մնացած ի՞նչ նախդիրներ են գործածվում ներկա մեր գրական լեզվի մեջ:

9. Կապի լրացում ասելով ի՞նչ ենք հասկանում:

10. Ի՞նչ է հոգը և քանի՞ տեսակ են լինում:

11. Ի՞նչ տարբերութիւն կա վորոշիչ հոգ՝ Ը և Ն-ի և ստացական հոգ՝ Ը և Ն-ի միջև:

12. Ի՞նչ է շաղկապը, քանի՞ տեսակ են լինում. ի՞նչ տարբերութիւն կա կապերի ու շաղկապների միջև:

13. Շաղկապական բառ ասելով ի՞նչ ենք հասկանում:

14. Ի՞նչ է համաձայնութիւնը և նախադասութեան վճր բառերն են, վոր համաձայնական կապակցութեան են յենթակա:

15. Ի՞նչ է շարադասութիւնը և ի՞նչ հանգամանք կարող է անդրադառնալ բառերի շարադասութեան փոփոխման վրա:

Ժամկետ մեկ ամիս:

ԱՌԱՋԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

Մ Շ Ա Կ Մ Ա Ն Պ Լ Ա Ն Ը

1. Նախադասութիւնների սեսակները.

2. Բառ գնախադասութիւնները և նրանց կազմութիւնը.

3. Ստուգա նախադասութիւնների կապակցութիւնը.

4. Շաղկապական կապակցութիւն.

5. Բառ գնախադասութիւնների պարզեցում.

6. Կապակցական բառերի գործածութեան ձեւերը.

7. Համադաս նախադասութիւնների կապակցութեան ձեւերը.

8. Շաղկապական կապակցութիւն.

9. Խառն կապակցութիւն.

10. Կեսադրութիւն (ա. Տրանսլյուցիւն, Բ. Բացառականութիւն, Գ. Կոնդիցիոնականութիւն, Դ. Կոնտրադիկցիոնականութիւն).

11. Նախադասութիւնների վերլուծում (ա. Դեկլարատիւ, Բ. Կոնկլուզիւ, Գ. Կոնդիցիոնալ, Դ. Կոնտրադիկցիոնալ).

12. Ընթերցանութիւն.

13. Հրահանգներ և վարժութիւններ.

14. Կոնքրետ աշխատանք.

1. Նախադասութիւնների սեսակները

Նախադասութիւններն ըստ կազմութեան լինում են պարզ և բարդ (տես № 1 առաջադրութեան): Ինչպէս պարզ, նույնպէս և բարդ նախադասութիւնները, ըստ իմաստի, լինում են 1. պատմողական (գրական, ժխտական), 2. հարցական, 3. ձայնարկական (բացականչական և կոչական):

1. Պատմողական—կոչվում են այն նախադասութիւնները, վորոնց միջոցով չենթական մի բան ասում, պատում, հաստատում ե, կամ ժխտում ե: Պատմողական նախադասութիւնները լինում են դրական և ժխտական: Դրական ե կոչվում այն նախադասութիւնը, վորը չենթադրի մի բան լինելը կամ անելն հաստատում ե, իսկ ժխտականը՝ չերբ յենթադրի մի բան լինելը կամ անելը չի հաստատում, այլ ընդհակառակը ժխտում ե, որինակ՝ Կոլխոզնիկ Սարգիսը իր պլանը կատարեց, նա հարվածային ե: Սրանք դրական նախադասութիւններ են, իսկ չերբ ասենք—Կոլխոզնիկ Սարգիսը իր պլանը չկատարեց, նա հարվածային չե, սրանք ժխտական նախադասութիւններ են:

Ժխտական նախադասութիւնները կազմվում են դրական նախադասութիւններից ավելացնելով՝ չ, վոչ և մի մասնիկները:

Այս մասնիկների գործածութեան անվեր:

ա. Չ դրվում ե ստորոգյալի վրա—որինակ՝ Աշակերտներն իրենց դասերը պատրաստեցին, ժխտականը լինում ե՝ Աշակերտներն իրենց դասերը չպատրաստեցին:

Բաղադրյալ ժամանակների մեջ չ՝ ժխտականը դրվում ե ուժանդակի վրա, որինակ՝ Գործս վերջացրել եմ: Ժխտական լինում ե՝ Գործս վերջացրել չեմ, կամ Գործս չեմ վերջացրել:

ԾԱՆՈթՈՒԹՅՈՒՆ.—Ընդհանրապես ժխտականի ժամանակ բաղադրյալի ուժանդակը դերբայից առաջ ե դրվում, և այն ժամանակ ե ուժանդակը չերբեմն փոխվում ե Ի տառի—որինակ՝ խոսում ե, խոսում չե, կամ չի խոսում:

Մինչև հիմի հաճախ չից հետո ապաթարց նշան ե գործածվում որինակ՝ տապալել, չտապալել, արագցնել, չարագացնել: Այս ապաթարցներն ավելորդ ե և պետք ե ուղղակի գրեք չապալել, չարագացնել:

բ. Վոչ—վորպես ժխտական ներկայումս մեր գրական լեզվի մեջ քիչ ե գործածվում, որինակ՝ Վոչ կուղով, վոչ ել տուր: Վոչ ցանկանում եմ և վոչ ել խնդրում եմ: Վոչ գնա, վոչ արի և այլն:

գ. Մի ժխտականը միայն հրամայական չեղանակի վրա չե գործածվում—որինակ՝ Գնա, մի դնա: Խոսիր: Մի խոսիր: Յերգիր, մի չերգիր (չերբեմն՝ մի խոսի, մի չերգի) և այլն:

2. Հարցական—կոչվում են այն նախադասութիւնները,

վորոնց միջոցով խոսողն ուզում ե իմանալ իր չ՝ գիտցածը, կամ ստուգել իմացածը:

Յերբեմն խոսողը իր միտքը ավելի ուժեղացնելու համար և ավելի տպավորիչ դարձնելու համար, ինքն իրեն հարցեր ե տալիս և ինքն ել պատասխանում ե:

Հարցական նախադասութիւնները առնում են հարցական նշան (°):

Հարցական նշան դրվում ե այն բառի վրա, վորն ավելի շեշտված ե և հարցումը պարունակում ե իր մեջ: Հարցական նշանները միշտ դրվում են ձայնավորների վրա: Նայած հարցնողի հետաքրքրութեան միեմուլն նախադասութեան մեջ լեզած տարբեր բառերը կարող են կենտրոնական տեղ գրավել և հարցման նշանը իրենց վրա կրել: Որինակ՝ Դժ յես գնում հանդ, կամ Դու գնում ես հանդ, կամ Դու գնում ես հանդ: Այս չերեք նախադասութիւնները թեև վ բառերով ու շարադասութեամբ նույնն են, բայց հարցական նշանը, ըստ բառերի շեշտվածութեան, տարբեր բառերի վրա չե դրված և դրա շնորհիվ ել վորոշ չափով փոխված ե նախադասութեան իմաստը: Առաջին նախադասութեամբ ուզում ենք իմանալ, վոր դու յես գնում և վոչ թի ուրիշը, 2-րդով, վոր դու գնում ես, թե չե ուզում գնալ, իսկ չերրորդով հանդն ես գնում, թե ուրիշ տեղ:

Հարցական նախադասութիւնները ընդհանրապես առնում են հարցական բառերը, վորոնք կրում են հարցական նշան—որինակ՝ Ո՞վ ե լեկողը: Ո՞ւմ տունն ե սա: Ի՞նչ գործ ես կատարել: Վ՞որ ճանապարհով պիտի գնալ: Վ՞որտեղ ե գնացել և այլն:

Հարցական նախադասութիւնները յերբեմն ունենում են նաեմ՝ մի թե, ամբողջ, թե չե, հա, չե և այլ բառեր—որինակ՝ Մի թե գնալու յես քաղաք: Արդե՞ք ճիշտ եր նրա ասածները: Գալի՞ս յես թե չե: Նամակն ստացել ես, չե: Արդե՞ն կարդացել ես, հա և այլն:

3. Ձայնարկական կոչվում են այն նախադասութիւնները, վորոնց միջոցով խոսողը հայտնում ե իր զգացմունքը ու կամքը: Ձայնարկական նախադասութիւնը լինում ե բացականչական և կոչական:

ա. Բացականչական նախադասութիւնները միջոցով խոսողը արտահայտում ե իր հափշտակութիւնը, հուզմունքը, հիացմունքը, զարմանքը, հրճմունքը, ուրախութիւնը, տրամադրութիւնը, վիշտը, տանջանքը, ափսոսանքը, զղկանքը և այլն: Ու

րինակ՝ Պահ, ինչ գեղեցիկ և արեւմտապէս: Ո՛ր, ինչ սիրուն և Ձորագետը գիշեր ժամանակ: Ափսոս, վոր չկարողացա տեսնել: Ա՛խ, վորքան ցավում ե վերքս և ալլն: Բացականչական նախադասութիւններն ունեն իրենց բացականչական բառերը, վորոնք կրում են իրենց վրա յերկարացման նշան ('):

բ. Կոչակա նախադասութիւնների միջոցով խոսողը ուրիշներին կանչում, կարգադրում, խրախուսում, հրամայում, քշում և ալլն: Որինակ՝ Արի, Միշա գնանք դպրոց: Գնա՛, գիւրքը բեր: Դեհ, սկսենք աշխատել: Հո՛, հո՛ և ալլն: Կոչականները իրենց վրա կրում են շեշտ նշանը ('):

2. Բարդ նախադասություն և նրանց կազմութայն սեռակները

Ինչպես բառերն իրար հետ կապակցելով կազմում են պարզ նախադասութիւն, այնպես ել պարզ նախադասութիւններն իրար հետ կապակցվելով կազմում են բարդ նախադասութիւն: Ուրեմն բարդ նախադասութիւնը պարզ նախադասութիւններից կազմված, ամբողջական, մի լրիվ միտք հայտնող նախադասութիւն է:

Բարդ նախադասութիւնները կազմվում են 3 ձեւով, մեկ, վոր այդ նախադասութիւն մեջ մտած պարզ նախադասութիւնները կապակցվում են լրացական յեղանակով և կոչվում են ստորագաս նախադասութիւններ, իսկ մյուսը, վոր լրացական յեղանակով՝ և կոչվում է՝ համագաս նախադասութիւններ: Յերրորդն այնպիսի մի բարդ նախադասութիւն է, վորի մեկ, յերկու պարզ նախադասութիւններն ստորագաս են՝ իսկ մնացածը՝ համագաս:

1. Ստորագաս նախադասութիւն—Ստորագաս կոչվում են այն նախադասութիւնները, վորոնք վորեւե կապակցական բառով կապված են գլխավոր նախադասութիւն հետ և դառնում են նրա յենթակայի կամ ստորոգյալի լրացում՝ ամբողջացնելով նախադասութիւն իմաստը: Ստորագաս նախադասութիւնները կազմված են գլխավոր և յերկրորդական նախադասութիւններից: Գլխավորն այն նախադասութիւնն է, վորին յերկրորդական նախադասութիւնները դառնում են լրացումներ: Որինակ՝ Այն հարվածային ուսանողը, վոր այսօր պարգեւատրվեց, մեր ամենակարգապահ ուսանողն է: Ընդգծված նա-

խադասութիւնը յերկրորդական նախադասութիւնն է և լրացնում է մյուս՝ այսինքն, գլխավոր նախադասութիւն իմաստը, դառնալով յենթակայի լրացում: Խիփր թշնամուն, վոր ապահով ես հադթանակը: Ընդգծված նախադասութիւնը յերկրորդական է և լրացնում է գլխավոր նախադասութիւն իմաստը, դառնալով ստորոգյալի լրացում:

Յերկրորդական նախադասութիւնները դրվում են գլխավոր նախադասութիւններից հետո, մեջտեղ ու յերբեմն ել առաջ և ըստ իրենց գրաված գիւրքի ել կոչվում են հետագաս, միջագաս և նախագաս: Ինչպես—

ա. Հետագաս—Դպրոցի կառուր շինեցին, վոր չկաթի:

բ. Միջագաս—Դպրոցը, վոր ուսման ու դաստիարակության վայր է, որինակելի պիտի լինի:

գ. Նախագաս—Յերբ պանգը հնչեց, աշակերտները շտապեցին դպրոց գնալ:

Յերկրորդական նախադասութիւններն, ըստ իրենց կառուած ֆունկցիաների, պարզ բառերի նման կարող են լինել առաջին՝ յենթակա, յերկրորդ՝ ստորոգյալ, յերրորդ՝ յենթակայի լրացում (վորոշիչ, բացահայտիչ), չորրորդ՝ ստորագյալի լրացում—խնդիր (ուղղակի և անուղղակի) և պարագա (տեղի պարագա, ժամանակի պարագա, յեղանակի պարագա, նպատակի, պատճառի և չափ ու քանակի պարագա):

1. Յենթակա—Թվում է, վոր գուց քրուց պիտի ունենաս այսօր նրա հետ:

2. Ստորոգյալ—Դու այն կլինես, ինչ վոր ցակած ում ես:

3. Յենթակայի լրացում:

ա. Վորոշիչ—Այն կոլտողնիկը, վոր հարվածացին է, միշտ իր պլանները գերակատարում է:

բ. Բացահայտիչ—Կոլտողների նոր կանոնադրութիւնը, վոր նրանց ամբացման հիմնաքաղն է, ուժեղ կերպով մասսայականացվում է:

4. Ստորգյալի լրացումներ:

ա. Խնդիր—Յես տեսա, վոր վորսօր դըսպանեց թընչուն:

բ. Պարագա.

1. Տեղի պարագա—Աշխատիր, վորտեղ վոր ցանկանում ես:

2. Ժամանակի պարագա—Յերբ վորսը վերջանա, մենք կսկսենք ճաշել:

3. Յեղանակի պարագա—Գալլն այնքան քաղցած եր, վոր գնալ չեր կարող:

4. Չափ ու քանակի—Թող կռե, ինչքան վոր ուզում ե: Չափիր, վոր չափ կարող ես և ալլն:

5. Պատճառի—Այսոր չկարողացա գալ, վոր օվհետ և շրջան եյի գնացել:

6. Նպատակի—Գնացի այսոր, վոր կոլխոզի անասունները պահեմ:

5. Լրացման լրացումներ (տես 2-րդ առաջադրություն):

Յերկրորդական նախադասությունները վոչ միայն գլխավոր նախադասության լրացումներ են լինում, այլև կարող են իրարու լրացումներ լինել: Նախադասության այսպիսի բարդ կառուցվածքի ժամանակ առաջնակարգ յերկրորդական նախադասությունը դառնում է գլխավոր նախադասության անմիջական լրացում, իսկ մյուսները կողմնակի լրացումներ—որինակ՝ Յես տեսաք, թե ինչպես վորսորդը սպանեց առյուծին և, վոր գիշերը կռվել է ցուլի հետ, վորը պահաս ուժեղ չե առյուծից: Այս նախադասություններից ա տառով նշանակվածը կլինի գլխավոր նախադասությունը, և տառով՝ անմիջական կամ առաջնակարգ յերկրորդական նախադասությունը, և տառով՝ յերկրորդականը, և տառով՝ յերրորդականը: Ե. ձ.~ով նշանակվածները դասին կողմնակի կամ յերկրորդական լրացումներ են գլխավոր նախադասության:

6. Ուղղակի և անուղղակի նախադասություններ.—Ուղղակի կոչվում են այն նախադասությունները, վորոնք անփոփոխ կերպով, տառացի, նույն բառերով ու շարադասությամբ վերցվում են խոսողից կամ գրողից, իսկ անուղղակի՝ յերբ խոսողի կամ գրողի տվյալ նախադասության միայն բովանդակությունն է մեջ բերվում: Ավելի լայն առումով ուղղակի նախադասությունները կոչվում են ցիտատներ: Որինակ՝ Ընկ.

Վենի՛նն ասել և, «Խորհուրդները նոր պետական ասարատ են»: Սա ուղղակի լե, վորովհետև նույնությամբ մեջ է բերված: Իսկ յեթե ասենք՝ Ընկ. Վենինը Խորհուրդներին պետական ասարատ է անվանել, սա դառնում է անուղղակի նախադասություն, վորովհետև միայն բովանդակությունն է մեջ բերված:

Ըստ բովանդակության բարդ նախադասությունների մեջ հաճախ պատահում են և միջանկյալ նախադասություններ: Միջանկյալ կոչվում են այն նախադասությունները, վորոնք մտնում են ուրիշ նախադասությունների մեջ առանց քերականական կապակցության: Որինակ՝ Մեր աշխատանքներն, ասում են, կանոնավոր է գնում: Մասիսը, ինչպես գիտեք, 5,100 մետր բարձրություն ունի: Այս յերկու նախադասությունների մեջ, ասում են, և ինչպես գիտեք նախադասությունները, կտրել, մտել են գլխավոր նախադասությունների մեջ և թե ձևով ու թե բովանդակությամբ այնքան էլ կապակցված չեն գլխավոր նախադասությունների հետ:

Հաճախ գլխավոր նախադասությունները կարող են դառնալ միջանկյալ նախադասություններ, յերբ նրանք կտրում, մտնում են ուղղակի, անուղղակի և յերկրորդական նախադասությունների մեջ: Այսպիսի դեպքերում անշատովում են ստորակետով կամ բուխով և կամ գծերով, որինակ՝ Մեր դպրոցի 5-րդ դասարանը գիտեմ—պիտի վերցնի փոխանցիկը:

3. Ստորադաս նախադասությունների կապակցություն

Ստորադաս նախադասությունները կապակցվում են ա. (կապակցական բառերով և բ. շարադասությամբ:

ա. Կապակցական բառերն են—1. հարաբերական բառեր և 2. ստորադասական շղկապներ:

Հարաբերական բառեր են կոչվում հարաբերական դերանունները և առանց հարցական նշանների, հարցական բառերը: Հարաբերական բառերով կապվում են ստորադաս այնպիսի նախադասություններ, վորոնք հարաբերում են գլխավոր նախադասության մեջ յեղած մի անձան կամ դերանվան և կամ յերբեմն էլ ամբողջ նախադասության, որինակ՝ Այն մարդը, վոր աշխատած է, հաջողություն կունենա: Ընդգծված յերկրորդական միջանկյալ նախադասություն է, հարաբերում է մարդուն փորպես վորոշի: Յերբ ասենք՝ Գործարանը կատարեց իր պա-

նը և դա մեծագույն պարծանք յեղավ իրեն համար: Այստեղ ընդգծված լերկրորդական նախադասութիւնը հարաբերում է ամբողջ նախադասութեան, վորպես ստորոգյալի լրացում:

2. Շաղկապն երով կապակցվում են 2-րդական նախադասութիւնները: Շաղկապները լինում են յերկու տեսակ՝ ստորագասակա և շաղկապն եր և համադասակա շաղկապներով կապակցվում են ստորագաս նախադասութիւններ, իսկ համադասական շաղկապներով համադաս նախադասութիւններ, վորոնք կոչվում են նաև համադր նախադասութիւններ:

Որինակ՝ ա. (ստորագասական) Պարզ ե բողբոխ, վոր դը պօցն երը պիտի սկսվեն սեպտեմբերի մեկից: Յետե ցանկանում ես, կարող ես դիմում տալ դպրոց մտնելու: Շատ եմ ցանկանում սովորել, վորովհետեւ չեմ ուզում կյանքից հետ մնալ և այլն: բ. (Համադասական) Աշակերտները առավոտյան գնացին դպրոց և վերադարձան ճաշից հետո: Ուզում եմ տուն գնալ, բայց չեմ կարող:

4. Շարադասական կապակցություն

Շարադասական կապակցութեամբ նախադասութիւնները կապակցվում են առանց կապակցական բառերի և հատուկ դասավորութեամբ—որինակ՝ Առավոտյան գնացի աշխատանքի, Տ. Ժամ աշխատեցի, յերեկոյան վերադարձա:

Նախադասութիւնների այս դասավորումը նույնպես իր հատուկ ձևերն ունի:

Ինչպես պարզ նախադասութիւնների մեջ բառերը (տես 2-րդ առաջադրութիւն) նույնպես և բարդ նախադասութիւնների մեջ յերկրորդական նախադասութիւնները, դասավորվում են ըստ իրենց ֆունկցիաների կարեւորութեան ու շեշտվածութեան, որինակ՝ Յես տեսա, վոր վորսորդը սպանեց առլուծին: Այստեղ շեշտվում է իմ տեսնելը և առաջին տեղ ե բռնում, բայց լիթե ասենք՝ վոր Վորսորդը սպանեց առլուծին, չես այդ գիտեմ: Այստեղ կարեւորն այն է, վոր վորսորդն է սպանել առլուծին և վոր թե մի ուրիշը և դրա համար ել բռնել է առաջին տեղը: Յետե նախադասութիւնների ֆունկցիաներն ու շեշտվածութիւնը հաշվի չառնվին (ինչ վորանկարելի չէ) ապա ընդհանրապես նախա-

դասութիւնները միշտ պիտի դասավորվին հետևյալ ձևով— ա. գլխավոր նախադասութիւն, բ. առաջնակարգ յերկրորդական, գ. յերկրորդ յերկրորդական նախադասութիւն, դ. յերրորդ յերկրորդական, հետո 4-րդ յերրորդական և այլն:

Սակայն միշտ այսպես չի լինում, վորովհետեւ բովանդակութեան ամենափոքր փոփոխութիւնն անդրադառնում է բառերի ու նախադասութիւնների շարադասական կազմութեան վրա և նրանց դիրքը փոփոխվում է (տես 3-րդ առաջադրութիւն):

5. Բարդ նախադասությունների պարզեցում:

Պարզեցում նշանակում է բարդ նախադասութիւնը պարզի վերածել՝ այսինքն գանազան փոփոխութիւններով նախադասութիւնները միացնել իրար և դարձնել մի նախադասութիւն:

Պարզեցման նպատակն է—հեշտացնել ստորագասական նախադասութիւնների կատարած ֆունկցիաներ գտնելը, այսինքն, թե նրանք ինչ պաշտոն են կատարում բարդ նախադասութեան մեջ:

Պարզեցման համար կատարվում են հետևյալ փոփոխութիւնները՝

1. Յերկրորդական նախադասութեան ստորոգյալը փոխվում է վոչ ստորոգյալի, այսինքն կօրցնում ե իր թիվը, դեմքը, ժամանակը և յեղանակը, դառնալով (նայած իմաստին) գոյական, ածական, մակբայ, կամ դերբայ, հարկ յեղած դեպքում առնելով Ս կամ Դ հոգեր:

2. Դուրս ե գցվում յերկրորդական նախադասութեան բարդ ստորոգյալի եմ ոժանդակ բալը:

3. Դուրս են գցվում յերկրորդական նախադասութեան կապակցական բառերը:

4. Դուրս են գցվում գլխավոր նախադասութեան ցուցական դերանունները, յեթե հարաբերալ են յերկրորդական նախադասութեան:

5. Յերբեմն ել կատարվում են շեշտված բառերի հոլովների փոփոխութիւններ, որինակ՝ Ինչ վոր ասես, նույն կլես: Ըստ վերոհիշյալ կանոնների մենք յերկրորդական նախադասութեան ստորոգյալը (ասես) փոխում ենք վոչ ստորոգյալի և ավելացնում ենք Դ հոգ: ջնջում ենք յերկրորդական նախադասութեան կապակցական բառը (ինչ վոր), դուրս ենք գցում գլխավոր նա-

խաղասութեան ցուցական դերանունը (նույն) և ստացվում է հետևյալ պարզ նախադասութիւն—ասածդ կլսես (խնդիր): Նույն ձևով պարզվում են՝ Բարը, վոք տաշված է, գետին չի մնա: Պարզ լինում է՝ Տաշված քարը գետին չի մնա (վորոշիչ): Դուք վոր մեր դպրոցի լավագույն ուսանողներն եք, արժանի չեք գովասանքի: Պարզ լինում է—Դուք՝ մեր գլխաւոր ցի լավագույն ուսանողներդ՝ արժանի չեք գովասանքի (բացահայտիչ): Գնա, ուր վոր ուղում ես: Պարզ լինում է՝ Գնա ուղածդ տեղը (տեղի պարագա): Արի, չեք ցանկանում ես: Պարզ լինում է՝ Արի, քո ցանկացած ժամանակ (ժամանակի պարագա) և այլն: Սակայն պիտի ասել՝ վոր բոլոր բարդ նախադասութիւնները չի կարելի պարզի վերածել առանց նրանց միտքը աղճատելու և թափել կոտորելու: Որինակ՝ Ինչ վոր եյի, դարձյալ կլինեմ. կարելի չե պարզել և ասել՝ Յեղածս դարձյալ կլինեմ, բայց թե թափն և կոտորում և թե իմաստն և մթաղնում:

Քերականութիւն գիտցողների համար պարզեցումը կամ վերածումը, վորպես նախադասութիւնների կատարած ֆունկցիաներ վորոշվող ձև, առանձին արժեք չի ներկայացնում: Սակայն նոր սովորողների համար վերածումը չափազանց ոգտակար է:

6. Կապակցական բառերի գործադրութեան ձևերը

Ասացինք, վոր ստորադաս նախադասութիւնները զանազան ֆունկցիաներ են կատարում, կարող են լինել յենթակա, ստորոգյալ, յենթակայի լրացում, ստորոգյալի լրացում և լրացման լրացում: Ֆունկցիաների այդ տարբերութիւնը պայմանավորում է այդ նախադասութիւնների ստացած կապակցական բառերի տարբերութիւնը: Այսինքն՝ տարբեր ֆունկցիաներ կատարող նախադասութիւնները ստանում են տարբեր կապակցական բառեր, որինակ՝ Վաղը, վոր հոտավետ է, գեղեցիկ զարդ և պարտեզի—ընդգծված նախադասութիւնը վորոշիչ է և կապակցված է վոր բառով: Ով վոր չսովորի, նա ավանգարդ լինելուց կդադարի: Ընդգծված նախադասութիւնը յենթակա չե և կապակցված է ով վոր բառով: Գնա, ուր վոր ուղում ես: Ընդգծված նախադասութիւնը տեղի պարագա չե և կապակցված է ուր վոր բառով և այլն:

Կապակցական բառերը գործածութեան զանազան ձևերն ու-

նեն և պիտի ասել, վոր բավական էլ խճճված են, տարբեր առումներով իրար փոխարինելու ուղղութեամբ: Ստորեվ մենք տալիս ենք մի քանի հիմնական ձևեր, թե վոր չերկրորդական նախադասութիւնները ինչ կապակցական բառեր են առնում:

1. Յենթակայի դեր կատարող—Յերկրորդական նախադասութիւնները ընդհանրապես առնում են՝ Վոր և Ով հարաբերական բառեր: Այդ նախադասութիւնները հարաբերում են յենթակային՝ որինակ՝ Պետք է, վոր դպրոցները նորոգվեն: Սրա պարզ ձևը լինում է՝ Պետք է նորոգել դպրոցները (յենթակա): Ով վոր չսովորի, նա ավանգարդային լինելուց կդադարի: Պարզ—Չսովորողը ավանգարդ լինելուց կդադարի:

2. Ստորոգյալի դեր կատարող նախադասութիւնները առնում են ինչ կամ ինչ վոր կապակցական բառեր, որինակ՝ Դու ասի կլինես, ինչ վոր ցանկանում ես: Պարզ—Դու կլինես քո ցանկացածը: Ինչ յեղել եմ դարձյալ կլինեմ: Պարզ—Յեղածս դարձյալ կլինեմ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ—Այսպիսի նախադասութիւնները դժվար են պարզեցվում և լիակատար ստորոգյալի գաղափար չեն ապրիս:

3. Յենթակայի լրացում—ա. Վորոշիչի դեր կատարող նախադասութիւնները ստանում են՝ վոր, ինչ, ով, ինչպիսի, վորպիսի, վորի նման և այլն կապակցական բառեր և հարաբերում են առարկային՝ Որինակ՝ Բարը, վոր տաշված է, գետին չի մնա: Պարզ—Տաշված քարը գետին չի մնա: Նորոգումները, ինչ կատարված են, շատ լավ են: Պարզ—Կատարված նորոգումները շատ լավ են: Այն ուսուցիչը, ով իր տեխնիկային չի տիրապետում, նա ուսուցիչ չէ: Պարզ—Տեխնիկային չտիրապետող ուսուցիչը, ուսուցիչ չէ: Վոչ մի ծաղիկայնապիսի հոտ չունի, ինչպիսին սա ունի: Պարզ—Սրանման հոտ ունեցող ծաղիկ չկա: Վոչ մի ծառ այնպիսի տերեւներ չունի, վորպիսին սա ունի: Պարզ—Սրա նման տերեւներ ունեցող ծառ չկա:

բ. Բացահայտչի դերը կատարող նախադասութիւնները ստանում են վոր և ով կապակցական բառեր և հարաբերում են՝ առարկային, կոչական անվան ու անձնական կամ ցուցական դերանուններին: Որինակ՝ Սիմոնը, վոր մեր կուխով աշտի վանդա մե, պարզեցված է: Պարզ—Սիմոնը՝ մեր կուխով աշտի վանդա մե, պարզեցված է: Դուք, վոր մեր գլխաւոր ցի լավագույն ուսանողներ եք՝ արժանի չեք գովասանք-

քի: Պարզ—Դուք մեր դպրոցի լավագույն ուսանողներդ, արժանի չեք գովասանքի: Նա՞նով մեր հարված աշխատողն ե՞կ պարզեցվատրվի: Պարզ—Նա՞ մեր հարվածային աշխատողը՝ կպարզեցվատրվի և այլն:

4. Ստորոգյալի լրացումներ՝

1. Խնդիրներ (տես 2-րդ առաջադրություն) ա. ուղղակի խնդրի դեր կատարող նախադասությունները առնում են՝ ինչ վոր, վոր թե, չեթե կապակցական բառեր և հարաբերում են գլխավոր նախադասության ներգործական ստորոգյալին: Պարզելիս, լիակրորդական նախադասության ստորոգյալը գոյականաբար, հայցական հոլովով և պրծածվում: Որինակ՝ Կիսլավոդսկուց հեռագրեցին, վոր Շիրվանդ ադեն մահացել է: Պարզ—Կիսլավոդսկուց հեռագրեցին Շիրվանդադենի մահանալը: Դու պահանջում ես, ինչ վոր քեզ հասնելու չես, թե վոր տեղ չես պնդում՝ չգիտեմ: Պարզ—Վորտեղ գնալու չգիտեմ:

ԾԱՆՈԹՅՈՒՆՆԵՐ.—Թե ուղղակի և թե անուղղակի խոսքերը—այսինքն վերցրած ցիտատները, բոլորն ել լիառնում են ուղղակի խնդիրներ և հաճախ կապվում են վոր, թե, կամ, չեթե շարկապներով որինակ՝ ընկ. Թումանյանը գրել է՝ վոր Վերքտան է մենակ անպուհում հուզված, խլածայն վողրով սողում դեպի ցած»:

բ. Խնդիրներն ի դեր կատարող նախադասությունները առնում են՝ վոր, թե, չեթե կապակցական բառերը և հարաբերում են գլխավոր նախադասության ստորոգյալին: Պարզեցվում կամ վերածվում են պանդան հոլովներով ու հետադրական բառերով: Որինակ՝ Շատ եմ ցանկանում, վոր նրան ոգնեմ: Պարզ—Շատ եմ ցանկանում նրան ոգնել: Թե նրան պիտի տալ իր, չես գիտելի: Պարզ—Նրան տալը չես գիտելի: Յեթե գալու լինես, ուրախ կլինեմ: Պարզ—Գալուդ համար ուրախ կլինեմ: Վոր պես զի բարձրանաս, պետք է աշխատես: Պարզ—Պետք է աշխատես բարձրանալու համար: Անպայման զրնալու չեմ ժողովի, մասնավոր զվորի մեկ եւլ ուլն ե դրված: Պարզ—Անպայման գնալու չեմ ժողովի իմ գեկուցումը դրված լինելու հետեվանքով:

2. Պարագաներ (տես 2-րդ առաջադրություն):

ա. Տեղի պարագա նախադասությունները առնում են ուր, վոր տեղ, վոր տեղից, վոր տեղով, ինչ տեղից, ինչ տեղով և այլ հարաբերական բառեր: Հա-

րաբերում են գլխավոր նախադասության մեջ չեղած-այն տեղը, այդ տեղ, այստեղ, նույն տեղ, ամեն տեղ, վոչ մի տեղ և այլ բառերի: Վերածվում կամ պարզվում են հայցական, ներգոյական, չերեմն ել տրական հոլովներով: Որինակ՝ Ուր աշխատանք կա, այնտեղ ել կանք կա: Պարզ—Աշխատանք չեղած տեղ կանք կա: Վոր տեղ ջուր կա, այնտեղ ել խոնավություն կլինի: Պարզ—Ջուր չեղած տեղը խոնավություն կլինի: Վոր տեղից յեկել ես, այնտեղ ել գնա: Պարզ—Յեկած տեղը գնա: Վոր տեղով գնացել ես, այնտեղով ել վերադարձիր: Պարզ—Գնացածդ տեղով վերադարձիր: Ինչ տեղից յեկել ես, այնտեղ ել գնա: Պարզ—Յեկածդ տեղը գնա: Ինչ տեղով հնարավոր է, այնտեղով ել թող մեկնի: Պարզ—Հնարավոր չեղած տեղով թող մեկնի:

բ. Ժամանակի պարագա (տես 2-րդ առաջադրություն) նախադասությունները առնում են՝ յերբ, յերբ վոր, մինչ, մինչդեռ, այնինչ, քանի, քանի վոր, քանի դեռ, վոր (յերբ իմաստով) հենց, հենց վոր, թե, չեթե, թե վոր և այլն—կապակցական բառեր: Պարզվում կամ վերածվում են առաջ, հետո, ժամանակ, միջոցին, պես, ի վեր, մինչև և այլ բառերով ու զանազան հոլովներով: Որինակ՝ Յերբ դպրոցները սկսեն, շոգերը արդեն վերացած կլինեն: Պարզ—Դպրոցները սկսելու ժամանակ շոգերն արդեն վերացած կլինեն: Յերբ վոր կգաք, ձեզ հետ բերեք ձեր գրքերը: Պարզ—Գալու ժամանակ ձեզ հետ բերեք ձեր գրքերը: Մինչ գորունը յեկավ, մենք գործիքները նորոգեցինք: Պարզ—Մինչ գալնան գալը մենք գործիքները նորոգեցինք: Մինչ յեկավ ուլս սպասեցինք, նա չեկավ: Պարզ—Հակառակ մեր ամբողջ գիշեր սպասելուն նա չեկավ: Մինչ յեկավ վոր իմ պարտականությունը չկատարեմ, չեմ կարող հանգստանալ: Պարզ—Իմ պարտականությունները կատարելուց առաջ հանգստանալ չեմ կարող: Մինչդեռ մենք քնած ելինք, նրանք հանդում աշխատում էին: Պարզ—Մենք դեռ քնած ժամանակ նրանք հանդում աշխատում էին: Այն ինչ սկսել է յինք, լավ ել վերջացրինք: Պարզ—Սկսածը լավ վերջացրինք: Քանի դեռ արեվ կա, հանգից չպիտի վերադառնամ: Պարզ—Մինչև արեվը մտնելը հանգից չպիտի վերադառնամ: Վոր — (յերբ իմաստով) — Ուսուցիչը խոսում է, ուսանողները լուռ լսում են: Պարզ—Ուսուցչի խոսելու

ժամանակ ուսանողները լուռ լսում են: Փոթորիկը վոր
բարձրացավ, ծառերը կոտրվեցին: Պարզ—Փոթորիկը բարձ-
րանալիս (բարձրանալու ժամանակ) ծառերը կոտրվեցին:
Հենց վոր արեւը ծագեց, բոլորն աշխատանքի անցան:
Պարզ—Արեւը ծագելուն պես բոլորը աշխատանքի անցան: Յե-
թե առաջ ասած ինչից ինչ, չես հոգնձը կգնայի:
Պարզ—Առաջ ինչ հայտնելու պարագային չես հոգնձը կգնայի:
Թե մի ժամ առաջ գնամ, շատ լավ կլինի: Պարզ—Մի ժամ
առաջ գնալու դեպքում շատ լավ կլինի: Թե վոր գալու
լինես, ինչ մոտ կանցնես: Պարզ—Գալու ժամանակ ինչ մոտ
կանցնես և այլն:

գ. Յեղանակի պարագա (տես Զ-րդ առաջադրու-
թյուն). նախադասություններն առնում են՝ ինչպես, ինչ-
պես վոր, վոր պես, վոր պես թե, իբրեւ, վոր
իբրեւ, կարծես, կարծես թե, վոր կարծես
թե, վոր այնպես, վոր, քան, քան թե և այլ բաներ:
Վերածվում կամ պարզվում են՝ պես, նման, քստե
այլն բաներով: Յերկրորդական նախադասության ստորոգյալը յերե-
մքն կարող է բոլորովին ջնջվել, յեթե յերկրորդական ու գլխա-
վոր նախադասության յինթական ու ստորոգյալը նույնն են:
Որինակ՝ Աշխատիր, ինչպես քո հարվածախն ըն-
կերն եւ աշխատում: Պարզ—Աշխատիր քո հարվածախն ըն-
կերով պես, կամ Աշխատիր ինչպես քո հարվածախն ընկերը: Յե-
ղիւր կուտուրական այնպես, ինչպես վայելի ինքն
գային քաղաքացուն: Պարզ—Առհրդային քաղաքացուն
վայել կուտուրական յեղիւր: Այնպիսինը սովորում է, վոր
պես արծիվն եւ սովորում է մեր վրա: Պարզ—Այնպի-
սինը վորպես արծիվ սովորում է մեր վրա: Յերկինքը վո-
րոտում է, կարծես թե անձրեւի պիտի տեղա: Պարզ—
Յերկինքը վորոտում է անձրեւի տեղալու նշաններով: Այնպես եւ
տրամաբանում, վոր իբրեւ չես գիտեմ ձեր սովո-
րելու: Պարզ—Բո տրամաբանության նայելով իբր թե չես
գիտեմ ձեր սովորելուն: Զանգուն այնպես արագ եւ հոսում, վոր
մարդը գահանգում է: Պարզ—Զանգուն մարդու գահանգե-
լու չափով արագ եւ հոսում:

դ. Զափուքանակի պարագա (տես Զ-րդ առաջա-
դրություն) նախադասությունները չափ ու քանակի հասկա-
ցությունը արտահայտում են բաղադրելու յեղանակով, այսինքն

յերկրորդականները իրենց բովանդակությամբ համեմատվում,
բաղադրվում, չափվում և կշռվում են գլխավոր նախադա-
սության բովանդակության հետ և ցույց են տալիս իրար հա-
վասար կամ տարբեր լինելը: Ուրեմն բաղադրությունը լինում է
հավասար ու թյան և տարբեր ու թյան:

ա. Հավասարության բաղադրական նախադասությունները
ցույց են տալիս գլխավոր և յերկրորդական նախադասություն-
ների նշանակության քանակական հավասարություն և առնու-
մեն՝ վորքան, ինչքան, քանի, վորչափ և ինչչափ
կապակցական բաներ: Յերկրորդական նախադասությունների
ստորոգյալը հաճախ կարող է և չգրվել: Պարզվում կամ վերած-
վում են՝ չափ, չափով, թվով, հավասար, համեմատ,
նայելով, քստե և այլ բաներով ու գործիական հոլո-
վով: Որինակ՝ Յեղները քաշում են այնքան, վորքան կա-
րող են: Պարզ—Յեղները քաշում են իրենց կարողության չա-
փով: Վաղեցի այնքան, ինչքան կարող ելի: Պարզ—Կարո-
ղությանս չափով վաղեցի: Գանի յերգում ես, այնքան ձա-
նը դբացվում է: Պարզ—Յերգելով ավելի ձայնդ բացվում է:
Կարդա այնքան, վորքան ուղում ես: Պարզ—Կարդա ու-
ղածիդ չափով: Ինչչափ կարող ես, այնչափ դի: Պարզ—
Գրի կարողությանդ չափով և այլն:

բ. Տարբերության բաղադրական նախա-
դասությունները ցույց են տալիս գլխավորի և յերկ-
րորդականի տարբերությունը և ստանում են՝ քան, քան թե
կապակցական բաներ: Յերկրորդական նախադասությունների
ստորոգյալները կարող են և չգրվել: Վերածվում կամ պարզվում
են բացառական հոլովով: Որինակ՝ Վարդն ավելի հո-
տավետ է, քան մանուշակը: Պարզ—Վարդը մանուշակից
ավելի հոտավետ է: Դուք ավելի լավ եք աշխատում, քան թե
նրա: Պարզ—Դուք նրանցից ավելի լավ եք աշխատում և
այլն:

Կան յերկրորդական նախադասություններ, վորոնք պայ-
մանավորում են գլխավոր նախադասության գործողության կա-
տարումը:

Այսպիսի նախադասություններ լինում են պատճառի,
նպատակի, պայմանական, դիջակա:

ա. Պատճառի նախադասությունները գլխավոր նախադա-
սության պատճառ են դառնում և առնում են՝ վոր, քանի

վոր, նրա համար վոր, այն պատճառով վոր, վորովհետեւ, վորպես թե, իբր թե և այլ կապակցական բառեր: Վերածվում կամ պարզվում են՝ պատճառով, համար և այլ բառերով: Որինակ՝ Պատիվ Չեչոսկինյաններին, վոր հերոսաբար պայքարեցին Արկտիկայի ահեղ տարերքի դեմ: Պարզ—Պատիվ Չեչոսկինյաններին Արկտիկայի ահեղ տարերքի դեմ հերոսաբար պայքարելու համար: Լենինի շքանշանով պարգևատրեցին ողաչու Մոլոկովին, նրա համար վոր ազատեց Չեչոսկինյաններին: Պարզ—Լենինի շքանշանով պարգևատրեցին ողաչու Մոլոկովին Չեչոսկինյաններին ազատելու պատճառով: Պետք է կոտորել ֆասսատուներին, այն պատճառով վոր հարվածում են բերքին: Պարզ—Պետք է կոտորել ֆասսատուներին բերքին հարվածելու համար, ինչ կարող է անել ձյունը, քանի վոր տաքերն արդեն սկսվել են: Ուսուցիչները գանգատվում են՝ իբր թե ուսանողները շոգերին աշխատել չեն կարող: Պարզ—Ուսուցիչները գանգատվում են շոգերին ուսանողների չպարապելու պատճառով և այլն:

բ. Նպատակի նախադասությունները ցույց են տալիս գլխավոր նախադասության գործողության նպատակը և առնում են՝ վոր, վորպեսզի, վորպես թե, իբր թե և այլ կապակցական բառեր: Վերածվում կամ պարզվում են՝ նպատակով և համար բառերով: Որինակ՝ Գալիս ես, վոր աշխատանքի գնանք: Պարզ—Գալիս ես աշխատանքի գնալու համար: Դասս սովորում եմ, վորպեսզի կարողանամ հաջողությամբ քննություն տալ: Պարզ—Դասս սովորում եմ քննությունները հաջողությամբ տալու համար: Յեկա, վորպես թե տեսնեմ ընկերոջս: Պարզ—Յեկա ընկերոջս տեսնելու նպատակով: Այսօր յես յեկա Յերեվան, իբր թե թատրոն գնալու: Պարզ—Այսօր յես յեկա Յերեվան թատրոն գնալու համար և այլն:

գ. Պայմանական նախադասությունները գլխավոր նախադասության գործողության, պայմանական, չենթադրական հիմունքն են տալիս, որինակ՝ Յեթե անձրեւի գա, ցանքը կլավանա: Պարզ—Անձրեւի գալով ցանքը կլավանա: Պայմանական նախադասությունները առնում են վոր, թե, յեթե, թեվոր, յեթե միայն, միայն թե, միայն, լուկ կապակցական բառեր: Վերածվում կամ պարզվում են դժվարությամբ, վորովհետեւ մտքի ու թափի փոփոխություն է առաջ գալիս, որինակ՝ Վոր դարձան շուտ բացվելը, դարձանացանի պը-

լանը վարդաց վերջացած կլիներ: Այգիները յեթե չթրվեցին, չորացած կլինեյին: Թե վոր դաս, մեր գործը ապահովված է: Մենք կսպասենք, յեթե միայն գաւ: Նստիք, միայն թե կարգաւ: Գնա, միայն սովորիք: Ամբողջ դասարանը լավ է սովորում, լուկ Սեդրակն է վոր լավ է ծագվում:

7. Համադաս նախադասությունների կապակցությամբ ձևերը

Համադասությամբ կապակցվում են բարդ նախադասության մեջ մտած իրարից անկախ, համազոր նախադասություններ: Այդ նախադասությունները ըստ իրենց կառուցման ֆունկցիաների իրար լրացում չեն դառնում, բայց ըստ ելության բարդ նախադասության մասն են կազմում և ամբողջացնում են արտահայտած միտքը:

Համադաս նախադասությունները կապակցվում են՝ ա. Համադասական շաղկապներով ու շաղկապական բառերով:

բ. Յուցական բառերով:

գ. Շարադասությամբ:

ա. Համադասական շաղկապների և շաղկապական բառերի (տես Յորդ առաջադրություն) գործածության ձևերը համազոր նախադասությունների կապակցելու գործում—

1. Յեւ, ու շաղկապները գրվում են չերկու համազոր նախադասությունների միջև: Որինակ՝ տրակտորները գնացին հանդիմանալու: Ավտոները գնացին Թիֆլիս ու վերադարձան:

Յեթե համազոր նախադասությունները բաղմակի չեն և, ու գրվում է միայն վերջին նախադասությունից առաջ. որինակ՝ Հնձվորները հնձեցին, կապեցին, բարդեցին և վերադարձան:

Յեւ, և շաղկապները չերեմն գործածվում են՝ յեւ, այլ յեւ, նա յեւ, նույնպես և, ինչպես և, միջև և անգամ, միջև իսկ, նույնիսկ և այլ շաղկապական բառերի նշանակությամբ և կազմում են համազոր նախադասություններ—որինակ՝ և դու չեկար: Դու չեկար:

Այսինքն դու ևս չեկար: Յե վ դու ավելանում ես մեր կամպանիայի վրա: Դու յե վ ս ավելանում ես մեր կամպանիայի վրա: Վոչ թե յես, յե վ դու չես կարող այս քարը բարձրացնել: Վոչ թե յես, ա յ լ յե վ դու չես կարող այս քարը բարձրացնել: Բոլորն աշխատում են, աշխատում եր յե վ Սարգիսը: Բոլորն աշխատում եյին, ն ու յ ն պ ե ս յե վ Սարգիսը: Մենք խոսում եյինք, խոսում եյիք յե վ դուք: Մենք խոսում եյինք, ն մ ա ն ա պ ե ս յե վ դուք: Այսպիսի փոթորկից յե վ ծառեր շուռ կգան: Տյսպիսի փոթորկից մ ի ն չե վ ա ն գ ա մ ծառեր շուռ կգան (այսպիսի փոթորկից ծառերն ե լ շուռ կգան): Այսպիսի տաքության յե վ քարերը կհալչին: Այսպիսի տաքության քարերն ա ն գ ա մ կհալչին, Վոչեվորությունը շատ ուժեղ եր յե վ յերեխաներն ե լ մասնակցեցին: Վոչեվորությունը շատ ուժեղ եր, յերեխաները մ ի ն չե ի ս կ մասնակցեցին: Յե վ ծերերը դուրս յեկան հնձին մասնակցելու: Ն ու յ ն ի ս կ ծերերը դուրս յեկան հնձին մասնակցելու և ալչն:

Ա յ ն ե լ, մ ի ա յ ն, վ ո չ ա յ լ ի ն չ. . . բ ա յ ց յ ե թ ե, վ ո չ ա յ լ ի ն չ. . . յ ե թ ե վ ո չ, գ ո ն ե, գ ե թ և ա յ լ մ ի շարք կապակցական բառերը վորոշ չափով սահմանափակում են իրենց կապակցած նախադասությունների միտքը, իսկ մ ա ն ա վ ա ն դ, մ ա ն ա վ ա ն դ վ ո Ր, վ ո չ մ ի ա յ ն. . . ա յ լ ե վ, ի ն չ պ ե ս. . . ն ու յ ն պ ե ս յե վ կապակցական բառերը ընդհակառակը ընդարձակում, ուժեղացնում են, որինակ՝ Փրանսերեն քիչ եմ կարդում, ա յ ն ե լ ա շ ի ա տ ա ն ք ի ժ ա մ ե Ր ի ց դ ու Ր ա: Յեթե չես գալիս, գ ո ն ե մ ի ն ա մ ա կ գ Ր ի Ր: Յեթե չես սիրում, գ ե թ մ ի ա տ ի Ր: Թե չես գալիս, գ ո ն ե ա ս ա: Բնտոնը վոչ ա յ լ ի ն չ ե, յ ե թ ե վ ո չ ց ե մ ե ն տ ի ու ա վ ա զ ի խ ա ո ն ու Ր դ Ր: Ընդգծված յերկրորդական նախադասությունները սահմանափակում են առաջինի միտքը:

Բայց չեթե ասենք՝ Շատ եմ սիրում ուսերեն, մ ա ն ա վ ա ն դ վ ո Ր Հ ո կ տ ե մ Ր ե Ր ի ա ո ա ջ ա տ ա Ր լ ե զ ու ն ե: Այս նախադասության մեջ յերկրորդական նախադասությունը կապակցված ե մ ա ն ա վ ա ն դ բառով և միտքն ավելի ընդարձակում, շեշտում ե: Վոչ միայն պլանը կատարի ենք, ա յ լ ե գ ե Ր ա կ ա տ ա Ր ե Ր: Ինչպես հունձը վերջացրինք, ն ու յ ն պ ե ս յե վ կ ա լ Ր կ վ ե Ր ջ ա ց ն ե ն ք յե վ ա յ լ ն: Նույն պես ավելի շեշտում, ընդարձակում են:

4. Ուր մնաց վոր, ուր մնաց թե շաղկապու-

կան բառերով կապակցած նախադասությունների նշանակությունները հակադրվում են իրար: Որինակ՝ Դեռ չեն վերջացրել 7 ամյակը, ուր մնաց վոր համալսարան մտնեն: Դեռ տեղից վեր չես կացել, ուր մնաց թե դպրոց գնաս և ալչն:

5. Յե վ, թե, վ ո չ, վ ո չ ե լ շաղկապները յերբեմն շեշտելու համար գործածվում են բոլոր համադաս նախադասությունների հետ. այս դեպքում՝ և, թե, շաղկապները միշտ շեշտ են առնում իրանց վրա. որինակ՝ Բոլորը ձգտում են ավանդադային լինել, և՛ ուսանողները, և՛ ուսուցիչները, և՛ հասկազմակերպությունները: Բարձր ե ձեր դպրոցի դիսցիպլինան, թե դասի ժամանակ, թե դասերից դուրս և թե դասամիջոցներին: Ձեր գործին վոչ խառնվել եմ, վոչ տեսել և վոչ ել գիտեմ վորեմբ բան և ալչն:

6. Դ ա Ր ձ յ ա լ, ե լ ի, ն ո Ր ի ց, յ ե վ ս բառերը կապակցում են ալնպիսի յերկրորդական նախադասություններ, վորոնք առաջին նախադասության գործողության կրկնակի կատարման իմաստն են ցույց տալիս, որինակ՝ Մի անգամ տեսել եմ Արագածը, դարձյալ կուգեմ տեսնել: Մինչև հիմա դասի եյի, ելի դասի լեմ գնալու: Յերեք անգամ կարդացել եմ «Լենինի դմի հարցերը», նորից պիտի կարդամ: Յերկու անգամ գնացել եմ Սեվան, ևս ուզում եմ գնալ:

7. Վ ո Ր Ր. . . վ ո Ր Ր, մ ե կ Ր. . . մ յ ու Ր, վ ո մ ա ն ք. . . վ ո մ ա ն ք, կ ե ս Ր. . . կ ե ս Ր, մ ա ս ա մ Ր. . . մ ա ս ա մ Ր, շ ա տ Ր. . . ք ի չ Ր, կ ա վ ո Ր. . . կ ա վ ո Ր և ա յ լ ն: Կապակցում են ալնպիսի նախադասություններ, վորոնք գլխավոր նախադասության գործողության իմաստի թվաբերական են ցույց տալիս. որինակ՝ Մեր գյուղի ծառատունկը սկսեց՝ վորը բանը վերջրեց, վորը կացին, վորը տունկինք պատրաստեց, վորը տեղեր փորեց և մենք 5 ժամվա մեջ վերջացրինք մեր պլանը: Յորենի արտում կոլխոդնիկները հունձ եյին անում՝ մինը քաղում, մինը կապում և մյուսը հավաքում ու դիզում եր: Հարսանիք եր գյուղում՝ վոմանք յերգում, վոմանք պարում, վոմանք ել նստած քեֆ եյին անում: Սարում տեսա կոլխոդի անասունները՝ կեսը նստած, կեսը կանգնած, կեսն ել արածում եր: Դեղ գործածելը մասամբ լավ ե, մասամբ վատ: Մեր ճանապարհի շատը գնաց, քիչը մնաց:

8. Յերբեմն... յերբեմն, մերթ... մերթ, մեկ... մեկ, նախ, առաջ, նախ և առաջ, այժմ, հետո, ապա, վերջը, վերջապես, վերջի վերջո, առաջին, յերկրորդ և այլ կապակցական բառերը կապում են այնպիսի չերկրորդականները, վորոնք առաջիննախադասութեան յենթակայի գործողութեան գոգորդումն են ցույց տալիս. որինակ՝ Լուսինը չերբեմն փայլում է պայծառ, չերբեմն թաղնվում է ամպերի տակ։ Մարտ ամսում փոփոխական է կլիման, մերթ անձրև, մերթ ել պարզ արև է անում։ Ռադիոները մեկ չերբում են, մեկ նվազում, մեկ զեկուցում, մեկ լուրեր են հաղորդում։ Նախ լսիր, հետո խոսիր։ Առաջ միջնակարգ ավարտիր, հետո համալսարան գնա։ Այժմ քնիր, քիչ հանգստացիր, վոր առավոտ ժամանակին աշխատանքի գնա։ Հետո կերգես, հիմա սովորիր։ Այսոր մեզ մոտ հյուր կմնաս, ապա առավոտը կգնաս։ Վերջը կիմանաս, քեզ լավ եմ ուզում թե վատ։ Այսոր մեր ուսուցիչը չերկար խոսեց և վերջի վերջո հայտնեց, վոր վաղը քննութիւններ ունենք։ Շատ չարչարելուց հետո, վերջապես հասար քո նպատակին։ Ձեր դպրոցում մի քանի դրական կողմեր կան—առաջին՝ բարձր և դիսցիպլինան, չերկրորդ՝ հարգանք կա դեպի ուսուցչութիւնը, յերրորդ՝ լավ գործում է գրադարանը, չորրորդ՝ լավ են աշխատում և հասկալմակերպութիւնները և այլն։

9. Այսինքն, այն է, իմա և այլն բառերը կապում են բացահայտող նախադասութիւններ—որինակ՝ Այսոր մեր դպրոցին շատ այցելուներ չեկան՝ այսինքն կոլխոզնիկներ, բանվորներ, ուսուցիչներ և կոմյերիտականներ։ Դեռ շատ գործ ունիս, այն է՝ կարինեաը կարգավորել, փորձեր կատարել։ Պաշտար մտքի հաշիշի դեմ, իմա՝ կրոնի դեմ։

10. Ուստի, ուստի և, ուրեմն, ապա ուրեմն, հետեւաբար, հետեւապես, սրա համար, դրա համար, նրա համար, այս պատճառով, այդ պատճառով և այլ կապում են պատճառի և արդասիքի իմաստ ունեցող նախադասութիւնները, որինակ՝ Դու քո աշխատանքը վերջացրիր, ուստի կարող ես գնալ։ Յերկուսը միասին ստորագրել են, ուրեմն համաձայն է դիմումի բովանդակութեան։ Ուզում ես վոր մենք ել գանք, հետեւաբար պիտի սպասես։ Խոստացել ես մինչև ժամը 5-ը աշխատել, հետեւապես պիտի աշխատես։ Լավ ուսանողը պարծանք

է իր ուսուցչին, սրա համար ել սիրվում է նրանից։ Ուզում եմ քեզ հետ միասին աշխատել, դրա համար ել քեզ մոտ յեկա։ Նա իրենց տանը հյուր է ունեցել, այդ պատճառով ուշացավ։ Նա վորոշել էր Հայաստանի բուսականութիւնը ուսումնասիրել, այդ նպատակով ել Հայաստան է յեկել և այլն։

11. Վոչ թե... ալ, վոչ թե... ալ ընդհակառակն, կամ, կամ թե, կամ թե չե, և կամ, թե, միայն, միայն թե, թե չե, ապա թե վոչ, բայց, բայց և այնպէս, բայց դարձալ, բայց նորից, սակայն, և սակայն, այնուամենայնիվ, մինչդեռ, իսկ, ընդհակառակը, հապա, բա և այլն—կապում են հակադրական իմաստ ունեցող նախադասութիւնները։ Որինակ՝ Դու վոչ թե կարդում ես, ալ չերբում ես։ Դասերը սովորելու համար վոչ թե անընդհատ պիտի խոսես, ալ ընդհակառակն պիտի նստես և լուրջ կերպով աշխատես։ Դու բարեխիղճ պիտի աշխատես, կամ թողնես գործը։ Պետք է նավարկես փոթորիկի դեմ, կամ թե խաբիս պիտի գցես։ Պիտի դաս մեզ հետ հանդ աշխատելու, կամ թե չե պիտի գնաս արհեստանոց։ Դու չեկել ես այստեղ աշխատելու, թե մեր գործերը խանգարելու։ Թե ինչ եք արել հանդում, ինձ հայտնի չե, միայն չենթադրում եմ լավ աշխատած կլինենք։ Մարդը միշտ աշխատելու չե իր վրա, ապա թե վոչ կյանքից հետ կմնա։ Խոստանում ես միշտ մի հոգոված գրել, բայց չես գրում։ Ձեմ ուզում հյուր գնալ, բայց և այնպէս գնում եմ։ Ձեյի ուզում մնալ, բայց դարձալ մնացի։ Աշխատողը ամեն ինչ կհաղթահարի, իսկ չաշխատողն ընդհակառակն ամեն բանի առաջ կանգ կառնի։ Նա մինչև հիմի աշխատել է, ապա դու ի՞նչ ես արել։ Նա գնաց, բա դու ինչու չես կանգնել և այլն։

բ. ՅՈՒՅԱԿԱՆ ԲԱՌԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐ

Յուցական բառերով կապվում են այնպիսի չերկրորդական նախադասութիւնները, վորոնք ակնարկում են առաջին նախադասութեան մի բառին կամ ամբողջ նախադասութեան։ Վորպես կապակցութիւն գործածվում են՝

1. Յուցական դերանուններ՝ սա, դա, նա, այս, այդ, այն, սրանք, դրանք, այսպէս, այդպէս, այնպէս և դասական թվականներ—առաջին, չերկրորդ, չերրորդ, չորրորդ, հինգերորդ և այլն։ Որինակ՝ Մեր

կողմնորոշման ժամանակ Մաքոն, Վանոն և Միշան լավ են աշխատում, նա (Մաքոն) բրիգադիւր է, դա (Վանոն) շարքաւին, իսկ սա (Մաշան) նախագահ: Կոլխոզի այս յերեք բրիգադներն աշխատում են սոցմըման կարգով, նրանք (կամ առաջինները) հունձ են անում, դրանք (կամ յերկրորդները) հավաքում են, իսկ սրանք (կամ յերրորդները) կապում են: Յերեք տրակտորով մեր հանդը հերկում են, առաջինը (կամ նա) որակաւ հերկում էր 5 հեկտար, յերկրորդը (կամ դա) 4 հեկտար, իսկ վերջինը (կամ սա) 6 հեկտար: Վոր մենք մեր հաջողութունները պարտական ենք մեր դիրկտորին, սա (կամ դա) գիտե մեր ամբողջ կոլեկտիւ: Իրավունք չունես ամեն ոք աշխատանքից ուշանալու, դրա համար քեզ կմեղադրեն: Վերաբերվիր վորպես մարդ, ա ի դ պ ի ս ի վերաբերմունք բարի պետք է:

դ. ՇԱՐԱԴԱՍԱԿԱՆ ԿԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ

(Տես 3-րդ առաջադրութիւնը).

Շարադասական կոչվում է այնպիսի կապակցութիւն, յերեք նախադասութիւնները միանում են իրենց բովանդակութեամբ, բայց առանց կապակցական բառերի: Շարադասութեամբ կապակցված նախադասութիւնները կարող են ունենալ տարբեր յենթականեր կամ մի յենթակա՝ բոլորի համար, որինակ՝ (տարբեր յենթականերով) Յերկինքը մթազնեց, կայծակը փայլատակեց, ամպերը վորոտացին, անձրև տեղաց, արտերը վորոգվեցին և այլն, (նույն յենթակայով). Հեղեղը բարձրացավ, վորոգեց ամպերը, քանդեց կամուրջները, ծածկեց դաշտավայրը:

Այս տեսակ նախադասութիւններին նման են ինքնահարց ու պատասխանի նախադասութիւնները—որինակ՝ Գիտե՞ք ինչ է նշանակում նոր մարդը: Նոր մարդը նա չե, ով անողոք կըռվում է դասակարգային պայքարում, հարվածային և սոցիալիզմի կառուցման մեջ, կուլտուրական և և ազատագրված և անհատական հաշիվներից:

դ. ԽԱՌՆ ԿԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ

Յերկուսից ավելի նախադասութիւններից կազմված բարդ նախադասութիւնները հաճախ կապակցվում են՝ թե ստորադասական և թե համադասական ձևով (տես 3-րդ առաջադրութիւնը). որինակ՝ Գարունը յեկավ, կանաչը, վոր այնքան զմայլեցուցիչ է, ծածկեց սար ու ձոր, հովիվը վոչխարի հոտն առաջ գցած, զուրա յեկավ գյուղից և բարձրացավ դեպի այն սարը, վորն ա-

մենից շուտ է բացված և վոր ավելի շատ է ծածկված ծաղիկներով:

Յերեքն ստորադասական և համադասական նախադասութիւնները կարող են իրար տեղ գործածվել և փոխարինել իրար—որինակ՝ Յես ուզում եյի կարգալ, դրա համար յեկա: Այս նույն նախադասութիւնը կարելի յե կապակցել ստորադասական յեղանակով, առանց միտքը փոփոխելու—որինակ՝ Յես յեկա՝ վորպեսզի կարգամ:

Համադաս—Դու լավ եյիր աշխատում, ուստի քեզ պարգեւատրեցին: Սրա ստորադասը լինում է, վորովհետև դու լավ եյիր աշխատում՝ քեզ պարգեւատրեցին: Այս նախադասութիւնը կարելի յե կապակցել շարադասական յեղանակով (այսինքն առանց կապակցական բառերի), առանց փոփոխելու նրա բովանդակութիւնը: Որինակ՝ Լավ եյիր աշխատում, քեզ պարգեւատրեցին և այլն:

ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Բառերն ու նախադասութիւնները միաձուլել, միապաղաղ կերպով չեն կապակցվում: Սրանք կապակցվում և արտահայտվում են վորոշ պառզանքերով, ընդհատումներով, դադարներով, շեշտով ու ձայնի յեղեմներով: Ուրեմն լեզվի մեջ կապակցումն ու ընդհատումը նույնպես հակադրութիւնների մի միասնութիւն է կազմում ու առանց մեկի չի կարող լինել և մյուսը:

Ինչպես հնչումներն արտահայտվում են տառերով, ընդհանրապես այս ընդհատումներն ել արտահայտվում են վորոշ նշաններով, վորոնք կոչվում են կետադրութեան նշաններ: Կետադրութիւնը ա յ ս ն շ ա ն ն ե ռ ի գ ո Ր ծ ա ծ ու թ յ ա ն ձ և ե ռ ի ու ս մ ու ն ք ն է:

Կետադրութեան այս նշանները բաժանվում են 3 տեսակի՝ 1. տրոհութեան նշաններ, 2. բացահյտութեան նշաններ և 3. առողջութեան նշաններ:

Տրոհութեան նշաններ—Բառերի ու նախադասութիւնների միջև յեղած պառզանքեր, ընդհատումներն ու տրոհումներն արտահայտող նշանները կոչվում են տրոհութեան նշաններ: Տրոհութեան նշաններն են—ս տ ր ա կ ե տ, (), բ ու թ (), մ ի ջ ա կ ե տ (.) և վ ե ռ ջ ա կ ե տ (:):

1. ՍՏՈՐԱԿԵՏԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ

Ստորակետով անջատվում են՝

ա. Նախադասութիւնների մեջ յեղած բազմակի բառերը՝

յեթե նրանք կապակցված չեն չեմ, կամ, ու շաղկապներով, որինակ՝ Զարենցը, Զարյանը, Մահարին և Զորյանը գործներ են Պարոնյանը տաղանդավոր, սրամիտ, զվարճախոս, հեգնող և խոհուն յերգիծարան եր:

բ. Յեմ, ու, թե շաղկապներով կապակցվող համադաս նախադասությունները, յերբ այդ նախադասությունների յենթակաները տարբեր են իրարից և կամ յերբ (և, թե) շաղկապները կրկնվում են բոլոր նախադասությունների հետ շեղված ձևով—որինակ՝ Ամպերը վորտացին, և կարկուտը տեղաց: Աշունը չեկավ, և թունդները չվեցին: Բոլոր կոմյերիտականները աշխատում են առաջին տեղը գրավել, թե գործարանում, թե կոլխոզում, թե դպրոցում: Բարձր և ձեր դպրոցի վորակը, և՛ ահագեմիտյով, և՛ ֆիզկուլտուրայով, և՛ պոլիտեխնիկ աշխատանքներով:

գ. Բարդ նախադասության մեջ յեղած առաջադաս, միջադաս, վերջադաս և միջանկյալ նախադասություններ—որինակ՝ նախադաս. Յերբ զանգը հնչեց, աշակերտները շտապեցին դպրոցը: Միջադաս—Դպրոցը, վոր ուսման ու դաստիարակության վայր է, որինակելի պետք է լինի: Վերջադաս—Պատուհանները ծածկեցեք, վոր քամին չկտորի ապակիները:

դ. Կրճատ յերկրորդական նախադասությունները—որինակ՝ Կոմյերիտականները, հարվածային ու մարտնչող (վորոնք հարվածային ու մարտնչող ելին), իրենց պլանները կատարեցին: Գալը, քաղցած ու հոգնած (վոր քաղցած ու հոգնած է), վախչում է սարն ի վեր: Դարավոր կադրին, կանաչ ու գովասուն (վոր կանաչ ու գովասուն եր), իր շվաքի տակ եր առնում հընձվորներին: Բանակը, զինված թնդանոթներով (վոր զինված եր թնդանոթներով), գրավեց թշնամու դիրքերը: Իմ վերարկուն, գուտ բրդից (վոր գուտ բրդից եր), 160 ուրբի արժե:

յե. Շարադասությամբ կապակցված կարճ նախադասությունները՝ որինակ՝ Յեկա, տեսա, հաղթեցի: Գնա, հալտնիր, վերադարձիր:

զ. Ինչպես... նույնպես և, վորթե... այլ, կամ, կամ... կամ, թե. կամ թե չե, և այլն շաղկապներով կապակցված համադաս նախադասությունները, որինակ՝ Ինչպես Յերկինքը մթնեց, ամպերը վորտացին, նույնպես և կարկուտը տեղաց և հեղեղ առաջացավ: Նա սիրում եր, ինչպես ուսումը, նույնպես, և ուսանողությունը: Նա ուսուցչությանը վոչ թե ատում եր, այլ սիրում եր: Դու կոտորեաթիվ ես գնում, թե դպրոց և այլն:

և. Բարդ նախադասության նախադաս, միջադաս և վերջադաս ձայնարկություններն ու կոչականները—որինակ՝ Ա՛խ, ինչպես անեմ, վոր հաղթանակով դուրս գամ: Թշնամուն հաղթելուց հետո, վոր քան, ուրախալի յե հանգստանալ: Գնանք, մեղ կանչում են, ընկերներ: Հեռացի՛ր, ալտո յե գալիս: Բախտավոր մարդ ես, չերանի, քեզ:

Ստորակետով չպետք է անջատվեն՝

ա. Բազմակի բառեր, յեթե կապակցված են (և, ու) շաղկապներով—որինակ՝ Արամը և Գուրգենը աշխատում են: Արամը և Գուրգենը բարձր ու սահուն կարդում են: Արամը և Գուրգենը բարձր ու սահուն կարդում և բացատրում են:

Ինչպես տեսնում եք բոլոր բազմակի բառերը, վորոնք կապակցված են և, ու շաղկապներով ստորակետով չեն անջատվում:

բ. Կամ շաղկապով կապակցված նույն նշանակութուն ունեցող նախադասությունները և բառերը—որինակ՝ Մարդուս համար անհրաժեշտություն և քաղաքավարություն կամ կուլտուրականություն: Դարեգինը խնդում կամ ծիծաղում է: Սուրբիկը խաղում կամ զվարճանում է: Անրոպլան կամ սավառնակ և այլն:

գ. Վոր, թե շաղկապները չերբ միանում են ուրիշ բառերի հետ և կազմում են շաղկապական բառեր՝ կամ թարմատարի իմաստով են գործածվում. որինակ՝ Իրավ վոր մեր ուսուցիչն է գալիս: Իսկապես վոր ախորժակ չունեմ: Ճիշտ վոր նա ասաց այդ խոսքը և այլն:

դ. Բազմակի վորոշիչներ՝ յեթե լրացնում են իրար և միասնաբար են դառնում վորպես վորոշիչ մի գոյականի—որինակ՝ Փայլիլուն պայծառ լույս: Մի շողողուն փայլուն լաման: Գունազեղ ծաղկավետ հովիտ: Մի վոսկե գեղեցիկ ժամացույց և այլն:

յե. Յերկրորդական նախադասությունները յեթե յերկար լինեն շփոթություն չառաջացնելու համար ստորակետի փոխարեն տիրե (—) կամ գիծ են գործածում—որինակ՝ Շեքսպիրը—Անգլիայի թատերգակը, «Համլետ»-ի և «Ոթելլո»-յի հեղինակը—յերկար տարիներ տիրապետում եր թատրոնական բեմերին:

2. ԲՈՒԹԻ ԳՈՐԾ ՄՇՈՒԹՅՈՒՆԸ

Բուժը դրվում է՝

ա. Մի գեղչված կապակցական բառի և ստորոգյալի տեղ—որինակ՝ Արամը գնաց դպրոց, իսկ Գուրգենը՝ թատրոն: Հարց

կա՝ (վոր) դու կարող ես պատասխանել: Հարց՝ (կա) չես կարող: Ինչ վոր պահանջես՝ (նույն) կտրվի և այլն:

բ. Լրացական բառերի կամ նախադասությունների թվարկու-
թյան ժամանակ—որինակ՝ Դպրոցի ուսուցիչները՝ Վարդանյանը,
Պետրոսյանը, Կիրակոսյանը, Դրամբյանը և այլն լավ պարապում
են իրենց դասերը: Այսուհետև՝ ճարտար, վեհապետ ու ուժեղ կենդա-
նի յե: Շուտով մենք գրելու լինք, նախ՝ շարագրություն, յերկրորդ՝
ռեֆերատ, յերրորդ՝ վստանավոր, չորրորդ՝ պատմվածք, հինգե-
րորդ՝ վեպ և այլն: Հոգեփոխան իր ղեկուցման մեջ գրեց մի քա-
նի հիմնական խնդիրներ՝ առաջին՝ գործիքների նորոգում, յերկ-
րորդ՝ անասունների խնամում, յերրորդ՝ բրդագործների կազմա-
կերպում, չորրորդ՝ սերմի գտում և վերջապես՝ գարնանացանի
կազմակերպում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Բութի կրկնությունից խուսափելու
համար հաճախ բութի տեղ գործածում են տիրե (—):
Որինակ՝ Հոգեփոխան իր ղեկուցման մեջ գրեց մի քա-
նի հիմնական խնդիրներ—առաջին՝ գործիքների նորո-
գում, յերկրորդ՝ անասունների խնամում և այլն:

գ. Ուղղակի և անուղղակի կարճ նախադասությունների ա-
ռաջ, յերբ չափերտներ չունեն—որինակ՝ Յես հայտնեցի՝ վոր չե-
լի ուզում գնալ: Դու սասցիր՝ Թե բանվորները արդեն վերջաց-
րած կլինեն իրենց գործը և այլն:

դ. Բացատրական ֆունկցիա կատարող յերկրորդական նա-
խադասություններից առաջ, որինակ՝ Այսոր դասարանի կարգը
խանգարեցին մեր մի քանի ուսանողները, ինչպես՝ Դուրգենը,
Արամը և Սարգիսը: Մի բան վոր չեմ հավատում, դա՝ մեր Դուր-
գենի կարգ խանգարելն է:

յե. Ուղղակի նախադասություններից առաջ՝ յեթե սկսում
են Թե, կամ վոր շաղկապներով առանց չափերտների—որինակ՝
Ուսանողները հայտնեցին՝ վոր վաղը մենք չենք կարող հավաք-
վել: Կոլխոզի նախագահը հայտարարեց, Թե՝ վաղը բոլորը պետք
է հունձի գնան:

զ. Բացահայտից առաջ, բացահայտյալից անջատելու հա-
մար, որինակ՝ Կոլխոզի նախագահ՝ Ընկ. Գեվորգը, մեկնեց քա-
ղաք:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Բացահայտիչը յերկար լինելու դեպ-
քում բութի փոխարեն գիծ (—) (տիրե) չեն գործա-
ծում (տես ստորակետի գործածությունն յե. կետ):

ե. Յերբեմն հատկացուցչի և հատկացյալի միջև՝ յերբ հա տ-
կացյալը միջանկյալ լրացում ունի—որինակ՝ Ուսուցչի՝ աշակեր-
տության վրա թափած աշխատանքները, մեզ մոտ են միայն գը-
նահատվում: Այս ծառի՝ մուխից դեղնած ու թռչնած տերեֆները
թափվում են անընդհատ: Դպրոցի՝ Զարգուցված ու ֆլորված ա-
պակիները պետք է նորոգել:

3. ՄԻՋԱԿԵՏԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ

Միջակետ դրվում է՝

ա. Համադաս յերկու նախադասությունների միջև՝ յերբ ա-
մեն մեկը ունի յերկրորդական նախադասություն, և մեկը հակա-
դիր է մյուսին, որինակ՝ Յես յեկա, վոր ձեզ տանելի մեր տուն
հյուր. յես չեկա, վոր ինքս մնայի ձեր տանը հյուր: Զուրը տըր-
ված է, վոր այգին ջրես. ջուրը չի տրված, վոր կապես աչտե-
ղի գնա կորչի:

բ. Բազմակի յեթականների միջև՝ յերբ սրանք ունենան
յերկրորդական նախադասություն—լրացումներ, որինակ՝ Արեվը,
վոր փողփողում է. դաշտերը, վոր կանաչում են. ծառերը, վոր
ծաղկում են. գեփյուղը, վոր վետվետում է, հրաշալի տրամա-
դրություն է ստեղծում բոլոր կենդանիների մեջ:

դ. Յիտատներից առաջ՝ լինի բառացի կամ վոչ բառացի—
որինակ՝ Թումանյանը գրել է. «Բազմած լուսնի նուրբ շողերին,
հովի թեմին՝ թռչելով՝ փերինները սարի գլխին հավաքվեցին
զիշերով»: Կամ յեթե միայն բովանդակությունը վերցնենք՝ որի-
նակ՝ Թումանյանը գրել է. Փերինները լուսնի նուրբ շողերին և
հովի թեմերին բազմած, թռչելով՝ սարի գլխին հավաքվեցին գի-
շերով:

Վերջին դեպքում չափերտներ չեն դրվում:

յե. Համառոտագրության մեջ—որինակ՝ Հ. Ս. Խ. Հ. և այլն:

4. ՎԵՐՋԱԿԵՏԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջակետ դրվում է ամբողջացած, վերջացած նախադասու-
թյունների վերջը: Վերջակետով բաժանված նախադասություն-
ները միայն իմաստով և բովանդակությամբ իրար հետ առնչու-
թյուն ունին: Ձևով նրանք իրարից անջատված են և բոլորովին
ուրույն նախադասություններ են—որինակ՝ Այ ջան տղա, չորան
տղա, ումն ես դու: Աստված գիտե, աշխարհ գիտե իմն ես դու
(Թումանյան) և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Կետագրության այս ընդհանուր կա-
նոնները տալուց հետո պիտի ասել, վոր ստորակետի,

բութի, և մասամբ միջակետի ու նույնիսկ վերջակետի գործածութիւնը վորոշ հափով կախված է գրողի ըմբռնումից ու մոտեցումից: Շատերը չերբեմն բութի փոխարեն ստորակետ են դնում. վորոշ տեղեր միջակետի փոխարեն վերջակետ և ալլն:

Մեր ներկա գրական լեզվի մեջ մինիմումի չափի չէ հասել միջակետի գործածութիւնը և կարծեք նա աստիճանաբար դուրս է ընկնում տրոհութեան նշաններից և դառնում է լոկ սղագրական նշան:

ԲԱՅԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Բացահայտութեան նշաններն են՝ 1. չակերտ (« »), 2. փակագիծ (()), 3. տիրե կամ գիծ (—), 4. կախման կետ (...):

1. Չակերտի մեջ են առնվում ուղղակի նախադասութիւնները կամ ցիտատները, վորոնք կապակցված չեն՝ վոր կամ թէ շաղկապներով—որինակ՝ Մեր դիրեկտորն ասում է. «Կադրերի պատրաստումը մեր ամենաառաջի պարտականութիւնն է և մենք վոչինչ չենք խնայի դրս համար»:

2. Փակագծի մեջ առնվում են—

ա. միջանկյալ աչնպիսի նախադասութիւններ, վորոնք տվյալ նախադասութեան մեջ անշատ իմաստ ունեն—որինակ՝ անտեղի խոսքի հանդեպ լռելը ստորութիւնն է (յեթե սակայն համար չէ մարդը), բացի այն պարագայից, չերը խոսողը վորոշ հարգանքի արժանի չէ:

բ. Նախադասութիւններ, վորոնք անուղղակի ձևով, ի միջի ալլոց լրացումի դեր են կատարում—որինակ՝ Մեր մատեմատիկայի ուսուցիչը (Սարգսյան Վահանը) պարզեցվատրվեց վորպես հարվածալին:

գ. Բառերը, վորոնք բացատրութիւններ են տալիս փակագծից դուրս չեղած բառերի—որինակ՝ այրապլանները (սավառնակները) ուղմբեր նետեցին թշնամու դիրքերի վրա:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Փակագծերի փոխարեն չերբեմն գործածվում են գիծ ստորակետով կամ առանց ստորակետի (, —) (—): Տես գծի գործածութեան բ. կետ:

3. Դիծը դրվում է՝ ա. Դիալոգի մեջ, խոսողների փոխարեն—որինակ՝ խոսում են Սարգիսը և Գուրգեն՝ կոլխոզնիկներն, իրենց բրիգադիր՝ Վահանի մասին:

— Հրաշալի աշխատող է Վահանը:

— Լավ է, շատ լավ է:

— Դիշերներն ել գնում է անասուններին նայելու:

— Հրաշալի բնավորութիւն ունի և ալլն:

բ. Յերբեմն փակագծի փոխարեն—որինակ՝ Անտեղի խոսքի հանդեպ լռելը ստորութիւնն է—յեթե սակայն համար չէ մարդը—բացի այն պարագայից, չերը խոսողը վորոշ հարգանքի արժանի չէ:

գ. Յերբեմն բութի և ստորակետի փոփարեն՝ չերը յերկրորդական նախադասութիւնները բացատրական իմաստ կունենան և չերկար լինեն—որինակ՝ Գնում եմ Բագու—վոր արդյունաբերական խոշոր կետեր ունի և բանվորական հրաշալիքաղաք է:

դ. Յերկու բառերի միջև՝ չերը լրացնում են իրար և առնելում վորպես մի բառ. որինակ՝ Մոցիալ-քաղաքական, կուլտուր—կրթական, գրական—գեղարվեստական և ալլն:

յե. Յերբեմն նույնութեամբ կամ փոփոխութեամբ կրկնվող անխակական բարդ բառերի մեջ, հոդակապի տեղ—որինակ՝ խումբ—խումբ, փունջ—փունջ, վոլոր—մոլոր, կլոր—մլոր և ալլն:

զ. Յերկու բառերի միջև, ցույց տալու համար նրանց իրար հետ կատարած մի գործը, մի ակտը և ալլն. որինակ՝ Ռուս-ճապոնական պատերազմը: Ֆրանս-գերմանական դաշնադրութիւնն և ալլն:

ե. Յերկու բառերի և թվանշանների միջև՝ մի նշան է բառի փոխարեն. որինակ՝ Յերևանից—Բագու, Թիֆլիսից—Բաթում, Բագդից—Մոսկվա: 1907—1912 թ. 1913—1917 թ. և ալլն:

2. Ծննդյան և մահվան թվերի միջև—որինակ՝ փոխանակ ասելու Շիրվանզադեն ծնվել է 1898 թվին, և մեռավ 1935 թ. ուղղակի գրում են՝ 1898—1935 թ.

ը. Տողադարձի ժամանակ՝ ցույց տալու համար, վոր բառի մի մասը մյուս տողն է փոխադրվում կամ տարվում (յենթամեա):

4. Կախման կետը դրվում է՝

ա. Յերը նախադասութեան միտքը լրացված չէ. առկա է, պետք է դեռ մի բան ասել միտքը լրացնելու համար—որինակ՝ Յես քեզ ուզում եյի տեսնել և խնդրել...

բ. Բերված ցիտատից հետո, չերը վերջի մասը չի դրված, ընթերցողը կարող է բուն աղբյուրը կարգալ ու պակասը լրացնել—որինակ՝ Ե՛յ, հին ծանոթներ, Ե՛յ, կանաչ սարեր, ահա ձեզ տեսա ու միտս ընկան...

ԱՌՈՐԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Առդանութեան նշաններն են՝ շեշտ ('), հարցական նշան (°) և բացականչական նշան (~):

ա. Հաբցական նշանը դնում ենք ալն բառերի վրա, վորոնք հարցում են պարունակում իրենց մեջ—որինակ՝ Ո՞ւր ես գնում: Քանի հոգի լեկան: Քանի ուսանող են մասնակցել դասին:

բ. Շեշտը դրվում է մի քիչ ավելի բարձր արտասանվող, շեշտված բառերի վրա. շեշտվում են հրամայող, թելադրող, կանչող բառերը: Յեթե վորոշիչ ունենան՝ շեշտը դրվում է վորոշիչի վրա—որինակ՝

— Թող, կանչում են ինձ... մերս կիմանա...

— Ձե, Անճուշ, քիչ ել, մի քիչ ել մնա...

— Ձե, թող լես գնամ... Ա՛խ ի՛նչ խենթ եմ լես...

3. Բացականչական նշան (լերկար) դրվում է այն բառերի վրա, վորոնք սովորականից ավելի ձգվում են, յերկարացնելով արտասանվում—որինակ՝ Ա՛խ, Անճուշ, Անճուշ, եդ ի՛նչ ես ասում, բա դու չէս լսում և այլն (Թումանյան):

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ

Նախադասությունները վերլուծելու յերեք ձևով ե գործադրվում:

1. Վերլուծումը ըստ խոսքի մասերի, վորը կոչվում է ձևավառանական վերլուծում:

2. Վերլուծում ըստ բառերի կատարած ֆունկցիաների, վորը կոչվում է շարահյուսական վերլուծում:

3. Պառն տիպի վերլուծում, վորը ձևաբանական և շարահյուսական վերլուծումների միացությունն է:





1. ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ


Ձևավառանական վերլուծման ժամանակ ուղղակի կարգում են նախադասության բառերը և ասում են՝ թե տվյալ դեպքում կտրգացած բառը խոսքի մասերից վոր տեսակին ե պատկանում: Այսպիսի լուծումը սոսկ մեխանիկական վարժության արժեք ունի և գործադրվում ե սաորին խմբերում—որինակ՝ կատալի գայլը կերավ անմեղ վոչխարը: Հերթականորեն կարդում ենք այս նախադասության բառերը և ասում ենք՝ թե յորաքանչյուր բառը, վոր խոսքի մասին ե պատկանում—այսպես՝ կատալի (ածական անուն), գայլը (գոյական անուն), կերավ (բայ), անմեղ (ածական անուն), վոչխարին (գոյական անուն):

Այս տեսակ վերլուծության ավելի լայն ձևը՝ ցույց ե տալիս—թե տվյալ բառը վոր խոսքի մասին, վոր ստորոգածանման ե պատկանում, որինակ՝ լեթե վերցնենք նույն նախադասությունը—կատալի (վորական ածական), գայլը (իրային, շնչավոր, հասարակ անուն), կերավ (ներգործական բայ), անմեղ (վո-

րական ածական, վոչխարին) (իրային, շնչավոր, հասարակ անուն) և այլն:

ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱ





- | | | | |
|-----------|---|-----------|-----------------------------------|
| 7. Մակբայ | 1. Տեղի
2. Ժամանակի
3. Յեղանակի
4. Չափ ու քանակի | 9. Շաղկապ | 1. Համադասական
2. Ստորադասական |
|-----------|---|-----------|-----------------------------------|

- | | | | |
|----------|---|------------------------|------------------------------------|
| 8. Կապեր | 1. Նախադրութուն
2. Հետադրութուն
3. Կապակցական բառեր | 10. Չափնար-
կութուն | 1. Կոչական
2. Բացական-
չական |
|----------|---|------------------------|------------------------------------|

2. ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Նախադասությունների մեջ բառերի կամ լեզվորոգական նախադասությունների կատարած ֆունկցիաների վերոշումը կոչվում է շարահյուսական վերլուծում:

Բառերը նախադասություն են կազմում այն ժամանակ, լերբ դանադան ձևերով (հոլովներով, կապակցական բառերով, համաձայնությամբ ու շարադասությամբ) միանալով իրար հետ կատարում են համապատասխան ֆունկցիաներ: Վերլուծել նախադասություն նշանակում է վերոշել այդ ֆունկցիաների տեսակները:

Շարահյուսական վերլուծման ժամանակ վերոշում են՝ թե բառը կամ նախադասութունը ինչ ֆունկցիա է կատարում և վեր բառի կամ նախադասության հետ է կապակցված, վորպես նրա լրացում:

Նախադասության մեջ մտած բառերի կամ լեզվորոգական նախադասությունների հիմնական ֆունկցիաներն են՝

1. Յենթական և ստորոգյալ վոր մի միասնություն են կազմում:

2. Յենթական լրացումներ—1. Վերոշիչ, 2. Բացահայտիչ, 3. Հատկացուցիչ:

3. Ստորոգյալ լրացումներ—1. Խնդիր (ուղղակի և անուղղակի) և 2. Պարագա (տեղի, ժամանակի, յեղանակի, պատճառի, նպատակի և չափ ու քանակի) (Տես սխեման 101 եջ):

4. Լրացման լրացումներ կամ կոդմանակի լրացումներ—այսինքն՝ այնպիսի բառեր կամ նախադասություններ, վորոնք լրացնում են վերոհիշյալ լրացումներին և ներանց հետ միացած լրացումներ են դառնում յենթակային կամ ստորոգյալին:

Ինչպես ասված է նախադասությունները լինում են պարզ և բարդ:

1. Պարզ նախադասության մեջ ֆունկցիաները կատարում են բառեր—որինակ՝ Կարմիր դրոշակները փողփողում են ամեն տեղ: Այս նախադասության բառերը լեթե ըստ

իրենց կատարած ֆունկցիաների տանք գրաֆիկ ձևով կըստացվի հետևյալ պատկերը՝

Յենթակա

Ստորագյալ

Դրոշակներ

փողփողում են

Կարմիր (յենթ. լրացում).

ամեն տեղ (ստորագյալի լրացում).

Ինչպես տեսնում ենք, թե յենթական (դրոշակներ) և թե ստորագյալը (փողփողում են) ունեն մեկական լրացում և ուղիղ գծով, անմիջականորեն միացած են յենթականի ու ստորագյալի հետ։

ՍՐԱ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ ԼԻՆՈՒՄ Ե՝

ՅԵՆԹԱԿԱՆ ՅԵՎ ԻՐ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ			ՍՏՈՐՈԳՅԱԼԸ ՅԵՎ ԻՐ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ		
Հարց	Բառ	Ֆունկցիա	Հարց	Բառ	Ֆունկցիա
Ի՞նչ են ի՞նչպիսի	Դրոշակներ	Յենթակա Վորոշիչ	Ի՞նչ են լինում Ո՞ւր	փողփողում են ամեն տեղ	Ստորագյալ Տեղի պարագա

Բայց յերբ ասենք՝ Դասակարգային թշնամին կատարել կերպով դիմադրում է սոցիալիստական հարձակման. այս նախադասության գրաֆիկ ձևը լինում է հետևյալը. —

Յենթակա

Ստորագյալ

Թշնամին

դիմադրում է

Դասակարգային (յենթ. լրացում)

հարձակման

կատարողներն

սոցիալիստական


Այստեղ յենթական ունի մի լրացում՝ ուղիղ գծով անմիջականորեն միացած յենթականին, իսկ ստորագյալը ունի յերկու լրացում, վորոնք նորից ուղիղ գծով միացած են ստորագյալի հետ. կա նաև մի լրացում, վորը միացած է ստորագյալին զիգ-զագով, վոր լրացման լրացում է։

ՍՐԱ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ ԼԻՆՈՒՄ Ե ՀԵՏԵՎ-ՅԱԼ ԿԵՐՊ

ԳԼԽԱՎՈՐ ՄԱԿԱՊԱՍՈՒԹՅԱՆ ՅԵՆԹԱԿԱՆ ՅԵՎ ԻՐ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ			ԳԼԽԱՎՈՐ ՄԱԿԱՊԱՍՈՒԹՅԱՆ ՍՏՈՐՈԳՅԱԼԸ ՅԵՎ ԻՐ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ		
Հարց	Բառ	Ֆունկցիա	Հարց	Բառ	Ֆունկցիա
Ո՞վ	Թշնամին	Յենթակա	Ի՞նչ են լինում	դիմադրում է	Ստորագյալ
Ի՞նչ պիսի	Դասակարգային	Վորոշիչ	Ի՞նչպես	կատարել կերպով	Յեղանակի պարագա
			Ո՞ւր	սոցիալիստական հարձակման	Անուղղակի խնդիր
			Ի՞նչպիսի հարձակման	սոցիալիստական	Վորոշիչ՝ հարձակման

Բարդ նախադասության մեջ ֆունկցիաները կատարում են թե բառեր և թե նախադասություններ—որինակ՝ Վ որ պ ե ս զ ի գ ի շ ե ը ը մ ե ղ վ ը ա չ տ ա ը, մ ե ն ք մ ն ա ց ի ն ք գ յ ու ղ ու մ, վ ո ը ք ա ղ ա ք ի ց 50 կ ի լ ո մ ե տ ը ի վ ը ա յ ե գ տ ն վ ու մ։

Այս բարդ նախադասությունը կազմված է 3 նախադասություններից։ Գլխավոր նախադասությունն է—Մ ե ն ք մ ն ա ց ի ն ք գ յ ու ղ ու մ. յերկրորդական նախադասություններն են՝ վ ո ը պ ե ս զ ի գ ի շ ե ը ը մ ե ղ վ ը ա չ տ ա ը և վ ո ը ք ա ղ ա ք ի ց 50 կ ի լ ո մ ե տ ը ի վ ը ա յ ե գ տ ն վ ու մ։ Այս նախադասության գրաֆիկ ձևը լինում է հետևյալ կերպ՝



ԱՅՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ ԼԻՆՈՒՄ Ե
ՀԵՏԵՎՅԱԼ ՁԵՎՈՎ


ԳԼԽԱՎՈՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՅԵՆԹԱԿԱՆ ԵՐ ԼՐԱՑՈՒՄ-
ՆԵՐԸ

ԳԼԽԱՎՈՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՍՏՈՐՈԳՅԱԼԸ
ՅԵՎ ԵՐ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Հարց	Բառ	Ֆունկցիա	Հարց	Բառ	Ֆունկցիա
Ո՞վքեր Մենք	Յենթակա	Ի՞նչ արինք	մնացինք	Ստորագյալ	
		Վճրտեզ	գյուղում	Տեղի պարագա	
		Վճր	քաղաքից 50 կ. մ. վրա	Վորոշիչ (գյուղին)	
		գյուղում	վորպեսդի գի- շերը մեզ վրա	Անուղղակի խնդիր	
		Ի՞նչու մնացինք	չտա		

Վերցնենք մի ուրիշ որինակ՝ Կանաչ ու զովասուն գյուղը
գտնվում էր գետի չեզերքին, վոր հոչակված էր նրանով, վոր
նրա մեջ կան նշանավոր ձկներ: Այս բարդ նախադասության
մեջ գլխավոր նախադասությունն է՝ Կանաչ ու զովասուն գյուղը
գտնվում էր գետի չեզերքին: Յերկրորդական նախադասու-
թյունն էն, վոր հոչակված էր նրանով, և վոր նրա մեջ կան նշա-
նավոր ձկներ:

Այս բարդ նախադասությունը—յեթե տանք պրաֆիկ ձե-
վով ստացվում է հետևյալ պատկերը—



Այս նախադասության լուծումը հետևյալն է

ԳԼԽԱՎՈՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՅԵՆԹԱԿԱՆ ԵՐ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

ԳԼԽԱՎՈՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՍՏՈՐՈԳՅԱԼԸ
ԵՐ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Հարց	Բառ կամ նախա- դասություն.	Ֆունկ- ցիա	Հարց	Բառ կամ նախա- դասություն	Ֆունկցիա
Ի՞նչ	գյուղը	Յենթա- կա	Ի՞նչ էր լինում	գտնվում էր	Ստորագյալ
Ի՞նչ- պիսի գյուղ	Կանաչ ու զովասուն	Վորոշիչ ներ	Ո՞ւր	գետի չեզերքին	տեղի պա- րագա
		Ի՞նչպիսի գետի չե- զերքին		վոր հոչակված է նրանով	վորոշիչ՝ գետի
		Ի՞նչով հըռ չակված էր		վոր նրա մեջ կան նշանավոր ձկներ	անուղղակի խնդիր, վոր հոչակված էր նրանով նախադա- սության

Յեթե կարիք լինի, ավելի հասկանալի դարձնելու համար կարելի չե չերկրորդական նախադասութիւնները վերցնել առանձին և վերլուծել աշխարհ, ինչպես մի պարզ նախադասութիւն և վերլուծվում (տես 4-րդ առաջադրութիւն), որին ահա՜ Վ ո Ր Ա Ե ո Վ ի գ ի շ ե Ր Ը մ ե զ վ ր ա չ տ ա Ր նախադասութիւնը, յետ վերցնենք առանձին և վերլուծենք, կատանանք հետեւյալ պատկերը. գիշերը՝ (յենթակա), չտար (ստորոգյալ) մեզ վրա՝ (անուղղակի խնդիր), վորպեսզի (կապակցական բառ), առանձին՝ ֆունկցիա չունի այս նախադասութիւն մեջ, նա միայն կապի, շաղախի դեր և կատարում:

Յերկրորդական նախադասութիւնների վերլուծման հերթականութիւնը պահպանելու ժամանակ, առաջին՝ չերկրորդականը դառնում է վորպես գլխավոր նախադասութիւն, իսկ յերկրորդ, չերրորդ և չորրորդ չերկրորդականները դառնում են՝ նրա լրացումները կամ լրացման լրացումները: Մյուս նախադասութիւնների վերլուծման անցնելիս, չերկրորդ՝ չերրորդականը դառնում է վորպես գլխավոր նախադասութիւն, իսկ մյուսները՝ նրա լրացումները և լրացման լրացումները և աշխարհ մինչև վերջին նախադասութիւնը:

3. ԽԱՌՆ ՏԻՊԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ

Խառն տիպի վերլուծումը սա քերականական և շարահյուսական տիպի վերլուծումների միացութիւնն է. այսինքն լուծելիս պիտի ասել՝ թե տվյալ բառը խոսքի մասերից վճի խմբին և ի՞նչ ստորաբաժանման է պատկանում, ի՞նչ թիվ, դեմք, հոլով և այլն ունի, ի՞նչպիսի փոփոխութիւն և կրել այս նախադասութիւն մեջ և, ի վերջո, ի՞նչ ֆունկցիա է կատարում: Որին ահա՜ վերցնենք հետեւյալ պարզ նախադասութիւնը և վերլուծենք ըստ խառն տիպի վերլուծման:

Կատաղի գայլը կերավ անմեղ վոչխարին:

1. Կերավ՝ ներգործական բայ, թիվ՝ յեղակի, դեմք՝ չերրորդ, յեղանակ՝ սահմանական, ժամանակ՝ անցյալ կատարյալ, ֆունկցիա՝ ստորոգյալ:

2. Հարց (Ո՞վ կերավ) գայլը-գոյական, իրային, շնչավոր, հասարակ անուն, թիվ՝ յեղակի, հոլով՝ ուղղական, ֆունկցիա՝ յենթակա և կերավ բային,

3. (Ի՞նչպիսի գայլ) կատաղի՝ վորակական ածական, ֆունկցիա՝ վորոշիչ և գալին:

4. (Հարց) Կատաղի գայլը ի՞նչը կերավ-վոչխարը, գոյական, իրային, շնչավոր, հասարակ անուն, թիվ՝ յեղակի, հոլով՝ հայցական, ուղղակի խնդիր և կերավ ստորոգյալին:

5. (Հարց) Ի՞նչպիսի վոչխարը՝ անմեղ-ածական, վորակական, ֆունկցիա՝ վորոշիչ և վոչխարին և այլն:

Ֆունկցիաների վերլուծումը չպիտի շփոթել յերբեք խոսքի մասերի վերլուծման հետ: Խոսքի մասերը լեզուական իմաստունին և նույն տեսակի խոսքի մասը կարող է տարբեր տեսակի ֆունկցիաներ կատարել նախադասութիւն մեջ-որին ահա՜ գոյականը կարող է լինել՝ յենթակա, ստորոգյալը՝ լրացում, լրացման լրացում և այլն: Նույնը կարող են լինել և խոսքի մյուս մասերից շատերը:

Ըստ ելութիւնն էլ սխալ է նախադասութիւն վերլուծումը կապել միայն խոսքի մասերի վերլուծման հետ, վորովհետեւ նախադասութիւնը լոկ խոսքի մասերի մեխանիկական կուտակում չէ, նա այդ խոսքի մասերի կատարած ֆունկցիաների ամբողջութիւնն է: Ուրեմն վերլուծել նախադասութիւնը նշանակում է՝ ճանաչել բառերն ըստ նրանց ընդհանուր իմաստի (խոսքի մասեր) և ըստ նրանց կատարած ֆունկցիայի ավելի նախադասութիւն մեջ (նախադասութիւն անդամներ): Դրա ոգուտն այն է, վոր ամեն մեկը սովորում է լեզվական բոլոր չերեւութներն ուրեմն տակ դնել, ճանաչել և գործադրել, իսկ այդ նշանակում է՝ տիրապետել լեզվին: Հենց այդ է, վերջին հաշիւով, քերականութիւն ուսուցման բուն նպատակը:

ԸՆԹԵՐԳԱՆՈՒՅՈՒՆ

Դասագիրք «Հայոց գրականութիւն Բրեստոմա» միջ. դպրոցների համար, 10-րդ դասարան. Մկրչան և Վարդունի:

Հիռականներ 3-րդ կուրսին այդ դասագրքերի 8-րդ, 9-րդ, և 10-րդ. տարիները պարտադիր են ամբողջութիւն, վորովհետեւ տարեվերջի սեսիաներին քննութիւն են յենթարկվում այդ դասագրքերի ծավալով տեխնիկում ավարտելու համար:

ՀՐԱՀԱՆՑՆԵՐ ՅԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այստեղ նորից անհրաժեշտ է շեշտել, վոր հեռակայողները պետք է լավ, սահուն կարգաւ սովորեն, անծանոթ բառերը սովորեն, պատմեն և դասագրքերի ամեն մի հեղինակի համար

(տնային տնտրականներում գրեն ունեցողները և ներկայացնեն սեփականության ժամանակ:

2. Ռեգիստրները և առաջադրությունների մեջ դրված կոնսորի աշխատանքները չպետք է խառնել և չփոխել իրար հետ: Կոնսորիումներին պիտի պատասխանել առանձին տնտրականներով, իրենց նշված ժամկետներին և ուղարկել մեզ ունեցողից:

3. Չարենց՝ «Ամբոխները խելագարված»-ից շտկեցեք՝ 10 պատմողական և «Ամենապոլեմից» չերեք հարցական նախադասություններ:

4. Վշտունի՝ «Ձան արեվելք» վոտանավորից շտկել՝ 5 պարզ և 5 բարդ նախադասություններ և վերլուծել:

5. Բակունց՝ «Ալպիական մանուշակ» գրվածքի 252 եջի վրա գետեղված մասն ամբողջությամբ քերականական վերլուծման չենթարկել:

6. Ալազան՝ «Ճերմակ մեխակներ» վոտանավորն ամբողջությամբ վերլուծել քերականորեն:

7. Նաիրի Չարյան՝ «26 ենտուգիաստներ» վոտանավորի 348 եջի վրա գետեղված մասը վերլուծել շարահյուսական վերլուծումով, նույն ձևով վերլուծման չենթարկել Գ. Մահարիի «Հոկտեմբերիկ» վոտանավորն ամբողջությամբ:

8. Առանձին տնտրակում գրավոր կերպով շարահյուսական վերլուծման չենթարկել՝ Գ. Մահարի՝ 446 եջում գետեղված «Անդարձություն» վոտանավորը և ուղարկել մեզ ստուգելու:

9. Մանվելյան՝ «Ջրանցքի բացումը» համալսմանց շտկել 10 ստորագույն նախադասություններ և վերլուծել:

10. Կետադրության կանոնները լավ յուրացնելուց հետո առանձին մի տնտրակով գրել և ուղարկել մեզ ձեր դիտողությունները դասագրքերում նկատած կետադրության նշանների գործածության սխալների մասին:

ԿՈՆՏՐՈԼ ԱՇԽԱՏԱՆԷ

1. Նախադասությունները քանի տեսակ են լինում.
2. Վորժնեք են պատմողական, հարցական և ձայնարկական նախադասությունները, ինչ ստորաբաժանումներ ունեն.
3. Ի՞նչպես են կազմվում ժխտական նախադասությունները.
4. Ի՞նչպես են կազմվում հարցական նախադասությունները.
5. Ի՞նչ է բարդ նախադասություն և կազմության ինչ ձևեր ունին.

6. Յերկրորդական նախադասությունները քանի տեսակ են լինում.

7. Յերկրորդական նախադասությունները ի՞նչպիսի լրացումներ կարող են լինել.

8. Վորժնեք են ուղղակի և անուղղակի նախադասությունները.

9. Միջանկյալ նախադասություններ ասելով ի՞նչ ենք հասկանում.

10. Կապակցության ի՞նչպիսի ձևեր ունեն ստորագույն նախադասությունները.

11. Ստորագույն նախադասությունների շարադասական կապակցություն ասելով ի՞նչ ենք հասկանում.

12. Բարդ նախադասությունները ի՞նչպես են վերածվում կամ պարզեցվում.

13. Կապակցական բառերը գործածության ի՞նչ ձևեր ունեն.

14. Համադաս նախադասություն ասելով ի՞նչ ենք հասկանում և այդ նախադասությունների կապակցության ի՞նչ ձևեր կան.

15. Վորժնեք են համադասական շարահյուսներ.

16. Վորժնեք ցուցականները գործածվում են վորպես կապակցական բառեր.

17. Բարդ նախադասության խառն կապակցություն ասելով ի՞նչ ենք հասկանում:

Ժամկետ ստացման որից մեկ ամիս

ԱՅՆ ԲԱԼԸ ԼՈՍՅՈՒՄԵՆԸ ՆՖՈՅՆՊԵՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ	ՎԴԱՅԱՍՏԱՆ
Ի ՆՑԿՍՍ	

ᠮᠤᠩᠭᠡᠨᠢᠯᠦᠰᠡ

«Մեր պլիխիկան և զխոսակցութիւնը մատերկալէ բարձրացրիս պարտեւան է, մատերկալէ հասակաւն այն բարդ կտորիքի ֆունկցիանն է, զոր կոչւում է մարդու ուղեղ» Լ. Ն. Դ. Ն.

ԻՐ ՔՈՒՆՈՒՄ

16997

ՄԱՐԿԱՆԱԳԱՅԻՆ ԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մ. Աբեղյան—Աշխարհաբարի շարճադասութիւն.
1912 թ. Եջմիածին.
2. Ա. Ղարիբջան—Հայոց լեզվի քերականութիւն.
1934 թ. Յերևան.
3. Հ. և Զ. Ստատուր—Գործնական քերականութիւն արդի
աշխարհաբարի գ. գիրք. Ա. մաս. 1911 թ. Կ. Պոլիս.
4. Չամչյան—Քերականութիւն Հայկազյան լեզվի. Վենետիկ.
5. I. Dussouchet—Gramaire Francaise. 1909, Paris.
6. С. Е. Крючков и М. В. Светлаев—Грамматика, учебник для школ взрос
лых 1934 г. Москва.
7. Լենին—Մատերիալիզմ և հմպիրիտիկեցիզմ.
1933 թ. Յերևան, Կուսհրատ.
8. Ստալին—Լենինիզմի հարցեր-1935 թ. Յերևան, Կուսհրատ.
9. Малая советская Энциклопедия 1930 г. Москва.

Շրջադրժկումի տպարան Վաղղատում
Գլավլիտ 2050, Պատվեր 16.
Տիրամ 2000.

ጥቅም 3 ቀ

300

ՀՀ Ազգային գրադարան



NL1605044

II

61353